Из анатомического театра

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Պրոֆ. ՍՏ. ԼԻՍԻՑՅԱՆ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՐՑԱՐԱՆ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1946

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՆԳԱՐԱՆ

Պրոֆ. ՍՏ. ԼԻՍԻՑՅԱՆ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՐՑԱՐԱՆ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1946

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
Նախագահության կարգադրությամբ:
Պրեզիդենտ ակադ. ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻ

ԱՌԱՋԱԲԱՆ

Ազգագրական նյութերը կարևոր պատմական աղբյուրներ են հասարակական զարգացման ոչ միայն նախնական, այլ և ավելի ուշ ժամանակների փուլերը հասկանալու համար։ Չկա ժողովրդի անցյալ կյանքի ձևավորման ոչ մի շրջան, որ իր կենդանի հետքերը թողած չլինի նրա նիստուկացի մեջ, և այդ հետքերն այնքան ավելի ընդարձակ և խոր են լինում, որքան ավելի երկար այդ ժողովուրդը ապրել է անտեսական և կուլտուրական մեկուսացման մեջ։ Սովորույթի ուժը թափանցում է և՛ աշխատանքային պրոցեսների, և՛ ընտանեկան ու հասարակական փոխհարաբերությունների, և՛ իրավական հասկացողությունների, և՛ աշխարհընկալման դանադան կողմերի մեջ, ինչպես և լեզվի, բանահյուսության, գեղարվեստի բոլոր ճյուղերի մեջ, ինչպես և նյութական մշակույթի ամենատարբեր բնագավառները։ Կենցաղային երևույթները, ժանավանդ այնպիսիները, որոնք առաջացել են աշխարհագրական գործոնների անմիջական ազդեցության ներքո, ցուցաբերում են ապշեցուցիչ կայունություն և հաճախ համառ դիմադրություն են ցույց տալիս նոր ձևերի կազմակերպմանը։ Այսպիսի դեպքերում նրանց ուսումնասիրությունն ունի շատ ավելի լայն, քան թե լոկ գիտական նշանակություն. առանց այդ ուսումնասիրության դժվար է հաջողությամբ պայքար մղել անտեսական և կուլտուրական առաջադիմության կաշկանդող սովորույթների և մտայնության դեմ։

Ազգագրական ուսումնասիրությունը Սովետ[illegible] Միության մեջ չի սահմանափակվում միմիայն անցյալ կենցաղի մնացորդները գրանցելով, քննարկելով և իմաստավորելով, ինչպես նա այդ անում է կապիտալիստական երկրներում։ Կենցաղը, ինչպես և հասարակական կյանքի ամեն մի երևույթ, գտնվում է հարափոփոխ զարգացման ընթացքի մեջ և շարունակում է ձևափոխվել նաև մեր աչքի առջև։ Սովետական աղգագրագետը

պիտի կարողանա նշմարել այդ ձևափոխության առանձնահատկությունները, որոնք մանավանդ նշանակալից են մեր սոցիալիստորեն արագ վերակառուցվող հասարակակարգի, մասնավորապես կոլխոզի ծավալման պայմաններում։ Սովետական Հայաստանում ապրող ժողովուրդները Միության ուրիշ ազգությունների հետ ներդրավված են աշխատանքի տեխնիկական և սոցիալական եղանակների արմատական հեղաշրջման պրոցեսի մեջ և, հրաժարվելով պապերից ժառանգած և դարերով մշակված կենսաձևերից, նոր քաղաքական, հասարակական, տնտեսական և նույնիսկ փոփոխված նոր աշխարհագրական միջավայրում որոնում են ընտանեկան, համայնական և ազգային փոխհարաբերությունների համար նոր նորմաներ և արտաքին կյանքի համար ավելի համապատասխան հարմարեցումներ։ Այդ պրոցեսը տարբեր վայրերում և տարբեր հասարակությունների մեջ կատարվում է յուրահատուկ ձևերով, և այդ ձևերի նկարագրությունն ու արժեքավորումը վերին աստիճանի ակտուալ խնդիր է։ Այս ուղղությամբ ստուգված նյութերի հավաքումը կարող է անգնահատելի օժանդակություն ժամուցել սոցիալիստական կենցաղի գիտակցական կերտման մեծ գործին։

Այսպիսով սովետական ազգագրությունն ընդարձակելով իր հետազոտության սահմանները, դուրս է գալիս գիտնականի առանձնասենյակի պատերից և օրգանապես զուգվում է պատմության մեջ աննախընթաց մեր ծավալուն շինարարության պրակտիկայի հետ։ Դարավոր սովորույթների դիմադրական տեղահավության և նոր կենցաղային ձևերի հաստատման մեր ապրած ժամանակը պահանջում է լարված ուշադրություն, սրատեսություն և անհետաձգելի է դարձնում թե հնի մնացորդ և թե ներկայի նորակերտ երևույթների շուտափույթ ֆիքսացիան։ Եվ ինչքան երկրորդ կարգի երևույթների հաղթանակը ապահովված է, այնքան անխուսափելիորեն արագ անհետացման են դատապարտված առաջին կարգի երևույթները։ Հին նիստուկացը իր անտեսակ տարակական և հոգեբանական հիմունքներով Հայաստանը բոլոր գավառներում արդեն քիչ է պահպանվել դասնազան ազգությունների իրական կյանքի մեջ. նրա մնացորդը մասը տակավին ապրում է միայն ծերունիների և պառավների հիշողության մեջ, այն էլ աղճատված, իր բնորոշ ժանրամասնությունները կորցրած։ Այս իրողությունն առանձնապես ընդգծելու է այն հայկական գավառների համար, որոնց ազգաբնակու-

թյունը վերջին հարյուրամյակի ընթացքում և մանավանդ հասարակական-տնտեսական պատերազմից հետո թողել է նախնիների հայրենի բնակավայրը, որտեղ մշակվել է հին կենցաղը, և ապաստանել է Սովետական Հայաստանի սահմաններում։ Անհրաժեշտ է շտապել և կազմակերպված սիստեմատիկ աշխատանք ծավալել թե հին և թե նոր կենցաղին վերաբերող ազգագրական նյութերը և՛ գիտության և՛ գործնական շինարարության համար պահպանելու գծով։ Ներկա «Հարցարանը» նպատակ է դրել օժանդակել այդպիսի աշխատանքին՝ հավախմբելով նրա շուրջը ոչ միայն մասնագետ ազգագրագիտներին, այլև առհասարակ մեր հասարակության գիտակից տարրերը։ Նախկին նման հրատարակության («Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորույթների», հավաքեց և կազմեց Գր. Խալաթյանց) փորձը ցույց տվավ, թե որչափ նման մի հարցարան կարող է դյուրացնել ժողովրդական սովորույթների նկարագրությանը և ուսումնասիրությանը նվիրվողների գործը։ Գր. Խալաթյանցի աշխատության լույս տեսնելուց հետո (1887 թ., Մոսկվա) նրա գրքի անվիճելի ազդեցության ներքո ոչ միայն աճում էր հետաքրքրությունը դեպի ազգագրական պարապմունքները, այլ և պարզ զգացվում էր ձգտում այդ պարապմունքները ավելի բազմակողմանի, գիտականորեն ավելի ստուգված և վստահելի դարձնելու, որոշ սիստեմի ենթարկելու։

Այս հարցարանը կազմելիս աչքի առաջ եմ ունեցել ոչ միայն Գր. Խալաթյանցի «Ծրագիրը», այլ և նրանից հետո հրատարակված թե հայերեն և թե ռուսերեն բազմաթիվ հարցարանները, մանավանդ կովկասյան նյութերի հավաքման համար մշակվածները, սկսած Կովկասյան Ուսումնարանական Շրջանի լույս ընծայած „Программа по собиранию материалов по изучению Кавказа“ (1900 г., Тифлис) մինչև ամենավերջինը՝ Программа для собирания этнографических сведений, составлена применительно к быту кавказских народов, հանգուցյալ Г. Ф. Чурсин-ի (1929 г., Баку)։ Միաժամանակ օգտվել եմ գավառագիտական գծով ուսումնական դրականության մեջ վերջերս լույս տեսած ծրագրերից և հատկապես կոլխոզների ուսումնասիրության համար կազմվածներից։ Ձեռքի տակ եմ ունեցել Ե. Լալայանի նկատողությունները «Ծրագրի» մի օրինակի վրա արված։ Օգտագործել եմ նաև Кавказский Историко-Археологический институт-ի, ՀՍՍՌ Պետական Պատմական թանգարանի

գծով և անհատական նախաձեռնությամբ իմ կատարած էքսպեդիցիաների փորձը։ Նախկին հարցարանների հետ համեմատած ներկա աշխատությունը պարունակում է այժմեական պայմանները նկատի առնող բաժիններ (օրինակ՝ դասակարգային շերտավորման վերաբերյալ) և բաղմաթիվ նոր հարցեր։

Հարցեր մշակելիս աշխատել եմ շոշափել այնպիսի կողմեր, որոնք վերաբերում են ոչ միայն Սովետական Հայաստանի բնակչության մեծամասնությունը կազմող հայերին, այլ և ազգային փոքրամասնություններին — ադրբեջանցիներին, քրդերին, ռուսներին, ասորիներին, բոշաներին. դա անհրաժեշտ է, որպես տրամաբանական հետևողություն մեր վարած ազգային քաղաքականության՝ խմբավորումների տնտեսական և կուլտուրական փոխադրության բաղմակողմանի պարզաբանելու համար։

Կոլխոզին չեմ հատկացրել առանձին գլուխ, բայց ուշադիր ընթերցողն անմիջապես կնկատի, որ կոլխոզային կենցաղի ուսումնասիրության վերաբերյալ բոլոր հարցերը տեղ են գտել համապատասխան բաժիններում, նյութի հավաքումը տեխնիկապես յուրացնելու համար։ Հատկապես կոլխոզային կենցաղով զբաղվողին միտում է միայն համադրել այդ հարցերով ձեռք բերած նյութերը, որով և կստացվի նոր կենցաղի մի ամբողջական պատկեր։ Կոլխոզային կենցաղի լուսաբանությունն ավելի խորանում է, երբ շաղկապված է լինում ընդհանուր սովետական շինարարության որոշ բնագավառների հետ։

Մի քանիսի կողմից զերազանցորեն ազգագրական բնույթ կրող նյութ հավաքված ժողովրդական հավատալիքներից և ծեսերից այն մասը, որը վերաբերում է տնտեսական կյանքին, նյութական մշակույթին, սոցիալական հարաբերությունների և սովորութական իրավունքին, նպատակահարմար եմ գտել կապակցել համապատասխան բաժինների հետ և զետեղել նրանց մեջ, որովհետև ազգագրական երևույթների մեջ իրականը, ռեալը այնպես է հյուսվում սնահավատություններին և նախապաշարմունքների հետ, որ բոնազբոսիկ բան կլիներ երևույթների այդ երկու շարքերը իրարից անջատել, օրինակ՝ ժողովրդական բժշկության մեջ ռեալ էֆեկտիվ ճարերը, դաշտամշակության մեջ ռեալ էֆեկտիվ հնարները անջատել սնահավատականներից։ Մյուս կողմից՝ փորձը համոզել է ինձ, որ նման հավատալիքների և ծեսերի հավաքման գործը ավելի դյուրանում է այս աշխատության մեջ ընդունված կապակցությամբ, օրինակ՝ կաթնատնտե-

սության վերաբերյալ նյութերը գրանցելիս հարցուփորձ անելով ոչ միայն իրականն, այլև նշանակություն ունեցող, այլև անահավատություններից բխող միջոցառումների մասին, ծննդաբերության մանրամասնությունները գրանցելիս միաժամանակ տեղեկություններ հավաքելով տատների գործադրած թե իրական և թե նախապաշարմունքների թելադրած հնարների մասին։

Հարցարանին ավելի գործնական բնույթ տալու նպատակով անհրաժեշտ եմ համարել դեռևս հատուկ ցուցումներ նյութերը հավաքելու և գրանցելու համար նպատակահարմար պայմաններ ստեղծելու մասին։ Այդպիսի ցուցումներ տրված են թե առհասարակ ազգագրական և թե մասնավորապես լեզվի և բանահյուսության հարցերի առնչությամբ։

Հին կենցաղային երևույթների այս կամ այն կողմը շոշափող հարցերը տրված են գրեթե միշտ բայերի ներկա ժամանակով, օրինակ՝ «Սովորություն կա (փոխարեն՝ կար) ուրիշի երեխային գողանալ», կամ «Ի՞նչպես պետք է (փոխ.՝ էր) ձեռք բերել շենքերում ապրող ոգիների բարի վերաբերմունքը»։ Հարցը ներկա ժամանակով ձևակերպել ինձ թելադրել է այն հանգամանքը, որ թեև այս կամ այն հավատալիքը, ծեսը, սովորույթը և այլն ընդհանրապես արդեն մեր նոր պայմանների մեջ կարծես թե գործածությունից վերացել են, սակայն դեռ անկարելի է պնդել, թե նա վերջնականապես մահացած, անհետացած երևույթ է բոլոր վայրերում, նույնիսկ ետ ընկած անկյուններում և բոլոր ազգությունների մեջ դեռ ապրում են որոշ սերնդի մի հատվածի ոչ միայն հիշողության, այլ նաև հոգեբանության մեջ։ Պատասխանը տվողը այդպիսով հարկադրված է միշտ նշել, թե այդ հավատալիքը, ծեսը, սովորույթը և այլն որչափ է պահպանվել մինչև այսօր։

Սովետական Հայաստանում ազգագրական նյութեր հավաքողի աշխատանքը բարդանում է նրանով, որ մեզ մոտ չկա ոչ մի շրջան, որի բնակչության մեջ մեծ, եթե չասենք մեծագույն տեղը չբռնեին ուրիշ վայրերից վերաբնակվածները։ Բնականորեն այդ տարբեր աշխարհագրական ծագում ունեցող կենցաղային երևույթները չպետք է իրար հետ խառնել, ուստի և այդ նպատակով նախ և առաջ պետք է ուշի-ուշով կազմել ուսումնասիրած շրջանի ազգագրական քարտեզը՝ աչքի առաջ ունենալով բնակիչների նախնական հայրենի գավառը։ Սխալ կլիներ, օրինակ՝ Ապարանն ուսումնասիրելիս չզանազանել այդտեղ վե-

բարենակված ալաչկերտցիներին և բասենցիներին կամ Լոռին ուսումնասիրելիս խառնել Շահնազար և հարևան հայ կաթոլիկ գյուղերի բնակիչներին, նախկին բասենցիներին, կարնեցիներին բուն տեղական բնակիչների հետ։ Քանի որ առաջին հերթին շտապողական է ձեռնամուխ լինել Տաճկահայաստանից նոր գաղթած հայերի (վանեցիների, շատախցիների, մոկացիների, սասունցիների, խիղանցիների, մշեցիների, արաբկիրցիների...) նախկին նիստուկացի հետ շաղկապված ազգագրական առանձնահատկությունների պրանցմանը, պետք է շտապ կազմել այդ, վերաբնակվածների նոր բնակավայրերի քարտեզը և անցնելով միևնույն գավառից հեռացած մի խմբից մյուսին՝ հարցուփորձով վերականգնել դեռ ծերունիների և հասակավորների հիշողության մեջ պահպանված կենցաղային տվյալները, ի դեպ նաև նշել, թե ինչպես են այդ խմբերի մեջ նախկին հայրենիքից բերած սովորույթները հարմարվում նոր պայմաններին։ Այսպիսի ուսումնասիրությունների համար, մանավանդ վերաբնակվածների գավառաբարբառի և բանահյուսության առանձնահատկությունները նկարագրելու համար, ամենամեծ օժանդակությունը կարող են ցույց տալ հենց նույն գավառներից ծագող ուսուցիչները։

Առհասարակ, ինչպես այլ երկրներում, Հայաստանում էլ ուսուցիչներն են, որ կոչված են ամենամեծ դերը կատարելու ազգագրական նյութեր հավաքելու գործում։ Երկար ժամանակ ապրելով մի գյուղում՝ նրանք մեծ հարմարություններ են ձեռք բերում ամեն կողմից դիտելու տեղական կենցաղը։ Այս ասպարիզում նրանց մեծ չափով կարող են օգնել հենց իրենք աշակերտները։ Մյուս կողմից՝ տեղական ազգագրական երևույթների ծանոթությունը պահանջվում է մեզանում տարբեր ասպարեզներում աշխատող մասնագետներից, գյուղատնտեսներից, տնտեսագետներից, բժիշկներից, ճարտարապետներից, լեզվագետներից, իրավաբաններից, երաժշտագետներից... Այսպիսի կոլեկտիվ գործակցությամբ կապահովվի և՛ նյութերի բազմակողմանիությունը, և՛ հարցերի ժանրամասնավորումը (դետալիզացիան), կխորացվի վաղուց հավաքված և նոր ձևավորվող սովորույթների գիտական-հասարակական արժեքավորումը։

ՍՏ. ԼԻՍԻՑՅԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Ազգագրական նյութեր հավաքողը պիտի նախօրոք լավ ծանոթացած լինի տվյալ վայրի աշխարհագրության, պատմության, տնտեսության և կուլտուրական կյանքին վերաբերող ուսումնասիրություններին, ինչպես և ներկայումս ծավալվող սոցիալական շինարարության նվաճումներին։

2. Հին կենցաղային նյութերը դերազատելի է հավաքել ծերունիներից և պառավ կանանցից, քանի որ հին կենցաղային սովորությունները արդեն գրեթե մահացել են և մոռացության մատնվել, ծերունիների հիշողությունն էլ հաճախ թուլացած է լինում. այս կարգի նյութերը հավաքելիս և գրանցելիս մեծ զգուշություն է հարկավոր։

3. Նպատակահարմար է մի ծերունու տված տեղեկությունները ստուգման ենթարկել մի քանի ուրիշ ծերունիների տվյալներով։ Ստուգումը դյուրանում է, եթե հաջողվում է ծերուններին և պառավներին միատեղ հավաքել և կազմակերպել հավաքական զրույց-հարցուփորձ։ Մեկի մոռացածը մյուսն է վերհիշում, մեկի սխալը մյուսը ուղղում։

4. Չպետք է աչքից բաց թողնել այն հանգամանքը, որ ռևոլուցիայից առաջ էլ գյուղացիք մի առանձին հոժարությամբ չէին ծանոթացնում նորեկ մեկին իրենց կենցաղի մանրամասնություններին։ Այժմ ծերուններն ու պառավները՝ վախենալով ծպրանքից՝ էլ ավելի խուլ են տալիս հին մոռացության և կենցաղի մասին, մանավանդ հին հավատալիքների մասին տեղեկություններ տալուց. երբեմն նույնիսկ վախենում են այս կամ այն մանրամասնությունը պատմելուց։ Նյութեր հավաքողը ամեն կերպ պիտի ձգտի ցրելու այդ կասկածամտությունը և վստահություն ներշնչելու դեպի իր անձնավորությունը. պիտի ոչ միայն խուսափի ծպրանքի որևէ նշույլ ցուցաբերելուց, այլ ընդհակառակը՝ ար-

ծարծի աշխատանքի լուրջ գիտական բնույթ ունենալու գիտակցությունը։

5. Այդ գիտակցությունը դյուրին է ներշնչել նաև դրույքին մասնակից եղող այն երիտասարդներին, որոնց համար հին կենցաղը իր տարօրինակ և կաշկանդիչ բնույթով վաղուց ներժված երևույթ է։ Նրանցից չատերը, մանավանդ կոմերիտականները, արագ լծվում են հավաքողի աշխատանքներին։

6. Այդ աշակցությունը պետք է օգտագործել մանավանդ նոր կենցաղային երևույթները նկարագրելիս, դյուղի սոցիալիստորեն վերակառուցվելու պրոցեսի բնորոշ գծերը բազմակողմանի ըմբռնելու համար։

7. Կան խնդիրներ, որոնց մասին տղամարդիկ կանանց ներկայությամբ և մանավանդ կանայք տղամարդկանց ներկայությամբ քաշվում են հրապարակորեն խոսելուց (օրինակ՝ ծննդաբերության մասին)։ Այդ խնդիրների մասին պետք է խոսեցնել ամեն մի սեռի ներկայացուցչին առանձին։ Կանանց սեռական կյանքի վերաբերյալ տեղեկությունները ավելի դյուրին է հավաքել կին հետազոտողի միջոցով։

8. Դաշտային աշխատանքների ժամանակ (էքսպեդիցիաների, ուղևորական շրջագայության միջոցին) գրանցման համար հանձնարարվում է օգտվել գրպանում հեշտ տեղավորվող տետրակից կամ հավասար մեծությամբ կտրտված թերթիկներից (քարտերից) և գրել սովորական մատիտով, եթե անհնարին է գրել թանաքով, իսկ տվյալ վայրում չշտապես ապրող նյութահավաքը իր գրանցումները կարող է կատարել տավար տետրի մեջ։

9. Ձուտ նյութի գրանցմանն անցնելուց առաջ պետք է ամեն անգամ նշել հետևյալ տեղեկությունները.

ա) Գրանցման վայրը, քաղաքը, դյուղը, գոմերը, յայլան...

բ) Գրանցման ժամանակը—տարին, ամիսը, օրը։

գ) Գրանցողը անձամբ իր տեսածն է նկարագրում, թե ուրիշի պատմածը։ Այդ ուրիշը պատմել է իր տեսածը, թե ուրիշից խլացածը։

դ) Ո՞ւմից են հավաքվում տեղեկությունները—ազգանունը, անունը, հոր անունը։

ե) Նրա կենսագրությունից համառոտ տվյալներ —որտեղացի է, տարիքը, պարապմունքը, պաշտոնը, հասարակության ո՞ր խավին պատկանելը, ֆիզիկական առանձնահատկությունները (կույր, կաղ, կռնատ...) որչափ գրագետ է, ունի՞ արդ է սովորել

պրիլ-կարդալը, գնացի՞լ է ուրիշ տեղ, հրտեղ և հրչափ երկար է ապրել, ինչո՞վ է այնտեղ պարապել, տեղացի՞ է թե ոչ, եթե եկվոր է՝ քանի՞ ժամանակ է տվյալ վայրում ապրում։

դ) Եթե հարցուփորձի են ենթարկվում միաժամանակ մի քանի անձնավորություններ, այդ տեղեկությունները տալ յուրաքանչյուրի մասին և նյութը գրանցելիս նշել, թե ում տված տեղեկությունը տարբերվում է մյուսների տվածից։

10. Հարցը տալուց հետո չընդհատել պատասխանի տվողի խոսքը։ Երբեմն մի այն, նրա համար անկատելի զգուշավորությամբ, զսպել քեզ նյութից շեղվելու գայթակղությունը։

11. Պետք է գրանցել միայն այն կենցաղային երևույթները, որ պատահում են տվյալ վայրում, թեկուզ հարցարանում զետեղված լինեն հաճախ հարցեր նաև այնպիսի երևույթների մասին, որոնք տեղում բացակայում են։

12. Եթե տեղում չպատահող երևույթը գոյություն ունի, ըստ պատասխանողի վկայության, մի այլ՝ նույնիսկ ոչ հարևան վայրում, պետք է գրանցել և այդ տեղեկությունը համապատասխան ծանոթություններով։

13. Նյութը գրանցելուց հետո պետք է աչքի անցնել կամ իսկույն տեղում նոր հարցուփորձով լրացնելու համար կամ ցրվելուց հետո ստուգելու համար, թե ինչ երևույթներ մոռի են մնացել և չի կարելի արդյոք նույն վայրում լուսաբանել և լրացնել այլ ճանապարհով, ուրիշների միջոցով։

14. Գրանցումներին պետք է կցել լուսանկարներ, գծումներ, չափագրություններ և այլն, և եթե հնարավոր է՝ ձեռք բերել համապատասխան իրեր։ Լուսանկարումների հաջող լինելը պիտի աշխատել ստուգել տեղում, որպեսզի անհաջողները կրկին լուսահանվեն։

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

1. Ուսումնասիրվող բնակչության գավառի (շրջանի, գյուղի) ռելյեֆը։ Ռելյեֆը ինչ հարմարություններ է ներկայացնում գավառի հաղորդակցության համար հարևան գավառների հետ և գավառի առանձին մասերի հաղորդակցության համար իրար հետ։

2. Գավառի մակերեսի որ մասն են բռնում վարելահողը, արոտատեղը, անտառը. որքան տարածություն, տնտեսական ներկա տեխնիկան նկատի ունենալով՝ մշակության համար անպետք է (բացարձակ թվերով և տոկոսներով)։

3. Գավառում ինչ հանքային հարստություններ կան. ովքե՞ր են մինչև այսօր օգտագործել։

4. Ի՞նչպես են տեղացիք և դրացիք կոչում տվյալ գավառը (շրջանը, գյուղը)։

Ցանկալի է գրի առնել գավառի լեռների, հովիտների, ձորերի, գետերի, բնակավայրերի և ընդհանրապես աշխարհագրական բոլոր անունները, ամենայն մանրամասնությամբ. օրինակ՝ գյուղի արտերի, արոտատեղերի, անտառամասերի, ինչպես և այդ անուններին տեղացիների կողմից տրվող բացատրությունը և այդ վայրերի հետ կապված ավանդությունները։ Հաճախ այդ անունների (տոպոնիմիկայի) մեջ պահպանվում են նախկին և վաղուց անհետացած բնակիչների բառերը և այդպիսով հնարավոր է լինում լուսաբանել տեղական ազգաբնակության ծագումը։

2. ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ

1. Տեղական բնակչության թիվը։ Ի՞նչպես է այդ թիվը բաշխված զանազան ազգությունների միջև (բացարձակ թվերով

և տոկոսներով)։ Ծնունդն ու մահացությունն ամեն ազգության մեջ կանանց թիվը ամեն հազար տղամարդու համեմատությամբ։ Ազգությունները ապրում են իրարից անջատ բնակավայրերով, թե միևնույն բնակավայրերում իրար հետ խառը։

2. Բնակչության խտությունը, հաշվի առնելով միայն մշակության համար պիտանի հողերը։

3. Բնակիչները հնուց են ապրում այդ գավառում, թե ուրիշ տեղերից են վերաբնակված։ Ո՞րտեղից և երբ են վերաբնակվել։ Ի՞նչ են պատմում բնակիչներն իրենց ծագման մասին։

4. Ի՞նչպես են կոչում բնակիչները թե իրանց և թե հարևաններին, ինչպես են հարևանները նրանց կոչում։ Ի՞նչ ծաղրալի անուններ են տալիս իրար։ Ի՞նչպիսի պատմություններ, հաճախ զվարճալի, պատմում է մի գյուղ մյուս գյուղի մասին, ինչպես է մի ազգություն մյուսին բնորոշում։

5. Ի՞նչ վերաբերմունք է ունեցել տեղական բնակչությունը դեպի այլակրոնները, օտարականները։ Մանրամասն պատմել աչքի ընկնող մի քանի դեպքեր՝ նախքան սովետական իշխանության հաստատվելը տարբեր ազգություններին, տարբեր կրոնների բնակիչների բարեկամական կամ թշնամական հարաբերությունները պատկերող։

3. ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ

1. Բնակչության ֆիզիկական առանձնահատկությունները— հասակը, մարմնի մաշկի գույնը, մազոտությունը, գլխի ձևը (կարճ, լայն, միջին) դեմքի ձևը (կլոր, քառակուսի, ձվաձև...), գլխի, մորուքի, հոնքերի, մազերի գույնը, խտությունը, ձևը (քերանման, գանգուր, ոլորուն...), աչքերի գույնը, քթի, շրթունքների, այտերի ձևը և այլն։ Ցանկալի է լուսանկարել տիպիկ ներկայացուցիչներին ամբողջ հասակով, գլուխը դիմացից (en face) և կողքից (պրոֆիլ)։

2. Արդյոք հաճախ են պատահում մարմնի անդամների անհամաչափության դեպքեր (երկար կամ կարճ վիզ, ոտքեր, ձեռքեր, իրան)։ Ի՞նչպես են կոչվում այդ անհամաչափության զանազան տեսակները։

3. Մարմնի ի՞նչպիսի այլանևումներ են պատահում, օրինակ՝ (ոտքի, գանգի, կռնակի...) դեֆորմացիաներ. ինչպես են այդ այլանևումները կոչվում։ Բնական են թե արհեստական. եթե ար-

հետաքրքրական են, երբ (ծնվելուց անմիջապես հետո, թե ավելի ուշ) և ում ձեռքով են կատարվում այդ խանգարումները (ականջի բլթակ, քիթ, շրթունք ծակելը, մարմինը դաջելը...)։

4. Ո՞րչափ հաճախ են պատահում չափազանց գեր կամ նիհար անհատներ։

5. Բնակչությունը արդյո՞ք աչքի է ընկնում իր ֆիզիկական ուժով և ինչո՞վ է այդ ապացուցվում։ Ո՞ր մկաններն են ավելի զարգացած՝ ձեռքերի, ոտքերի, մեջքի, վզի. ինչ կապ ունի այդ զարգացումը պարապմունքի հետ։

6. Ի՞նչ գույներ է զանազանում բնակչությունը։—Գրել գույների անուննները—կարմիր, կապույտ, լուղակագույն, կանաչ...։ Ո՞ր գույնն է ավելի տարածված գգեստների, կահավորման, սենյակների զարդարման... մեջ։

7. Ձայնը, խոսելու ձևն ու եղանակը (բարձր, ցածր, խրոխտ, ճչալով... արագ, դանդաղ...)։

8. Բայլվածքի եղանակը, նստելու ձևը զանազան դեպքերում։

9. Ի՞նչ անուններ և կոչումներ են տալիս զանազան մարդկանց՝ նայելով նրանց ֆիզիկական կազմվածքին, ձայնին, խոսելու, քայլելու եղանակին և այլն։

II. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՑԱՂ

1. Ի՞նչպիսի կյանք էր վարում բնակչությունը—նստակյաց, կիսանստակյաց, քոչվոր... Ի՞նչ փոփոխություններ են նկատվում այդ տեսակետով սովետական ժամանակ։

2. Բնակչության բաշխումը ըստ բնակավայրերի և պարապմունքների։

3. Հողի օգտագործումը սովետական ժամանակ և առաջ։ Հողային շինարարությունը։ Ընդհանուր հողային ռեսուրսների որ մասն է օգտագործվում որպես մնատեղ, որպես այգի—պարտեզ, ինչքան տարածություն է հերկվում. ինչքան է համակցրած անասուն արածացնելու համար...։

4. Ջրարբի և անջրդի հողերի տարածությունը։ Ոռոգման ձևերն ու ժամանակները։ Ի՞նչպես, երբ և ում միջոցով են կառուցվել առուները։ Փոխադարձ օգնության ձևերը հին առուները մաքրելու և նորերը անցկացնելու ժամանակ սովետական օրով և առաջ։

1. ԴԱՇՏԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ տեղ է բռնում դաշտամշակությունը տեղական տնտեսության մեջ։ Որո՞նք են դաշտամշակության ամենակարևոր ճյուղերը։

2. Ցանքսերի տարածությունը որքա՞նով է ավելացել կամ պակասել նախահեղափոխական տարածության համեմատությամբ։ Ի՞նչ են ցանում։ Տեղացիք մշակություններից որո՞ն են ամենահինը համարում և որո՞ն ավելի նոր և որ ժամանակից մտած։ Ի՞նչ են պատրաստում այս կամ այն մշակույթի (կորնգանի, բամբակի, տաբեկանի, դեղնանուշի) մշակման մասին։ Ի՞նչ պատճառներով են բացատրում այս կամ այն ճյուղի առավել կամ պակաս տարածված լինելը իրենց գյուղում։ Ի՞նչ նոր մշակություններ են մտել սովետական օրով։

3. Դաշտամշակության ի՞նչ սիստեմն էր կիրառվում՝ դաշտափոխ (переложная), եռադաշտ, բազմադաշտ։ Սերմնափոխության (ցանքաշրջանառության) ի՞նչ տեսակ հաջորդականություն էր գործադրվում։

4. Վարելու, ցանելու, հնձելու, կալսելու միջոցին հնում գործածվող գործիքներն ու պարագաները։ Յուրաքանչյուրի մանրամասն նկարագրությունը գծագրություններով. առանձին մասերի անունները։ Այդ գործիքները և պարագաները տեղացոց ասելով որչափ հին էին, տեղական էին թե ներմուծ. վերջին դեպքում որտեղից և ե՞րբ էին մտել։ Ի՞նչ կենդանիների ուժից էին օգտվում դաշտամշակության այդ աշխատանքների միջոցին և ի՞նչ ձևով։ Յուրաքանչյուր աշխատանքի տեխնիկան (ի՞նչպես էին վարում, ցանում, հնձում, կալսում...)։ Ջանադան դաշտային աշխատանքները սկսելու և վերջացնելու ժամկետները։

5. Դաշտամշակության յուրաքանչյուր աշխատանքին ի՞նչպես էին մասնակցում տղամարդիկ և կանայք, հասակավորները և անչափահասները։

6. Ի՞նչ կատարելագործված գործիքներ են մտել, ե՞րբ, ո՞ւմ միջոցով և ամենից առաջ որտեղ։ Համեմատել այդ և հին գործիքների աշխատանքի էֆեկտը տեղական պայմանների մեջ։ Ի՞նչպես էին երկրագործական գործիքներն ու կենդանական ուժը բաշխված առանձին տնտեսությունների մեջ սովետացումից առաջ։ Ի՞նչ փոփոխություններ են առաջ եկել այժմ։

7. Պարարտացվում էին արդյոք դաշտերը, ինչո՞վ և ինչ ձևով։

8. Խոտաբուծություն։ Ի՞նչ կերաբույսեր (հին և նոր) են ցանվում։ Ցանքերի տարածությունը։ Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել խոտաբուծության մեջ սովետական ժամանակ։

9. Փոխադարձ օգնության և աշխատակցության ի՞նչ ձևեր գոյություն ունեին մինատնտեսականների մեջ վարելու, ցանելու, հնձելու, կալսելու ժամանակ։ Գութանով, եղներով, սերմով միացողների փոխհարաբերության պայմանները։

10. Ի՞նչպես էին հացահատիկը մաքրում։ Ի՞նչպես էին պահում հացահատիկը, հարդը (հորեր, ամբարներ...մարագ)։ Աղալու ձևեր—երկանաքարերով, ջաղացում...

11. Խոտ հարելու ժամանակ, հարելու միջոցին գործածվող գործիքները և տեխնիկան։ Ո՞րտեղ և ինչպես էին պահում խոտը։ Սիլոսները և բնակիչների վերաբերմունքը դեպի նրանք։

12. Ի՞նչպես էին հացաբույսերը և խոտը տեղափոխում դաշտից՝ սայլով, դրաստով, շալակով... և ո՞վքեր։

13. Երկրագործությանը հովանավորող ոգիները (սուրբերը), նրանց ուղղված աղոթքներն ու մատաղները։

14. Ի՞նչ միջոցների (ռեալ և սնահավատական) էին դիմում (մատաղ, պաս, երկուշաբթի օրերը տոնելը և այլն) արտերը կարկտից, մկներից, մորեխից, թռչուններից և այլ վնասատուներից, ինչպես և չար աչքից պահպանելու համար։

15. Ո՞ր օրերն էին համարում նպաստավոր և ո՞ր օրերն աննպաստ այս կամ այն երկրագործական աշխատանքի համար։ Վարելու, ցանելու, հնձելու, կալսելու, խոտ հարելու հետ կապված սնահավատություններ և ծխակատարություններ։

16. Բիբքի, հացի և այլ տոներ։ Ի՞նչ երգեր էին երգվում այդ ժամանակ և առհասարակ երկրագործական աշխատանքների միջոցին։

17. Եղանակը դուշակելու նշաններ։

18. Դաշտամշակության տեխնիկայի և սոցիալիստական ձևերի մեջ տեղի ունեցած փոփոխությունները սովետական օրով, մանավանդ կոլեկտիվ տնտեսություններին անցնելու հետևանքով։

1763
46

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀԱՅ ԱԳ. ՍՍՀ

852—2

2. ԱՁԴԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ տեղ են բռնում այգեգործությունն ու պտղաբուծությունը տեղական տնտեսության մեջ։

2. Այգիների և պտղատու ծառաստանների (առանձնապես թթենիների) տարածությունը։

3. Խաղողի և պտուղների ո՞ր տեսակներն են ավելի տարածված. նրանց տեղական անուններն։ Նրանցից որո՞նք են հնուց տեղական, որո՞նք նորամուտ։ Ի՞նչ են պատմում տեղացիք նրանց ծագման և տարածման մասին։ Ի՞նչ նոր տեսակներ են մտել սովետական իշխանության օրով։

4. Այգեգործության և պտղաբուծության տեխնիկան։ Որքա՞ն փուլ է արդյոք հողաթմբերին, թե բարձրանում ծառերի, նեղուկների վրա, տունկերը շարքավո՞ր էին, թե անկանոն դասավորված։ Ի՞նչ գործիքներ էին գործածվում թե այգիների և պարտեզների հողը մշակելիս և թե խաղողի որթերը և ծառերը խնամելիս։ Ի՞նչ են պատմում այդ գործիքների ծագման մասին։ Ե՞րբ և ի՞նչպես էին ջրում այգիներն ու պարտեզները։

5. Ի՞նչպես էին մասնակցում տղամարդիկ, կանայք և անչափահասները այդ աշխատանքներին։

6. Ի՞նչպես էին պաշտպանում այգիները և պարտեզները ձմեռվա դրտից։ Ի՞նչպես էին պաշտպանում ջնասատուներից (ճիճուներից, չոռից, փիլոքսերայից), թռչուններից, գողերից (ցանկապատերը, նրանց կառուցվածքը, դարպասը)։ Ի՞նչպիսի կախարդական հնարների էին դիմում չար աչքից պաշտպանելու, բերքատվությունն ավելացնելու համար։ Ի՞նչ նշաններով էին գուշակում սպասելիք բերքի քանակն ու որակը։

7. Այգեկութ և պտուղների քաղը։ Տեխնիկան, գործածվող գործիքներն ու ամանները։ Փոխադարձ օգնության ձևերն այդ միջոցին։ Տոներն ու հանդեսները. ի՞նչ երգեր էին երգվում։

8. Ի՞նչ փոփոխություններ են մտել այգեգործության և պտղաբուծության տեխնիկայի և սոցիալական պայմանների մեջ սովետական օրով։

9. Գինեգործությունն ու նրա զարգացման չափը։ Գինեգործության տեխնիկան։ Ի՞նչպես էին խաղողը քամում, որտեղ։ Մաճառի և զալը։ Գինեգործության միջոցին գործածվող գոր-

ծիքներն ու ամանները։ Շիրա, սուջուխ, դոշաբ և այլն պատրաստելու եղանակները։

10. Օղի քաշելը։ Ինչի՞ց էին օղի քաշում, ինչ գործիքներով, ամաններով, ինչ եղանակով։

11. Ի՞նչպես էին տղամարդիկ, կանայք և անչափահասները մասնակցում գինեգործության և օղի քաշելու զանազան աշխատանքներին։

12. Գինի և օղի պահպանելու ամանները և ձևերը։

13. Նոր գործարանների (մանավանդ սովետական օրով հիմնածների) ազդեցությունը գինեգործության և օղի քաշելու տեխնիկայի ու սոցիալական ձևերի վրա։

3. ԲԱՆՋԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Բանջարանոցները և բոստանները որտեղ են գտնվում (դյուղի մոտ, այդիներում, արտերի մոտ)։ Բանջարանոցների և բոստանների տարածությունը։ Գլխավոր բույսերը—կարտոֆիլ, կաղամբ, վարունգ, ձմերուկ, սեխ, դդում, բաղրիջան, պոմիդոր, սոխ, բազուկ, գազար, կանաչի... սխտոններ, ոսպ. որոնք են դրանցից հին տեղական մշակույթներ և որոնք նորամուտ. երբ է մտել օրինակ՝ կարտոֆիլը, պոմիդորը... և ինչ ճանապարհով։

2. Բանջարաբուծության և բոստանամշակության տեխնիկան. գործիքները, նրանց ծագումը։ Ինչպիսի սերմնափոխության հերթականություն էր կիրառվում։

3. Ինչ փոփոխություններ են տեղի ունեցել սովետական օրով։

4. ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ—ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Ինչ տեղ էր բռնում անասնապահությունը տեղական տնտեսության մեջ առաջ. իսկ այժմ։

2. Արոտատեղերի տարածությունը։ Ամառային և ձմեռային արոտատեղերը։ Ինչ ճանապարհներով էր հեռավոր դյուղերի անասունը ամառը սարը բարձրանում կամ ձմեռը իջնում առատ արոտատեղերը։ Ինչ միջոցներ էին ձեռք առնվում այդ ճանապարհներին պատահող դյուղերի ցանքսերը վնասումներից ազատվելու համար։

3. Տեղական որ դյուղերի, որ ազգությունների մեջ էր ավելի զարգացած անասնապահությունը և ինչ բնույթ էր կրում։

Ի՞նչ կենդանիներ էին առավելապես բազմացվում (ոչխար, այծ, խոզ, խոշոր եղջյուրավոր անասուն, ուղտ, ձի, էշ, ջորի)։

4. Ի՞նչ միջոցներով էին լավացվում անասունի տեսակները։ Հասարակական ցուլեր, նժույգներ, խոյեր։

5. Անասնապահի տարին, մանավանդ սար բարձրանալու, սարից իջնելու, ոչխար խուզելու, նախրաթողի, դումից հանելու ժամկետները։

6. Անասունը արածացնելու ձևերը ամառը և ձմեռը (որտեղ տարածված է արդյոք անասառում արածացնելը և ինչ ձևով)։ Հովիվներին վարձելու պայմանները։ Վերաբերմունքը դեպի հովիվները։ Մանկական աշխատանքի դործադրությունը։

7. Ի՞նչպես էին բաշխում իրենց մեջ արոտատեղերը թե դյուղական վայրերում և թե սարերում։ Ընկերակցության կազմակերպական ձևերը։

8. Գոմում և առհասարակ փակ շինքում անասունը պահելու և խնամելու (կեր տալու, ջրելու, մաքրելու...) ձևերը. աշխատանքի բաժանումը։

9. Նորածին գառը, հորթը, քուռակը... խնամելու ձևերը։ Ի՞նչպիսի ծեսակատարություններ և սովորություններ էին շաղկապված նորածին անասունի ծննդի հետ (անից ոչինչ դուրս չէին տալիս...)։

10. Անասունը դողերից և դազաններից պահպանելը։ Հովվական շները և վերաբերմունքը դեպի նրանք։ Վերաբերմունք դեպի ուրիշի մոլորված անասունը։ Ի՞նչ մոդական միջոցների էին դիմում կորած անասունի տեղը կամ դողին դանելու, դանից ազատելու համար (գիլկապի աղոթքներ...)։

11. Անասունի հիվանդությունները։ Ի՞նչ անուններ են տալիս դանազան հիվանդություններին։ Ի՞նչպես էին բժշկում (ժողովրդական բժշկությունը)։ Ո՞ր սրբավայրերն էին քշում հիվանդ անասունը։ Ուժեղնում էին արդյոք հմայիլ, որ քարերի ջուրը։ Ի՞նչ բժժանքներ և հմայիլներ (դաղդան..., երկաթ, հին ոտնաման) են կախում անասունի վղից, պողերից... այս կամ այն հիվանդությունից, չար աչքից, ալքից պահելու համար։ Ինչո՞ւ համար էին ներկում անասունների պողերը, մեջքը։ Արդյոք հայտնում էին ալրիշին անասունի թիվը։

12. Անասունը կրտելու, նալելու, դաջելու... ձևերը։ Դաղմանների նշանները։

13. Ո՞ր ասպղերն էին համարվում նպաստավոր կամ ան-

նպատակ այս կամ այն անասունը սրածացնելու, ջրելու ժամանակ։

14. Ո՞ր սուրբերն էին համարվում առհասարակ անասունների և մանավորապես նրանց այս կամ այն տեսակին հովանավորող։ Անասնապահական տոներ, աղոթքներ, ծիսակատարություններ՝ կապված գարնանը առաջին անգամ դուրս քշելու, սար ուղարկելու, սարից իջնելու, գոմում պահելու... հետ։

15. Ի՞նչ սովորություններ էին կապված ծախած անասունը տնից դուրս հանելու և գնած անասունը տուն բերելու հետ (սանձ չտալը, ճակատին ձու խփելը...)։

16. Կթելու ժամկետները։ Ի՞նչպես էին կթում կովը, ոչխարը, այծը։ Տարածված էր արդյոք մատակ ձի կթելը։ Ո՞վ էր կթում, կթելու տեխնիկան. կթելու ժամանակ գործածվող ամանները։ Նոր կթած կաթը քամելը։ Կաթը չար աչքից և չար ոգուց, դողանալուց պահելու հնարները։ Կթում էին արդյոք օտար մարդու ներկայությամբ։ Ի՞նչ էին շինում հում կաթից և ինչպես։ Կթած առաջին կաթի հետ կապված սովորությունները։ Կաթով ընկերակցելը («խաբ»)։

17. Կաթ եփելը։ Մածուն մերելը, քամելը և չորացնելը. այդ աշխատանքներին գործածվող ամանները։ Ղայմաղ եփելը։

18. Կարագ ստանալը. ինչից, ինչով և ինչպես էին հարում։ Ի՞նչ սովորություններ էին կապված հարելու հետ։ Ի՞նչ միջոցների էին դիմում կարագը չար աչքից պահելու համար, կամ որ տան կարագը առատ լինի (Իրնդեկին ծանր կին շալակած՝ կրակի շուրջը պտտելը...)։ Զորթան պատրաստելը։

19. Պանիր պատրաստելու եղանակները և նրանց հետ կապված ծեսերը։ Տեղական պանիրները և նրանց անունները։

20. Ոչխար, այծ խուզելը. երբ, որտեղ, ինչո՞վ և ով էր խուզում։

21. Փոխադարձ օգնության ինչ ձևեր կային կարագ հարելու, պանիր պատրաստելու, ոչխար, այծ խուզելու ժամանակ։

22. Ի՞նչպես էին մասնակցում տղամարդիկ և կանայք անասնապահության և կաթնատնտեսության զանազան աշխատանքներին։

23. Ի՞նչ փոփոխություններ են մտել անասնապահության և կաթնատնտեսության մեջ սովետական օրով։ Անասնապահությունն ու կաթնատնտեսությունը կոլտնտեսություններում ու սովետական տնտեսություններում։ Ի՞նչպես են ազդել այդ փոփոխությունները կենցաղի վրա։

24. Անասունը մորթելու և մաշկելու ձևերը։ Արդյոք կինը մորթում էր. ինչ մասերի էին բաժանում մորթած անասունը. այդ մասերի տեղական անուններըւ

25. Արդյոք չէին գործածում տնային կենդանիների եղջյուրներն ու դանդերը որպես պահպանակներ—հմայիլներ արտերի, բոստաններիի, մանուկների և այլն։ Ինչ եղել դեպքեր սիրած անասունը հանդիսավոր կերպով թաղելու։

26. Արդյոք չկան տնային կենդանիների շարժումները վերարտադրող պարերը և ներկայացումներ։ Տնային կենդանիներ ներկայացնող դիմակներ։

27. Անասնապահության և կաթնատնտեսության հետ կապված երգեր, աղոթքներ, անեծքներ, կախարդություններ։

28. Ի՞նչ հատուկ անուններ են տալիս կենդանիներին և ինչպես են նրանց դիմում կանչելիս, քշելիս, հայհոյելիս և այլն։

5. ԹՌՉՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ տնային թռչուններ են պահում տեղացիք։ Ի՞նչ տեսակներ։ Ո՞րտեղ են պահում տնային թռչուններին և ինչպես կերակրում։ Ո՞վ է խնամում և հսկում տնային թռչուններին։

2. Ի՞նչ հարմարացումներ են ստեղծում հավերի ձու ածելու համար։ Ի՞նչ հնարների էին դիմում ձուածանությունն ուժեղացնելու համար։ Ի՞նչ ծեսեր էին կատարում թուխս նստեցնելիս (հավի գլխով ձուն երեք անգամ շրջեցնելը...)։

3. Թուլլ էր տրվում արդյոք կանանց՝ տնային թռչուններ մորթել։

4. Տնային թռչունների տեղական անունները։ Նրանց կանչելու, քշելու, կերակրելու ժիջոցին գործածվող բառերը։

5. Արդյոք գո՞րծ էր ածվում որևէ թռչունի ոսկորը որպես հմայիլ և ինչ դեպքերում։

6. Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել թռչնաբուծության մեջ սովետական կարգեր հաստատվելուց հետո, մանավանդ կոլեկտիվ տնտեսությունների զարգացմամբ։

6. ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

1. Շերամապահության դերը տեղական տնտեսության մեջ առաջ և այժմ։

2. Ի՞նչ են պատմում գյուղացիք իրենց շրջանը շերամապա-

հության մուտք գործելու մասին։ Ի՞նչ են պատմում շերամի ծագման մասին։

3. Արդյոք նախապաշարված չե՞ն շերամապահութ յամբ պարապելու դեմ, որը իբր թե հաճելի չէ որևէ սրբի կամ ոգու համար։ Չէ՞ն կապում շերամապահութ յամբ պարապելու հետ որևէ դժբախտութ յան, երաշտի, կարկտի և այլն առաջանալը։ Անհավատութ յունից դրդված չէ՞ն ոչնչացրել շերամը և ի՞նչ դեպքերի առթիվ։

4. Աշխատանքի բաժանումը տղամարդկանց և կանանց մեջ։

5. Ի՞նչ սոցիալական հնարների էին դիմում շերամը չար աչքից, հիվանդութ յունից, մրջյուններից, մկներից և այլն պահելու համար։ Ի՞նչպիսի առարկաներ էր արգելվում պահել շերամի մոտ և ինչո՞ւ։ Թո՞ւյլ էր տրվում արդյոք բարձրաձայն խոսել, աղմկել, բարկանալ, սուլել... շերամ պահելու տեղում։

6. Բոժոժ հավաքելու հետ կապված տոները։ Փոխադարձ օգնութ յունը բոժոժհավաքի ժամանակ և առհասարակ շերամապահութ յան այլ ժամհնանհերում։

6. Հնդահանութ յուն. Նրա հին և նոր ձևերը։ Հնդահանութ յան և առհասարակ շերամապահութ յան մեջ ի՞նչ փոփոխութ յուններ են մտել սովետական ժամանակ, մանավանդ կոլտնտեսութ յունների տարածումից հետո։

7. ՄԵՂՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

1. Մեղվապահութ յան դերը տեղական տնտեսութ յան մեջ առաջ և այժմ։

2. Ի՞նչ ավանդութ յուններ կան մեղուների ծագման և առհասարակ մեղվապահութ յան սկզբնավորութ յան մասին։

3. Մեղվապահութ յան տեխնիկան—փեթակների կառուցվածքը, մեղուների խնամքը, պայքար վնասատուների դեմ, փեթակների տեղափոխութ յունը՝ նայած տարվա ամիսներին, մեղր կտրելու ձևերը և այլն։ Մեղվապահութ յան միջոցին գործածվող գործիքներն ու պարագաները։

4. Կա՞ն արդյոք մեղվապահութ յան հովանավոր ոգիներ կամ սուրբեր։ Նրանց նվիրված տոներն ու ազոթքները։

5. Մնահավատութ յուններ ու սովորութ յուններ՝ շաղկապված բախտավոր տեղի ընտրութ յան, առաջին պարսը ձեռք բերելու (զողանալով, նվեր խնդրելով, անտառում բռնելով, գնելով),

ամառը փեթակները դուրս տանելու, նոր մայր հանելու, մեղր հավաքելու, ձմեռը փեթակները տեղավորելու... հետ։ Ի՞նչ ժողովական միջոցներով են պաշտպանվում մեղուների խայթումից։

6. Մեղունների տեղական հիվանդություններ։ Հիվանդություններից պաշտպանելու և բժշկելու ռեալ և ժողովական միջոցները։ Մեղուներին ուրիշ փեթակների մեղուներից, թռչուններից (ճանճակուլ) պաշտպանելը։

7. Մեղրն ու մեղրամոմը ժողովրդական ծեսերի, հավատալիքների և բժշկության մեջ։

8. Ի՞նչ փոփոխություններ են մտել մեղվապահության մեջ այժմ, մասնավորապես կոլխոզային շարժման հետևանքով։

8. ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ

1. Որսորդության և ձկնորսության դերը տեղական տնտեսության մեջ առաջ և այժմ։

2. Ի՞նչ ավանդություններ են պահպանվել բնակչության մեջ նախնիների որսորդության և ձկնորսության մասին։ Ի՞նչ են պատմում որսի և ձկան առատության մասին հնում։

3. Ի՞նչ տեսակ վայրենի կենդանիներ և ձկներ են պատահում տեղում։ Նրանց տեղական անուննները։

4. Կան արդյոք մասնագիտորեն որսորդությամբ և ձկնորսությամբ պարապողներ։

5. Որսորդության և ձկնորսության ժամանակները. արգելված ժամանակները։

6. Որսորդության և ձկնորսության միջոցին գործածվող պարագաները. զենքերից—կարթեր, թոռներ, ցանցեր, թակարդներ, ծուղակներ, վահաններ, սալակներ... Նրանց տեղական անուննները, գործածելու եղանակները։ Ժամանակ կենդանիներ՝ շուն, բազե։

7. Ո՞ր կենդանիների կամ ձկների միսը չեն ուտում և ինչո՞ւ։

8. Որսի են զնում մինչև, թե խմբովին։ Ի՞նչ կանոններով են դեկավարվում, եթե որսը միաժամանակ մի քանի մասնակիցներ են ապահովել։ Որսի բաժանումը մասնակիցների միջև. լրացուցիչ մաս ստանում է ապահովը։ Որսի մի մասը ճամբին պատահողներին, հարևաններին տալը։

9. Վայրի կենդանիներին և ձկներին հովանավորող ոգի-

ներ և սուրբեր։ Նրանց ուղղած աղոթքներն ու գոհաբերությունները։ Տոները նրանց պատվին։

10. Լեգենդներ որսորդության և ձկնորսության մասին։ Պատմություններ որսականների և ձկնորսների կյանքից։ Երգեր։

11. Առողջություն ունենալու համար կատարվող ծեսերը և նրանց հետ կապված աղոթքները։ Վատ և լավ նշաններ որսի գնալիս, որսի տեղում, տուն վերադառնալիս։ Ձի արգելվում արդյոք անհրաժեշտ քանակից ավելի որսալ և ինչու։

12. Որսի գնալուց առաջ պատ չեն պահում արդյոք, չեն խուսափում սեռական հարաբերություններից, ուրիշ ինչ արգելքներ են սահմանված։

13. Ի՞նչպես պաշտպանել զործիքը (հրացանը, թոռը...) չար աչքից և այլն։ Ի՞նչպես է ազդում, երբ նրանց ձեռք է տալիս կինը, մանավանդ հղի կինը։

14. Առաջին որսի հետ կապված ծեսերը։ Արդյոք չի՞ պահանջվում այդ որսը որևէ մեկին տալ կամ որ ինքը սպանողը ուտի։ Ի՞նչպես են վերաբերվում սպանված կենդանուն։ Ո՞ր մասն է արգելված կանանց, հղի կանանց, երեխաների համար։

15. Որսորդների լեզուն (կենդանիների պայմանական անուններ)։ Ինչու են դիմում այդ լեզվին։ Ի՞նչպես պետք է մասնակիցներն իրենց պահեն որսի ժամանակ. արգելվում է արդյոք աղմկել, հայհոյել, իրար անունը տալ։

16. Լեգենդներ որսի ոգիների հետ որսորդների ու ձկնորսների ունեցած հանդիպումների մասին։ Լեգենդներ, թե ինչպես սպանված կենդանին կամ ձուկը վերակենդանացել է։

17. Կենդանիների և ձկների որ ոսկորները (նաև մաղը...) պորձ է ածվում որպես համայիլ և ինչի՞ դեմ։

18. Որսորդական ժխտություններ այժմ. նրանց ազդեցությունը որսորդական տեխնիկայի և կենցաղի վրա։

9. ՏՆԱՑՆԱԴՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՀԵՍՏՆԵՐ

1. Գնում են արդյոք հեռավոր գյուղերն ու քաղաքները աշխատանքի, ո՞ւր, ինչ աշխատանքի, երբ, քանի՞ ժամանակով։ Գնում են արդյոք անասնագործներն ու արհեստավորները։ Ի՞նչ տեղ է բռնում դրսի աշխատանքից ստացած արդյունքը տեղական անտեսության մեջ։

2. Ի՞նչ անասնագործական պարապմունքներ և ինչ ար-

հետաներ են տարածված տեղում. նրանց դերը տեղական տնտեսության մեջ։ Տնայնագործության ճյուղերից որոնք են արդեն արհեստի բնույթ ստացել։

3. Բրդի, բամբակի, թելարույսերի և մետաքսի վերամշակումը.

ա) գործագործություն,

բ) թաղիքագործություն (յափնջի, քոլոզ...),

գ) ոստայնագործություն (տափե գործ, հոլի—«ճլկահորի» գործ),

դ) պարանագործություն, ժապավենություն (կանեփ, մազ, բուրդ...)։

Այդ արդյունագործությունների վիճակը առաջ և այժմ։ Տղամարդկանց և կանանց մասնակցությունը։ Աշխատանքի վայրը։ Տեխնիկայի մանրամասնությունները՝ սկսած հումքի նախնական մշակումից (սանդերքով դզելը, թել ոլորելը խլիկով, ճախարակով, քարմանով, լնգրայով...) մինչև արտադրանքի վերջնական ձևակերպումը։ Գործիքները ու պարագաները (տորք, հանա, դազդյահ...), ներկերը—բուսական և քիմիական, նախշերն ու զարդերը։ Արտադրանքի տեսակները։

4. Կաշեգործություն։ Կաշու գործադրությունը—պարաններ, պարկեր, գոգնոց, անդրավարտիկ... ոտնաման։ Մորթու մշակումը։

5. Ոսկորի և եղջյուրի վերամշակումը։

6. Կավագործություն։ Տնային (կանանց) և բրուտների աշխատանք. բրուտների չարխի ձևը։ Աղյուսի և կրամիտի պատրաստումը։

7. Փայտամշակություն։ Տնային (երկրագործական, թիակներ, վորցլի) և արհեստավորների գործիքներ։

8. Ձիթհանություն։

9. Դարբնություն։ Ջինագործություն։ Դանակ շինելու արհեստ։

10. Պղնձագործություն։

11. Ոսկերչություն։

12. Դերձակություն, կոշկակարություն, գդակ (վափախ) կարելը։

13. Սափրչություն։

Այս պարապմունքների յուրաքանչյուրի վերաբերյալ—ինչ են պատմում տեղացիք ծագման մասին, ովքեր են զբաղվում,

Ինչպես է ձևոք բերվում վարժությունը, արհեստանոցի մեջ աշխատողների փոխհարաբերությունը (կան արդյոք արհեստակցական միություններ—ասնաֆություն, համքարություն)։ Ցուրաքանչյուր արհեստի տեխնիկայի բոլոր մոմենտները։ Անհրաժեշտ պարագաներն ու գործիքները։ Աշխատանքի վայրը (տանը, նրա մոտ ժամում, հատուկ շենքում—գարբնոց, ձիթհանք, սրանոց, խանութ—արհեստանոց...)։ Հումքի ծագումը։ Հարկավոր կողմնակի նյութեր։ Դիզարվեստական մշակում (նախշեր գենքերի, անոթների, պղնձեղենի, կոշիկների, ոսկերչական զարդերի և այլն վրա)։ Գործադրվող ժամանակի քանակը։ Առողջապահական պայմանները։ Պարապմունքի հետ կապված անհանգստությունները, աջողությունը ապահովելու հնարները, հեքյաթները...

14. Տնայնագործության և արհեստի յուրաքանչյուրից ստացվող արդյունքը։ Այդ արտադրանքի ռեալիզացիայի ձևը—վաճառամատ, փոխանակությամբ։

15. Արդյունաբերական արտելների կազմակերպումը սովետական օրով. նրանց ազդեցությունը թե տեխնիկայի, թե մարդկային ուժի գործադրության եղանակի, թե գործածվող ժամանակի և թե արտադրանքի քանակի և որակի, ինչպես և աշխատողների որակավորման վրա։ Ի՞նչպես են անդրադառնում այդ փոփոխությունները կենցաղի վրա։

10. ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐ

1. Փոխանակության առարկաները ու ձևերը։ Փոխանակությունը երկրագործների, անասնապահների, արհեստավորների, աշուղների, գուսանների... միջև։ Փոխանակության տարբեր շրջանների բնակչության միջև։ Փոխանակության նորմաները։

2. Ո՞րքան էր տարածված առաջ և տարածված է այժմ դրամով առևտուրը։ Առևտրի տեսակները (տեղական սպառման և արտահանության) և ներմուծված առարկաները։ Չևը—մեծաքանակ վաճառք, հատավաճառ։

3. Հնում առևտրի մեջ գյուղացիների, արհեստավորների, հատուկ առևտրականների մասնակցությունը։ Տեղական առևտրական անների արած տոկոսային հավելումները ապրանքների ինքնարժեքի վրա։ Առավելապես ինչ ազգության էին պատկանում առևտրականները։ Մասնակցում էին արդյոք

կանայք առևտրին։ Բնակչության վերաբերմունքը դեպի առևտրականները։

4. Վարկատվության ձևերը նախքան ռևոլյուցիան։ Տեղական վաշխառուները։ Վաշխառուների վերցրած տոկոսները։ Վաշխառության և առևտրի կապը։ Ի՞նչ վարկից էին օգտվում իրենք վաշխառուներն ու առևտրականները։

5. Շուկաներ (բազարներ) և շուկայի օրերը։ Ո՞րտեղից, ինչ և ովքե՞ր են ծախու իրենց բերում։ Բազարի բնույթի փոփոխվելը տարվա եղանակների առնչությամբ։ Տոնավաճառներ, ուխտատեղիներում բացվող շուկաներ։ Կոլխոզային տոնավաճառները և նրանց ազդեցությունը, ժամանավորապես կենցաղի վրա։

6. Սպառողական կոոպերացիա, նրա ցանցը տեղում, ընդգրկման աստիճանը։ Մանավոր առևտրականների դիմադրության ձևերը կոոպերացիային։ Սպառկոոպերացիայի ազդեցությունը կենցաղի վրա։

11. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. Հաղորդակցության ճանապարհները տվյալ շրջանում (հին և նոր)։ Լեռնանցքներ, կամուրջներ, նրանց կառուցվածքը։ Իջևաններ—քարվանսարաներ, նրանց դասավորությունը։ Ճանապարհների վիճակը գետերի վարարման ժամանակ և ձմեռը։ Ովքե՞ր էին առաջ հոգ տանում ճանապարհների բարեկարգության, արդյոք գոյություն ունե՞ր պարտադիր հարկ։ Ի՞նչ միջոցներ են այժմ գործադրվում։

2. Մերձավոր (արտերի, արոտատեղերի, անտառի, սարի) և հեռավոր վայրերի հետ հաղորդակցություն պահպանելու միջոցները.

ա) Գրաստ։ Էշ ձի, ջորի, ուղտ, եզ, որպես փոխադրող կենդանիներ։ Հեծնելու և բեռնելու սարքավորում (փայտե, թամբ...)։ Նրանց մասերի անուննները։ Այդ սարքավորումներից որն է ավելի տարածված տեղում և ինչու։

բ) Սայլ։ Տեղում գոյություն ունի՞. նրա տեղական ձևերը, այդ ձևերի յուրաքանչյուրի որ դեպքում գործածվելը։ Այդ ձևերի և նրանց մասերի անուննները։ Անիվը, շարժակին, թե անշարժ առանցքով, միասի՞ն, թե շաղերով։ Երկանիվ և քառանիվ սայլեր։ Լծելու ձևերը։ Մտած նորաձևություննները. որտեղից և երբ են մտել։

գ) Սահնակ։ Նրա ձևերը, տեղական կամ ներմուծած լինելը։ Մասերի անունները, գործածության դեպքերը։

3. Տղամարդկանց և կանանց մասնակցությունը ծանրության փոխադրության գործում, դրաստ, սայլ, սահնակ սարքավորելու, լծելու, քշելու մեջ։

4. Ճանապարհ մեկնելիս և ճանապարհին՝ վտանգավոր տեղերում՝ կիրառվող մոգական հնարները։ Լավ և վատ նախազուշակություններ, հանդիպումներ (քահանայի, նապաստակի, դատարկ իրի հետ. ագռավի կանչ...)։ Ճամբորդական աղոթքներն ու օրհնությունները։

5. Ճամբորդներին հովանավորող ոգիներն ու սուրբերը։

12. ՀԱՇԻՎ, ՉԱՓԵՐ

1. Հաշվի ինչ սիստեմ է գործածվում — տասնորդական, տասն և երկուորդական, քսանորդական։

2. Ինչով են հաշվում — մատներով, քարերով, փայտերով, փայտերի վրայի ծոմերով, հատիկներով, համրիչով (տերողորժայա) և այլն։

3. Ո՞րպիսի դեպքերում հաշվում են դույլերով (ջուխտ), եւյակներով, հնդյակներով, դյուժիններով...

4. Ի՞նչպիսի գործնական եղանակների են դիմում բանավոր դուժարման, հանժան, բազմապատկման և բաժանման համար, մանավանդ երբ թվերը մեծ են լինում։

5. Արժեքը որոշելու ժողովրդական հին միավորը — կով, ոչխար և այլն։ Ո՞րչափով արժեքի այդ հին միավորները անհետացել են և տեղի են տվել դրամական միավորներին։

6. Տոկոսները հնում ինչպես էին հաշվում։

7. Ծանրության չափերը (հոխա, բաթման, խալվար, լիդր, քիլե, շնիկ, նուկի, թուղթ...)։ Տեղական կշեռքը։ Նրա մասերի անունները. կշռաքարերը։

8. Երկարության չափերը։ Չափելու պարագաները (քայլ, գազ, կանգուն, թիզ... օրվա ճանապարհ...)։ Ինչպիսի միջոցներով են անմատչելի իրերի հեռավորությունը, բարձրությունը որոշում։

9. Մակերեսի չափերը (օրավար, խալվար). տարածությունը չափելու և բաժանելու եղանակները։ Ինչպես են որոշում արտերի, դաշտերի, անտառների և այլն սահմանները։

10. Ծավալի չափերը։

11. Հեղուկների չափերը (ջրի, կաթի, գինու, օղու...)։

12. Թափուցիկ (сыпучие) մարմինների չափերը (հատիկի, ալյուրի, ավազի...)

13. Երկրաչափական ձևերի չափումը—անկյունի, եռանկյունու, քառակուսու, բազմանկյունու, շրջանի, գնդի։ Այդ ձևերի տեղական անուններըւ

14. Ի՞նչպիսի հատուկ չափեր են գործածվում հասկերը, խոտը, ժանվածքը, փայտը, աուվի ջուրը, քարը... չափելու համարւ

15. Ի՞նչպիսի չափողական պարագաներ և չափելու եղանակներ են գործածում արհեստավորներն ու տնայնագործներըւ

16. Ի՞նչպիսի խրթին և դվարճալի թվաբանական խնդիրներ, հանելուկներ, ռեբուսներ են իրար առաջարկում, և ի՞նչպես են նրանք լուծվումւ

17. Ի՞նչ խորհրդավոր նշանակություն ունեն 3, 7, 40 և այլ թվերըւ

18. Մեզ են տալիս արդյոք հաշվելուց արտերի քերքը, անասունը, շերամը, մեղուն, հավը, տան անդամներին և այլնւ Հարկ եղած դեպքում հաշվում են բարձրաձայն, թե լուռ։ Հայտնում են արդյոք ուրիշին համբարքի թիվըւ

III. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

1. Բ Ն Ա Կ Ա Վ Ա Յ Ր

1. Շրջանի բնակավայրերի (քաղաքների, քաղաքատիպ վայրերի, ավանների և գյուղերի) թիվը։ Նրանց դասավորությունն ըստ տնտեսական դոտիների, ըստ մեծության և խտությունը։ Այդ դասավորության պատճառները։ Ո՞ր բնակավայրը մեծանալու կամ փոքրանալու նշաններ է ցուցաբերում. ինչո՞ւ։

2. Բնակավայրերի տեղադրությունը—գետի ափին, աղբյուրի մոտ, քերծի տակ, ձորի ժեջ ... և դրա պատճառները (նաև ըստ տեղացոց բացատրության)։ Ի՞նչպես էին հնում ամրացնում վայրըւ

3. Գյուղերի տիպը—տները ցրված են, թե իրար հուպ կպած, անկարգ դասավորված, թե պլանով։ Փողոցները և նրանց դասավորությունը։ Գյուղերի այդ տիպի առաջանալու պատճառները։

4. Ի՞նչ ազգության է պատկանում ավյալ գյուղի բնակչությունը։

5. Ընդհանուր տնտեսությունից բաժանվող նոր տնտեսությունները տեղավորվում են գյուղի մեջ, թե գյուղից դուրս։ Գյուղից անջատվող տնտեսությունները որտեղ են հիմնում նոր բնակավայրը։ Ո՞րչափ տարածված են գյուղից հեռացած, մեկուսացած տնտեսություններ հիմնելու դեպքերը և ինչն է դրա պատճառը։

6. Տվյալ գյուղը չի՞ տեղափոխվել ուրիշ տեղից, երբ և ինչու՞։

7. Ի՞նչ թաղերի է բաժանված գյուղը. ինչից է առաջ եկել այդ բաժանումը, չի՞ն բնակվում արդյոք միևնույն թաղի մեջ իրար արյունակից ընտանիքներ։ Ի՞նչպես է մի թաղը վերաբերվում մյուս թաղին։

8. Գյուղի և նրա թաղերի անունների տեղական բացատրությունը։ Չի՞ն փոխվել այդ անունները. եթե փոխվել են, երբ և ինչու՞։ Գյուղի մերձավոր վայրերի (ձորերի, լեռների, պուրակների) անունները և նրանց բացատրությունը։ Եթե գյուղը կալվածատիրական էր (օրինակ, մելիքապատկան), գյուղի որ մասումն էր տեղավորվում կալվածատիրոջ տունը։ Գյուղի որ մասումն էին տեղավորվում հարուստ վաճառականների տները, որտեղ եկեղեցին։

9. Գյուղի մեջ որտեղ էր և այժմ որտեղ է տեղավորված շուկան և հրապարակը, արհեստանոցները և առևտրական խանութները (ցրի՞վ, թե շարք-շարք)։

10. Տնտեսական շենքերն ու կալերը տեղավորվո՞ւմ են բնակարաններին կի՞ց, թե առանձին, գյուղից դուրս։

11. Գերեզմանատների տեղագրությունը։ Կա՞ն տոհմային գերեզմանոցներ։

12. Ջրի մատակարարումը։ Աղբյուրների դասավորությունը։

13. Տվյալ գյուղի և նրա շրջակայքի մասին պատմական տեղեկություններ և ավանդություններ։

14. Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում գյուղում շենքերի բնույթի և նրա դասավորության մեջ սովետական կարգեր հաստատվելուց հետո, մանավանդ կոլխոզային շինարարության հետևանքով։

2. Շ Ե Ն Ք Ե Ր

1. Բնակարանների հին տիպը—այրեր, գետնափոր, կիսագետնափոր, գետնի երեսին, փայտաշեն, քարաշեն, ադյուսե (հին, թե թրծած), ցցերի վրա և այլն։ Միհարկանի, թե երկհարկանի։ Բնակարանի կազմը՝ մի սենյակ, թե մի քանի, նախասենյակո՞վ, թե առանց նախասենյակի, պատշգամբով, թե առանց պատշգամբի։ Փողանով (կորիդորով)։ Բոնրատան և մառանի դասավորությունը։ Մուտքը մեկ, թե մի քանի, աշխարհի ո՞ր կողմն ուղղված։ Գծել բնակարանի պլանը։

2. Գլխավոր սենյակի, «տան» պլանը, պատերի փոխադարձ չափերը և շարվածքի եղանակը։ Առաստաղը, նրա կառուցվածքը։ Նատած է այո՞ւներին, թե պատերի վրա։ Լուսամուտը առաստաղի՞ (երդիկ), թե պատերի մեջ։ Կառուցը հարթ, երկթե՞ք, թե գմբեթավոր։ Կառուցի ծածկը։ Անձրևի ջրի տեղերը, սենյակի մեջի պատրհանները, ծալքատեղը։ Բոնրի տեղը և նրա կառուցումը։ Օջախի տեղը։ Կա՞ բուխարի. ո՞ր պատի մեջ։ Կա՞ լողանալու հատուկ անկյուն։ Սաքու։ Տան առջևի պատշգամբը և նրա կառուցվածքը։ Դուռը, դռան փակը։ Տան բոլոր մասերի տեղական անունները։

3. Ձկա՞ արդյոք բնակարանում առանձին գետեղարան կանանց, ամուսնացած տղաների, հյուրերի համար։

4. Բոնրատան և մառանի կառուցվածքը և նրանց կապը «տան» հետ։

5. Տան կառուցման տեխնիկան—որմնադրությունը, հյուսնությունը, քարտաշությունը։ Տերն իր ընտանիքո՞վ է կառուցում, թե ուրիշների (ո՞ւմ) օգնությամբ։ Ո՞ր մասերի համար դիմում են հատուկ վարպետների։ Շենքի ներքին տարածության ընդարձակումը։

6. Գոմ և ախոռ։ «Տնից» առանձի՞ն են, թե նրա հետ միացած։ Առաջին դեպքում որտեղ են՞ նրանք գետեղվում, միևնույն բակո՞ւմ, թե հեռու, դյուղից դուրս։ Եթե միացած են, ինչպես են կապվում «տան» հետ։ Գոմի կառուցվածքը (պատեր, առաստաղ, անասունի համար բաժանմունքներ)։ Կա՞ արդյոք գոմի օդա, նրա կառուցվածքը և տարվա ո՞ր եղանակին գործածվելը։ Կա՞ արդյոք գոնաղի առանձին «օդա»՝ «Սրահ»—միջանցք (փողան)։

7. Եթե բնակարանը պատուհաններ ունի, նրանց ձևը և ցանցը։

8. Մարագ։ Նրա դեռևս վայրը և կառուցվածքը։

9. Ստոանոց։

10. Բակ։ Բնց, թե փակ։ Վերջին դեպքում ինչից է շինված ցանկապատը։ Դարբասի դուռը. նրա բացվելու և փակվելու սարքավորումը։

11. Տներն ունեն արդյոք արտաքնոցներ։ Եթե չունեն, ապա գյուղացիք որտեղ են կատարում իրենց բնական պետքերը։

12. Ի՞նչ տարբերություններ կան չքավոր, միջակ և հարուստ տնտեսությունների բնակարանների և տնտեսական շենքերի ձևի ու կառուցվածքի մեջ։

13. Շինության համար «բախտավոր» և «անբախտ» տեղեր։ Ի՞նչպես էին ընտրում «բախտավոր» տեղը։ Եթե շինքը «անբախտ» դուրս եկավ, փոխադրում էին նրան մի այլ տեղ։ Ի՞նչ ծեսեր էին կատարում կառուցման միջոցին։

14. Չկան արդյոք ավանդություններ հիմքի մեջ կենդանի մարդ թաղելու կամ պատի հետ կենդանի մարդ շարելու մասին շենքը (տուն, աշտարակ, կամուրջ) կառուցելու ժամանակ։

15. Կար տան «բարեքաշիր» պահող ոգի. որտեղ էր նա ապրում. նրա արտաքին տեսքը (օձ՝ որպես տանը բախտ բերող)։ Այդ ոգուն պաշտելու ձևերը. կապված չէին արդյոք օջախի կրակի հետ։ Նոր տուն անցնելիս տանում էին այնտեղ հին տունից կրակ. վերցնում էին կրակը մի ուրիշ, «բախտավոր» օջախից։

16. Ամերակ տների մեջ ապրող ոգիներ։

17. Գոմում ապրող ոգիներ. նրանց տեսքը. վերաբերմունքը դեպի կենդանիները։

18. Ջաղացների կառուցվածքը։ Ջաղացների սարքավորումը, մասերի անունները։ Ջաղացներում ապրող ոգիները։

19. Ի՞նչպես պետք էր ձեռք բերել շինքերում ապրող ոգիների բարի վերաբերմունքը կամ պաշտպանվել նրանց չարությունից։

20. Ի՞նչ ծեսեր էին կատարվում նոր տուն տեղափոխվելիս։ Հանդիսակատարություններ — հրավիրով, ինքնակամ շնորհավորանքով։ Ի՞նչպես էին վերաբերվում բարեկամներն ու հարևանները։ Տունը չար աչքից պահելու հնարները։

21. Շենքերի առողջապահական պայմանները։

22. Կան արդյոք հին տների մնացորդներ, որ սուրբ էին համարվում և որոշ դեպքերում որպես ուխտատեղի էին ծառայում («հին օջախներ»)։ Կան հին տների մասեր (այուն, այան խոյակ), որոնց հրաշագործ զորություն էր վերագրվում։

23. Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել շենքերի ձևերի և կառուցման եղանակների մեջ հին շենքերի համեմատությամբ, դեռ սովետացումից առաջ։ Ո՞րտեղից են մտել այդ նորամուծությունները։

24. Ի՞նչ նորամուծություններ են մտել սովետական օրով առավելապես նոր, կոլխոզային շինարարության առնչությամբ։

3. ԲՆԱԿԱՐԱՆԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ, ԱՄԱՆՆԵՐ

1. Ի՞նչ կահկարասիք է գործածվում գլխատ և այլ իրեր պահելու, ամանները դարսելու, նստելու, ճաշելու, քնելու համար։ Ո՞վ է շինում այդ կահույքը։ Նրանցից յուրաքանչյուրի գործածության եղանակը (ինչպես են ամանները շարում դարակի վրա, պատրհանում, գլխատը պահում անգուկի մեջ, ինչպես են նըստում, պառկում ...)։ Եթե հատուկ կահույք չկա, ինչ են փոխում գետնին, ինչ են շարում (բարձ, մուխաքա, նևրքնակ) և ինչ ձևով։ Ինչպես են պահում անկողինները և ոբտեղ։

2. Տան ջեռուցումը — թոնրի, օջախի, բուխարու օգնությամբ։ Բուրսի — այդ ձևերը հնուց են եղել, թե նորամուծ են։ Վառելանյութ (փայտ, աթար. ոբտեղ են պահում)։ Ո՞ւմ պարտականությունն է կրակը վառ պահելը։ Ինչպես էին կրակ հանում մինչև լուցկու գործածությունը։

3. Լուսավորության պարագաներ — ճրագ, ճրագկալ, մոմ, մոմակալ։ Լուսավորության վառելանյութ — տան ոբ մասումն էին գետեղում ճրագը։

4. Ամաններն — խոհանոցի, սեղանի. դանակ, դգալ, պատառաքաղ։ Ամանները ով է շինում, տանեցի՞ք, թե արհեստավորները։ Տեղակա՞ն են, թե դրսից (ոբտեղից) բերված։ Ամանների գործածելու և պահելու եղանակները։ Ե՞րբ էր համարվում ամանը պղծված և ինչպես էր «մաքրվում»։

5. Ինչպես էին զարդարվում դուռը, պատերը, լուսամուտները, բուխարին, օջախատեղը, պատրհանները ..., կահույքը, ամանները։ Նախշեր։

6. Ի՞նչ տարբերություն կա չքավոր և հարուստ տնտեսության սարքավորման ու կահավորման մեջ։

7. Կահավորման և սարքավորման (§ 1-ից մինչև § 5) իրերի ու պարագաների և նրանց մասերի տեղական անուններըւ

8. Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել կահավորման և սարքավորման մեջ վերջին հարյուրամյակում և հատկապես սովետական օրով։ Ի՞նչ ճանապարհով են մտնում այդ նորաձևությունները։

4. ՁԳԵՑՍ ԵՎ ՁԱՐԴԱՐԱՆՔ

1. Ի՞նչ տեսակ գգեստ են հագնում տղամարդիկ և կանայք, երեխաները, երիտասարդները (ամուսնանալուց առաջ և հետո), հասակավորները, ծերունիները և պառավները։ Ի՞նչ տարբերություն կա չքավորի և հարուստի առօրյա և տոնական գգեստի մեջ։ Հատուկ գգեստներ՝ պարապմունքի հետ շաղկապված (դարբնի, բրուտի, ոսկերչի ...)։

2. Տակի գգեստ (շապիկ, վարտիկ)։ վրայի գգեստ (անթաթի, իշլիկ, ելակ, արխալուխ, չուխա...)։ դրսի գգեստ (մուշտակ, քուրք, քազախիկ, յափնջի, չարսավ, չաղրա ...)։ գոտի (քամար)։

3. Գուլպա և ոտնաման (տրեխ, չմուշկ, փափուճ, սախկ, սոլ, քոշ, չարուխ ...)։

4. Գլխի հարդարանք (գդակ, քոլոզ ..., կոտիկ, պալի ...)։ Շալեր։ Ո՞րչափ հաճախ են նորոգում գլխի հարդարանքը։

5. Ի՞նչ զարդարանքներ, գգեստներ, կոշիկներ են պատահում, որ գերդաստանի անդամների ընդհանուր գործածության առարկաներ են՝ կանանց և տղամարդկանց մեջ։

§ 1—§ 4—մանրամասն նկարագրություն լուսանկարներով, գծագրություններով, ձևերով (անդազաններով) լրացված, նշելով նյութը, չափերը, կարի եղանակը։ Եղերի ամրացման եղանակը, կոճկելու և մարմնի վրա պահելու (խոնջան ...) հարմարեցումները, սիրած գույները, նախշերի տեսակները։ Ո՞վ է կարում գգեստի այս կամ այն մասը։ Ե՞րբ են հագնում (ամուսնանալուց առաջ, քե հետո, հյուր գնալիս, հեռավոր ճամբա մեկնելիս, ամառը, ձմեռը, տոներին, սուգի ժամանակ ...)։ Այս ամենն ըստ սեռի, հասակի, պարապմունքի, դասակարգի, ազգությանւ Շրջանի որ գյուղերում գգեստը սովորականից տարբերվում է, ինչո՞ւ։

6. Մարմնի զարդարումը։ Մազերը (գլխի, հոնքերի, բեղերի, մորուքի) խուզելու, սանրելու, ներկելու, հյուսելու ձևերը։ Մազերն աճեցնելու, ամրացնելու, երկարացնելու միջոցները։ Ավելորդ

մաղերը հեռացնելը (պոկելով ...)։ Մարմին նախշելը (տատու), դրոշմելը, դաջելը։ Կաշին ներկելը (ինչ նպատակով. առողջապահական), երես սպիտակացնելը, սունդուրելը, աչքերը դեղ անելը (նյութեր. դեղերի անուններ, ամաններ)։ Ատամ, եղունգ ներկելը (հինա դնելը)։ Ականջ, քիթ, շրթունք ծակելը (օղեր, խզմա— մեհիկ անցկացնելը), ով է ծակում։

7. Շարժական զարդեր—գլխի, վզի, կրծքի, բազուկների, ձեռքի, մատների, ոտների, կռնակի, մեջքի, զգեստի մասերն իրար հետ պահելու կեռիկներ—չանդալներ և այլն։ Ո՞ր տեղն է գործածում, որ հասակում։ Ո՞ւմ ձեռքով և որտեղ են շինվում այդ զարդերը և ինչ նյութից։ Ձին անցնում մատանգաթաթ, մորից միայն աղջիկներին։

8. Ձէ՞ին վերագրում զգեստի որոշ մասերին և զարդերի որոշ տեսակներին հմայելու և կախարդելու ուժ (չար աչքից պահելու, որդեծնության նպաստելու, ամուսնու սերը ամուր պահելու...)։ Եկեղեցու ազդեցությունը այդ տեսակ զարդերի վրա (խաչեր մատանիքներով և առանց մատանիքների, օրհնած մատանի...)։

9. Զգեստի և զարդարանքի առողջապահական նշանակությունը։ Մարմնի պաշտպանումը շոգից, ցրտից և այլն, օձելով, ներկելով, տրորելով, մաժելով և այլն։

10. Մարմնի առողջապահությունը։ Լվացվելը, լողանալը։ Ո՞րչափ հաճախ է ձեռմակոցները փոխվում (ձեռմակոցների լվանալը, ինչպես (որտեղ, ինչով)։ Անկողինները ձեռմակոցն ունեն։

11. Զգեստների ու զարդերի և նրանց մասերի անունները։ Կարի, նախշերի տեսակների անունները։ Հագնելու, հանելու, գործածելու գործողությունների հետ կապված անունները։

12. Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել հին զգեստի և զարդարանքի մեջ վերջին ժամանակներս։ Ո՞ւմ զգեստն ու զարդարանքը ավելի շուտ է փոխվել—տղամարդկանց, թե կանանց, որ խումբ։ Զգեստի որ մասերն ավելի արագ տեղ են տվել նորաձևություններին։ Ո՞րտեղից են մտել այդ նորաձևությունները և ո՞ւմ միջոցով։ Սովետական օրով տեղի ունեցած փոփոխությունների ընդհանուր բնույթն ու ուղղությունը։

5. ԿԵՐԱԿՈՒՐ ԵՎ ԽՄԻՉՔ

1. Ի՞նչ տեսակ կերակուր է ավելի տարածված տեղում— բուսեղեն, կաթնեղեն, մսեղեն, թե ձկնեղեն։ Ինչով է այդ բա-

ցատրվում։ Կապ չունի դա տարվա եղանակների հետ։

2. Ցորեն և ալյուր պահելու տեղերն ու պարագաները։ Հաց—ցորենի, գարու, եգիպտացորենի, խառը, թթխմորով և առանց թթխմորի։ Ի՞նչպես է պատրաստվում թթխմորը։ Թխելու բոլոր պրոցեսները և նրանց ժամանակ գործածվող պարագաները։ Հացի ձևը—լավաշ (ինչ տեսակի), բոմբի (պռոշ), երկար, կլոր և այլն։ Ո՞րտեղ են թխում—փոռում, փռանը, հնոցում, սաջի վրա։ Ո՞րչափ հաճախ—ամեն օր, մի քանի օրը մեկ անգամ, ուշ-ուշ։ Ո՞վքեր են թխում—կանայք, տղամարդիկ, հատուկ հացթուխներ։ Ո՞րտեղ են նրանք թխում։ Հասարակական փուռերի տարածվելը սովետական օրով և նրանց աղդեցությունը մնայնի ռեժիմի վրա։ Ո՞րտեղ և ինչպես են պահում թխած հացը։ Ի՞նչպես են ուտում—առաջուց բրչելով, կտրատելով, ծալելով, կերակրի մեջ բրդելով, մեջը ուտելիք փաթաթելով . . .։

3. Ծխական և տոնական հացեր և թխվածքներ (գաթա), խորիզով հացեր։ Ի՞նչպես են վերաբերվում հացահատիկին, ալյուրին, թխած հացին։ Աղոթքներ հաց թխելիս՝ սկզբում և վերջում։ Հարևանին կամ օտարականին թաժա հաց տալու սովորությունը։

4. Ջավար և բլղուր։ Պատրաստելու եղանակները (սանդերի տեսակները) և պահելու ձևերը։ Նրանցից և նրանցով պատրաստված կերակուրները։ Ցորենի այլ ձևով գործածելը (կորկոտ, փոխինդ, նիշաստա. ինչ առիթներով)։ Հաճար, կորեկ։ Եգիպտացորեն և նրա գործածելու ձևերը։ Բրինձ. որտեղից է բրինձ ստացվում. բրնձով պատրաստած կերակուրները և նրանց պատրաստելու եղանակները։

5. Բանջարեղեն։ Ո՞րչափ է տարածված գործածությունը՝ ամեն տեսակ կանաչեղենի։ Վայրի բանջարեղեն. որտեղ, երբ և ովքեր են հավաքում։ Բանջարեղենը ինչպես է գործածվում։ Թարմ վիճակում (սխտոր ծեծիկ), ինչպես է պահվում (թարմ, չորացրած, թթու դրած, աղ դրած, ինչի՞ մեջ և ինչ ձևով)։ Վարունգ, ձմերուկ, սեխ, դդում (եթե տեղում չի հասնում, որտեղից են բերվում)։

6. Պտուղ և ընդեղեն։ Տեղական պարտեզներում բուսնող պտուղներ և դրսից բերվող (որտեղից)։ Վայրի պտուղները—ովքեր են հավաքում՝ տղամարդիկ, կանայք, երեխաները...։ Պտուղն ու ընդեղենը ինչպես է գործածվում—հում, եփած, բոված...։ Ի՞նչպես են ձմերը պահում խաղողը և այլ պտուղները։ Ի՞նչպես են

չորացնում (չամիչ, չիր, ալանի), մուրաբա, պաստեղ պատրաստում։ Գահածեռների պատրաստության տարածվելը վերջին ժամանակներում։ Դործարանների աղդեցությունը, ժանավանդ սովետական օրով։ Արդյոք արդեք չկար որոշ ժամանակից առաջ այս կամ այն պտուղն ուտելու (խաղողը, խնձորը)։ Ինչով էր բացատրվում այդ արգելքը։

7. Ձրթելու սերմեր—արևածաղկի, ձմերուկի, սեխի, դդումի։

8. Միս։ Ո՞ր կենդանու միսն ավելի է գործածվում (տավարի, ոչխարի, թռչունի) և որչափ հաճախ։ Ո՞ր կենդանու միսը արգելվում է ուտել և ինչու, կենդանու մսի որ մասը չեն ուտում և ինչու։ Ո՞ր մասերն են համարվում ավելի պատվավոր։ Ինչպես են բաժանվում ընտանիքի անդամների և հյուրերի մեջ առանձին մասերը. որ մասն ում է տրվում։ Կենդանու մսի որ մասը արգելվում է տալ կանանց, մանավորապես հղի կանանց, աղջիկներին, երեխաներին։ Ինչպես է պատրաստվում միսը—խորովել, եփել, տապակել, պտուղների և բանջարների մեջ ձեծած փաթաթելը (տոլմաները)։ Միս պահելու եղանակները—չորացնելը, աղ դնելը, դավուրմա, ապուխտ, երշիկ...։

9. Ձու. հավի, բադի, սագի և այլ թռչունների։ Ինչպես են գործածվում—հում, եփած, որպես ձվաձեղ (տեսակները)։

10. Ինչ տեսակ ձկնեղեն են ուտում։ Տեղական և դրսից (որտեղից և ինչ ձևով—թարմ, չորացրած, ապխտած, աղ դրած) բերած ձկնեղեն։ Ձավիարի գործածությունը։ Ուտում են արդյոք խեցգետին, ոստրե։

11. Կաթ ու կաթնեղեն։ Կաթնեղենի տեսակները. նրանց գործածելու և պահելու եղանակները։ Կաթն ուրիշին փոխ տալու հետ կապված սովորություններ։ Կաթի չափերը։ Կաթով ընկերակցելու ձևերը («խաթր»)։ Կաթն ու կաթնեղենը տեղափոխելու ձևերն ու պարագաները (թուլուխ, տիկ...)։ Սովետական օրով ժառանգ կատարելագործությունները։ Կոլխոզների և կոոպերատիվների դերը։ Ինչպես է աղդում գործարանային կաթնատնտեսությունը անասնի կաթնատնտեսության վրա։

12. Աղ։ որտեղից է նա ձեռք բերվում։ Ինչպես են նրան ձեձում, աղում։ Աղ պահելու ամաններ՝ մեծ և փոքր։ Ո՞վ է շինում այդ ամանները, ինչ ձևի և ինչ նախշերով. նախշերին տրվող բացատրությունները։ Աղ գործածելու ձևերը։ Աղի հետ կապված նախապաշարումները (աղ թափելու, ուրիշներին հրամե-

ցնելու միջոցին, աղոթելու, ծննդաբերության և այլ ժամանակ աղ փոխ տալու սովորությունը (դիշերով)։

13. Ի՞նչ հավեմներ և քաղցրեղեններ են գործածում, առանձին և կերակրի մեջ։ Ո՞րտեղից են նրանք ստացվում։ Նրանց գործածելու և պահելու եղանակները։

14. Ո՞ւմ պարտականությունն է կերակուր պատրաստելը։ Ընտանիքի այլ անդամների մասնակցությունը (աղջիկների, նորահարսների, տղամարդկանց)։ Ի՞նչ կերակուրներ են պատրաստում բացառապես կամ մեծ մասամբ տղամարդիկ։

15. Ի՞նչ խմիչքներ (ջինի, օղի, գարեջուր, շարբաթ ...) են գործածում, ինչի՞ց և ինչո՞վ պատրաստված (պատրաստելու եղանակը, գործածվող պարագաները)։ Պահելու եղանակները, գործածելու ձևը և ամանները (գավաթ, փարչ, թաս—կիխա, եղջյուր ...)։ Հյուրասիրության միջոցին պահպանվող ձևերը։ Կենացը, հոգու թասը. (չի՞ն թափում վերջին դեպքում մի մասը հացի վրա, գետնին, կերեզմանի վրա, և այլն)։ Գոյություն ունի՞ հարբեցողություն և ո՞ւմ մեջ. ինչպես են վերաբերվում հարբեցողներին և հարբածներին։

16. Սովորություն կա՞ կերակրի կամ խմիչքի մի մասը թողնելու և ինչո՞ւ։

17. Օրական քանի՞ նվագ են ուտում։ Այդ նվագների ժամերը և անունները (ակռասա կամ կյավալդի, ճաշ, խրամենց, ընթրիս, պաշիվ՝ Շատախում։ Սարախաբնվան, դուշլուղվան, ցորեկվան, էտընքվան, իրիկվան և յասըլըղի՝ Ախալքալաքում)։ Ի՞նչ կերակուրներից և խմիչքից է բաղկացած յուրաքանչյուրը։ Լի և ոտն օրերի (նոր տարվա, Թաթախման, զատկի), ծիսական (հարսանիքի, հոգեհացի) կերակուրները։ Կանայք և երեխաները ուտում են տղամարդկանց հետ միասի՞ն, թե առանձին (նաև հյուրերի ժամանակ), ընդհանո՞ւր, թե առանձին ամաններից, ընդհանո՞ւր, թե առանձին գդալներով։

18. Վաճառելի կերակուրների պատրաստումը (խաշ, տրժվըժիկ)։ Ո՞վքեր են պատրաստում, ո՞րտեղ (բացօթյա, հրապարակում, խանութում)։ Կա՞ն հատուկ ճաշարաններ (նրանց տիպը), թեյատներ, կայֆատներ, գինետներ։ Ո՞վքեր են նրանցից օգտվում։ Սովետական օրով առաջ եկած փոփոխությունները (ընդհանուր հասարակական, հատուկ բանվորական, կոլխոզային ճաշարաններ, թեյատներ)։ Ժողովրդական սննդի նոր միջոցառումների ազդեցությունը նոր կենցաղի վրա։

19. Ծխախոտ։ Ո՞րչափ տարածված է ծխելը, ծխախոտի գործածությունը. ում մեջ (տղամարդկանց, կանանց, հասակավորների)։ Ծխախոտի և ծխախոտի տեսակները. որտեղից են նրանք ստացվում։ Ծխելու եղանակները—չիբուխ, գալյան, գլանակ։ Ծխախոտի գործածությունը այժմ ավելի տարածվում է, քե պակասում։

20. Աշխատանք—օգուտ. որչափ տարածված է նրա գործածությունը։ Այլ թմրեցուցիչ նյութեր։

21. Ծամոն։ Ո՞րտեղից է ստացվում, ովքեր են գործածում. նրանց տեսակները։

22. Բոլոր կերակուրների, խմիչքների ու նրանց գործածության հետ կապված պարապանների և անոթների, ինչպես և գործողությունների տեղական անունները։

23. Հացկերույթներին երգվող երգերը։

IV. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՏՈՀՄ ԵՎ ԸՆՏԱՆԻՔ

1. Տոհմական կազմակերպության հետացորդները։ Ի՞նչ «ազգեր» են ապրում գյուղում. եթե գյուղը տոհմական անուն է կրում, արդյոք նա մեկ «ազգից» է կազմված։ Մի թաղում ապրողները արդյոք պատկանում են մի «ազգի»։

2. Կան արդյոք տոհմական վարելահողեր, արոտատեղեր, անտառներ, ջաղացներ, դարբնոցներ, թոնիրներ, գերեզմանատներ և այլն։

3. Տոհմական վրիժառություն. որչափ նա տարածված է եղել. պահպանվել են նրա հետացորդները։ Ո՞ւմ վրա էր ընկնում վրիժառության պարտականությունը։ Արյան երդումներին հաղորդելու եղանակները։

4. Տոհմական փոխադարձ օգնությունը տուն կառուցելիս, դաշտային աշխատանքներում, անասնապահության, անային աշխատանքների մեջ, ինչպես և տարերային պատահարների (հրդեհ, հեղեղում, երկրաշարժ, անասունի համաճարակ) ժամանակ։

5. Տոհմական և ընտանեական դերեզմանատներ։ Արդյոք կա մեռածին հայրենի գյուղը տեղափոխելու և աղղականների մոտ թաղելու սովորություն։

6. Տոհմական պաշտամունք։ Տոհմական սրբեր, ուխտա-

տեղիներ, պուրակներ, մատուռներ, եկեղեցիներ։ Տոհմական տոներ, տոհմական մատաղներ։

7. Տոհմական հերոսների մասին ավանդություններ։

8. Տոտեմիզմի հետքեր։ Ի՞նչ տոհմեր և ընտանիքներ չէին սպանում այս կամ այն կենդանուն՝ օձ, արջ, նապաստակ և այլն, չէին զործածում նրանց մորթիները, և ինչու՞ չէին ուտում նրանց միսը (մինչդեռ այդ միսն ուրիշ տեղացիք ուտում էին), չէին ուտում մսի որոշ մասը (սիրտը, ոտքը, թևը) և ինչու՞։ Ավանդություններ։

9. Ջոն պատմում արդյոք, թե այս-ինչ ընտանիքը կրթել է կամ որդեգրել է որևէ կենդանու (գայլին, աղվեսին, չախկալին) և ինչ նպատակով (օրինակ՝ որ իրենց ընտանիքին չվնասի)։ Չէ՞ին համարում այնուհետև, թե այդ կենդանին իրենց ազգական է, ուստի և չպիտի նրան սպաննեն, և թե մյուս կողմից՝ կենդանին էլ ձեռք չի տալու այդ ընտանիքի անդամներին և անասուներին։

10. Ջհան արդյոք կենդանու անունից կազմված ազգանուններ և չե՞ն համարում այդ ընտանիքները այդ կենդանիներին իրենց ազգական, ուստի չէին սպանում, չէին ուտում։

11. Ջհան ազգանուններ՝ ծառերի, թփերի և առհասարակ բույսերի անուններից ծագած. չէ՞ր արգելված այդ ընտանիքներին կտրել այդ ծառը, թուփը, բույսը և ուտել նրա պտուղները։ Ավանդություններ։

12. Տոհմական և ընտանեկան դաջվածքներ և այլ նշաններ (կենդանական կամ բուսական), որ դրոշմվում են անասունի վրա, տան դռներին, գերեզմանաքարերին, ծառերին։ Նրանց ձևերը և պատմություններ նրանց ծագման մասին։

13. Ընտանեկան հավատք։ Նրա կազմը և մեծությունը։ (Հոր հետ ապրում են միայն որդիները, թե նաև կրտսեր եղբայրները, քոռները, նահապետական պերդաստան)։

14. Արյունակցության, ինչպես և խնամության որ աստիճաններն են ճանաչվում. այդ աստիճանների անունները։

15. Որդեգրություն (հոգեզավակ, հոգեորդի)։ Որդեգրելու ձևերը (ծննդաբերության նմանեցումը, կնոջ սրինքին ձեռք տալը, որդեգրվողին կնոջ շալակի միջով անցկացնելը, միատեղ կերակրումը, արյուններն իրար խառնումը։ Որդեգրությունը որպես միջոց սերունդը մահից կամ հիվանդությունից փրկելու. որչափ հաճախ է պատահում անփեսայությունը և որ դեպքերում։ Ընդ-

փեսային ինչ անուն են տալիս։ Ի՞նչ իրավունքներ է վայելում անփեսան։ Տնփեսայությունը հավասար է որդեգրության։

16. Տան մեծը (տղամարդ և կին)։ Տան մեջ վարչական իշխանության բաժանումը։ Ինչպես էր անցնում մեծի իշխանությունը մեկից մյուսին։ Կարող էր տան մեծը զրկվել իր իշխանությունից և ինչպիսի դեպքերում։ Ի՞նչ պատիվներ և հարգանքի արտաքին ինչ նշաններ էին ցույց տալիս մեծին (հորը, մորը, մեծ եղբորը)։ Առանձին անդամների դրությունը ընտանեական համայնքի մեջ, նրանց իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի բաժանումը նրանց մեջ։

17. Ի՞նչ անուններ են տալիս ընտանիքի անդամները, ինչպես և խնամիները իրար հետ եղած ժամանակ, օտարների ներկայությամբ, հիշվածի բացակայության միջոցին (մարդը կնոջը, կինը մարդուն, հայրը տղաներին, աղջիկներին, հարսներին, թոռներին և սրանք հորը, նույնը մորը, քեռին իր քրոջ որդուն և ընդհակառակը, անները, զոքանչը փեսային և ընդհակառակը...)։

18. Հարգանք դեպի ծերունիները. ինչով էր դա արտահայտվում։ Արդյոք ծերունիները չէին բնակվում երիտասարդներից անջատ։ Ո՞րչափ էին մասնակցում գյուղատնտեսական աշխատանքներին (ինչպիսի)։ Ծերունիների հատուկ զբաղմունքները։ Ձի՞ն պահպանվել ավանդություններ հնում ծերունիներին ոչնչացնելու մասին։ Ի՞նչպես էին վերաբերվում աշխատելու ընդունակությունը կորցրած ծերունիներին։

19. Կնոջ դրությունը ընտանիքում—աղջիկ, հարսնացու, նորահարսի, մայր դարձածի, պառավի։

20. Կամ արդյոք բազմակնություն. երկրորդ, երրորդ կնոջ դրությունն ընտանիքում, նրա իրավունքներն ու պարտականությունները։ Եթե կրոնը թույլ չէր տալիս բազմակնություն, լինում էին դեպքեր երկրորդ կին առն բերելու, ծրպիսի դեպքերում և ինչ պայմաններով։ Ինչպես էր հասարակությունը վերաբերվում այդպիսի դեպքերին։ Այդպիսի ամուսնությունից ծնված երեխաների դրությունը։

21. Ի՞նչ հարաբերություն կար խորթ հոր, խորթ մոր և խորթ զավակների միջև, համահայր և համամայր եղբայրների և քույրերի միջև։

22. Այրի կնոջ դրությունը զանազան հասակներում։ Ո՞ւմ մոտ էր մնում այրիացած ջահել կինը։ Ո՞ւմ էին պատկանում երեխաները։ Եթե այրին ամուսնանում էր, ով էր հոգում նրա

հարսանիքի ծախքերն ու կատարում հարսանիքի ժամանակ տան մեծի դերը, սկեսուրը, թե հայրը։ Պահանջվում էր արդյոք ամուսնու ծնողների և ազգականների համաձայնությունը։

23. Կան ավանդություններ, որ հանգուցյալի եղբայրը կամ նույն գերդաստանից մեկը ամուսնացել է այրի կնոջ հետ (լևիրատ)։ Պատահել են դեպքեր, որ ամուսինը մահանալիս կտակած լիներ կամ գեթ ցանկություն հայտնած, որ կինը այս-ինչի հետ ամուսնանա կամ ընդհակառակը։

24. Ի՞նչպես էին վերաբերվում կնոջ կամ մարդու դավաճանությանը։ Պատիժներ դավաճանության համար։ Տարածված էր արդյոք պոռնկությունը. պատճառները։ Վերաբերմունքը դեպի պոռնիկները։

25. Որչափ հաճախակի էին ամուսինների բաժանվելու դեպքերը։ Բաժանման պատճառները։ Ո՞ւմ մոտ էին մնում երեխաները ծնողների բաժանվելու դեպքում։

26. Մանուկների դաստիարակությունը։ Նրան վերաբերմունքն ունեին դեպի տղաներն ու աղջիկները։ Ի՞նչպես էին վերաբերվում անդրանիկին (առջնեկին)։ Ի՞նչպես էին ընտելացնում երեխաներին այս կամ այն աշխատանքին և ո՞ր հասակից։

27. Եղել են դեպքեր ուրիշից երեխա գողանալու, եթե իրենցը մեռնում է, կամ ընտանիքների միջև կայացած համաձայնությամբ երեխաներ փոխելու։

28. «Դայակության» (աթաալըղ) սովորությունը գոյություն ունե՞ր արդյոք, կամ կան ավանդություններ դրա գոյության մասին (երեխաներին ուրիշ ընտանիքում դաստիարակելու հանձնելը)։ Ի՞նչպես են բացատրում այդ սովորությունը։

29. Պատանու չափահասության ժամանակ չի՞ կատարվում որևէ ծես։ Թուլակազմ և աշխատանքի անընդունակ երիտասարդներին բախտի բերմունքին թողնելու կամ սպանելու մասին որևէ ավանդություն կա։

30. Ո՞ւմ էր պատկանում անչափահաս որբերին խնամելու պարտականությունը, ա) եթե կենդանի էր մնացած լինում երիտասարդ մայրը, բ) եթե մնացած էին լինում միաժամանակ պապը կամ չափահաս եղբայրները և չբաժանված հորեղբայրները, եթե որբերը չէին ունենում արական սեռին պատկանող ոչ մի մերձավոր չափահաս ազգական։ Ի՞նչպես էր ձևավորվում խնամակալությունը վկաների ներկայությամբ, գրավոր, թե հա-

փեսային ինչ անուն են տալիս։ Ի՞նչ իրավունքներ է վայելում անփեսան։ Տնփեսայությունը հավասար է որդեգրության։

16. Տան մեծը (տղամարդ և կին)։ Տան մեջ վարչական իշխանության բաժանումը։ Ինչպես էր անցնում մեծի իշխանությունը մեկից մյուսին։ Կարող էր տան մեծը զրկվել իր իշխանությունից և ինչպիսի դեպքերում։ Ի՞նչ պատիվներ և հարգանքի արտաքին ինչ նշաններ էին ցույց տալիս մեծին (հորը, մորը, մեծ եղբորը)։ Առանձին անդամների դրությունը ընտանեական համայնքի մեջ, նրանց իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի բաժանումը նրանց մեջ։

17. Ի՞նչ անուններ են տալիս ընտանիքի անդամները, ինչպես և խնամիները իրար հետ եղած ժամանակ, օտարների ներկայությամբ, հիշվածի բացակայության միջոցին (ամուրը կնոջը, կինը մարդուն, հայրը տղաներին, աղջիկներին, հարսներին, թոռներին և սրանք հորը, նույնը մորը, քեռին իր քրոջ որդուն և ընդհակառակը, աները, զոքանչը փեսային և ընդհակառակը...)։

18. Հարգանք դեպի ծերունիները. ինչով էր դա արտահայտվում։ Արդյոք ծերունիները չէին բնակվում երիտասարդներից անջատ։ Ո՞րչափ էին մասնակցում գյուղատնտեսական աշխատանքներին (ինչպիսի)։ Ծերունիների հատուկ զբաղմունքները։ Ջե՞ն պահպանվել ավանդություններ հնում ծերունիներին ոչնչացնելու մասին։ Ի՞նչպես էին վերաբերվում աշխատելու ընդունակությունը կորցրած ծերունիներին։

19. Կնոջ դրությունը ընտանիքում—աղջկա, հարսնացուի, նորահարսի, մայր դարձածի, պառավի։

20. Կամ արդյոք բազմակնություն. երկրորդ, երրորդ կնոջ դրությունն ընտանիքում, նրա իրավունքներն ու պարտականությունները։ Եթե կրոնը թույլ չէր տալիս բազմակնություն, լինում էին դեպքեր երկրորդ կին տուն բերելու, որպիսի դեպքերում և ինչ պայմաններով։ Ինչպես էր հասարակությունը վերաբերվում այդպիսի դեպքերին։ Այդպիսի ամուսնությունից ծնված երեխաների դրությունը։

21. Ի՞նչ հարաբերություն կար խորթ հոր, խորթ մոր և խորթ զավակների միջև, համահայր և համամայր եղբայրների և քույրերի միջև։

22. Այրի կնոջ դրությունը պառակներում։ Ո՞ւմ մոտ էր մնում այրիացած ջահել կինը։ Ո՞ւմ էին պատկանում երեխաները։ Եթե այրին ամուսնանում էր, ով էր հոգում նրա

հարսանիքի ծախքերն ու կատարում հարսանիքի ժամանակ տան մեծի դերը, սկեսուրը, թե հայրը։ Պահանջվում էր արդյոք ամուսնու ծնողների և ազգականների համաձայնությունը։

23. Կան ավանդություններ, որ հանգուցյալի եղբայրը կամ նույն գերդաստանից մեկը ամուսնացել է այրի կնոջ հետ (լեվիրատ)։ Պատահել են դեպքեր, որ ամուսինը մահանալիս կտակած լիներ կամ գեթ ցանկություն հայտնած, որ կինը այս-ինչի հետ ամուսնանա կամ ընդմիշտ որբևայրի մնա։

24. Ի՞նչպես էին վերաբերվում կնոջ կամ մարդու դավաճանությանը։ Պատիժներ դավաճանության համար։ Տարածված էր արդյոք պոռնկությունը. պատճառները։ Վերաբերմունքը դեպի պոռնիկները։

25. Որչա՞փ հաճախակի էին ամուսինների բաժանվելու դեպքերը։ Բաժանման պատճառները։ Ո՞ւմ մոտ էին մնում երեխաները ծնողների բաժանվելու դեպքում։

26. Մանուկների դաստիարակությունը։ Նույն վերաբերմունքն ունեին դեպի տղաներն ու աղջիկները։ Ի՞նչպես էին վերաբերվում անդրանիկին (առջնեկին)։ Ի՞նչպես էին ընտելացնում երեխաներին այս կամ այն աշխատանքին և ո՛ր հասակից։

27. Եղե՞լ են դեպքեր ուրիշից երեխա գողանալու, եթե իրենցը մեռնում է, կամ ընտանիքների միջև կայացած համաձայնությամբ երեխաներ փոխելու։

28. «Դայակության» (աթաալըղ) սովորությունը գոյություն ունե՞ր արդյոք, կամ կան ավանդություններ դրա գոյության մասին (երեխաներին ուրիշ ընտանիքում դաստիարակելու հանձնելը)։ Ի՞նչպես են բացատրում այդ սովորությունը։

29. Պատանու չափահասության ժամանակ չի՞ կատարվում որևէ ծես։ Թուլակազմ և աշխատանքի անընդունակ երիտասարդներին բախտի բերմունքին թողնելու կամ սպանելու մասին որևէ ավանդություն կա՞։

30. Ո՞ւմ էր պատկանում անչափահաս որբերին խնամելու պարտականությունը, ա) եթե կենդանի էր մնացած լինում երիտասարդ մայրը, բ) եթե մնացած էին լինում միաժամանակ պապը կամ չափահաս եղբայրները և չբաժանված հորեղբայրները, եթե որբերը չէին ունենում արական սեռին պատկանող ոչ մի մերձավոր չափահաս ազգական։ Ի՞նչպես էր ձևավորվում խնամակալությունը վկաների ներկայությամբ, գրավո՞ր, թե հա-

մայնքի արձանագրությամբ։ Ի՞նչ իրավունքներ էր ստանում խնամակալը որբերի անձնավորության նկատմամբ։

31. Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել ընտանիքի անդամների փոխհարաբերությունների մեջ սովետական օրով։

ա) ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՐՍԱՆԻՔ

1. Ի՞նչպիսի ժամանց, խաղեր և առհասարակ ուրիշներ կային, որոնք նպաստում էին երիտասարդների և աղջիկների ծանոթանալուն իրար հետ։ Ի՞նչ ձևեր էին ընդունում տղայի հետապնդելը աղջկան և աղջկա հետապնդելը տղային։

2. Ի՞նչ միջոցների էին դիմում աղջիկները տղաներին դուր գալու համար։ Ի՞նչպիսի կախարդական միջոցների էին դիմում, որ ուզած տղան կամ աղջիկը իրեն սիրի կամ ուրիշից հովանա։

3. Ամուսնությունը կատարվում էր տղայի և աղջկա ազատ ընտրությամբ։ Եթե ոչ, ապա ում կամքն էր վճռական դեր խաղում։ Տղայի համար աղջիկ ընտրելիս ինչ նկատառումներով էին ղեկավարվում։

4. Ո՞ր հասակում էին ամուսնացնում (առաջ և այժմ)։ Ի՞նչպես էին վերաբերվում ուշ ամուսնացողներին և ամուրիններին, պառաված աղջիկներին։ Եղել են դեպքեր, որ աղջիկը ուխտել է չամուսնանալ. ինչ առիթներով. այդպիսի աղջկա դրությունը։

5. Միևնույն տոհմի, միևնույն ազգի անհատների ամուսնության արգելումը (ենդոգամիա)։ Արդյոք ընդհակառակը, չէ՞ր գերադասվում ամուսնությունն ազգականի հետ (ենդոգամիա)։

6. Ո՞րչափ հաճախ էին տեղի ունենում ամուսնություններ տարբեր ազգությունների կամ տարբեր կրոնների պատկանող անհատների միջև։ Ի՞նչպես էին վերաբերվում այդպիսի ամուսնություններին։

7. Մշտական և ժամանակավոր ամուսնություններ։ Նրանց ձևերը։

8. Առևանգելու (աղջիկ փախցնելու) սովորությունը. առիթները։ Եթե այդ սովորությունը վերացել է, չեն պահպանվել հարսանիքի ծեսերի մեջ որևէ հիշատակներ այդ սովորության երբեմնի գոյության մասին։ Ի՞նչպես էին վերջանում առևանգման դեպքերը։

9. Եղել են աղջիկ ծախելու դեպքեր։ Չեն պահպանվել հարսանիքի ծեսերի մեջ հնուց աղջիկ ծախելու սովորության հիշատակներ։

10. Մանկահասակներին, օրորոցի երեխաներին, նույնիսկ դեռ չծնվածների նշանելու դեպքեր. ինչ դրդապատճառներով։

11. Հարսանեկան ծեսերի գլխավոր սովորաժանութները, նրանց տեղական անունները (նշանդրեք, հարսնատես, տաշտադրեք ... հարս հանելը, պսակ, կանչ, դուրս հանել...) և բնութագրումը։

12. Խնամախոսություն։ Ո՞վքեր էին բանակցողները։ Խնամախոսության ձևակատարությունը։

13. Նշանդրեք։ Ի՞նչ էին տալիս նշան։ Ի՞նչ կարևորություն էր տալիս ժողովուրդը նշանդրեքին հարսանեկան ծեսերի մեջ։

14. Նշանդրեքից հետո ինչ հարաբերություններ էին ստեղծվում աղջկա և տղայի ընտանիքների միջև։ Արդյոք տղան կարող էր ազատ տեսնվել իր հարսնացուի հետ։ Եթե ոչ, ինչ պայմաններում թույլ էր տրվում։ Ո՞ւմ էր տրվում տղային մինչև պսակադրությունը պահել աղջկա հետ, և այդ դեպքում թույլ էր տրվում սեռական հարաբերությունը։

15. Տարվա ո՞ր ժամանակներին էին ամենից հաճախ հարսանիք անում։ Շաբաթվա ո՞ր օրերը։ Քանի՞ օր էր տևում։ Այդ օրերի տեղական անունները։

16. Պայմանագրում երկու կողմերի միջև ի՞նչ հարսանիքի ծախքերի և ի՞նչ աղջկան տալիք գույքի մասին։ Աղջկա օժիտը ինչի՞ց էր բաղկացած լինում։ Բալիս։ Աղգականների մասնակցությունը օժիտը պատրաստելու կամ քալիմը վճարելու մեջ։

17. Հարսանիքի պատրաստությունները։ Հաց թխելը։ Միս մորթելը։ Տան հարդարելը։ Փեսային և հարսին լողացնելը։ Փեսային ածիլելը։ Ուրբաթ պատրաստելը։ Հարսանեկան զգեստներ հագցնելը և այլ մանրամասնություններ։

18. Բավորի ընտրությունը և հրավիրումը։ Թոյրաշի փեսայի ընկերները (ազատներ, թագվորցիներ, մակարներ)։ Աղջկա ուղեկիցները (հարսնախոսներ, հարսնաքույր)։

19. Աղջկան և տղային եկեղեցի տանելը։ Ո՞վքեր էին գնում հարսին եկեղեցի տանելու։ Հարսին հագցնելը։ (Ո՞վ էր հագցնում, ո՞վ էր ձգում քողը)։ Հայրական տան օջախին հրաժեշտ տալը։ Աղջկան տանողների առջև դրվող արգելքները (ձևծ, քարկոծում, ճամբա կապելը, փրկանք պահանջելը...)։ Դրանից առաջ մեծաքանքներ հարսի և փեսայի ընտանիքներում։ Հանդիսավոր երթը եկեղեցի ուղևորվելիս։

20. Պսակադրությունը եկեղեցում։ Պսակվողների «կապվելուց» պաշտպանվելու միջոցները (կապելու եղանակները)։ Պսակադրությանն ովքեր էին ներկա գտնվում։ Չի պատահել, որ նորափեսային փոխարիներ ուրիշը կամ նրա գլեստի մի մասը (փափախը)։

21. Արդյոք գոյություն ունէ՞ր «Թոնրի պսակը»։ Ժողովուրդը ճանաչում էր այդ պսակի օրինականությունը։ Ի՞նչպես էր կատարվում այդ պսակադրությունը և ինչո՞վ էր տարբերվում եկեղեցականից։

22. Նորապսակների դարձը եկեղեցուց։ Նրանց դիմավորումը փեսայի տանը։ Կամ սովորություն նրանց ոտքի տակ մատաղ մորթելու (ոչխար, կրակ), տուն մտնելու միջոցին աման կոտրելու (սրա նպատակը), գլխներին դրամ, հատիկ, քաղցրեղեն ցանելու, ուսերին լավաշ ձգելու, քաղցրեղենով, հացով, կարագով դիմավորելու, նորահարսին ձեռքի վրա տուն ներս տանելու։ Ո՞րտեղ էր նստում «Թագավորը», որտեղ «Թագուհին»։

23. Հարսանեկան ճաշկերույթ։ Պսակադրության դիշերը Թուլլ էր տրվում առագաստ մտնել կանչ։ Հարսի «երեսատեսնուք»։ Նարոտ (ուրս) վայր ընկնելը։

24. Ո՞րտեղ և ովքեր էր պատրաստում առագաստը։ Աղջկան հարսնաքրոջ կողմից տրվող խրատները։ Կամ աղջկա կուսության, փեսայի առնական հաջողության ստուգումը։ Ի՞նչ էին անում, եթե աղջիկը կույս չէր լինում, ինչ էին անում, եթե տղան առնական ընդունակությունից զուրկ էր լինում։

25. Ի՞նչ նշաններով էին դուշակում ապագա ամուսնական կյանքի բախտավոր կամ անբախտ լինելը։ Ի՞նչ միջոցների էին դիմում վատ հետևանքներից ազատ մնալու համար։

26. Ինչո՞վ էր տարբերվում որբի, ապօրինի զավակի, այրի մարդու կամ այրի կնոջ հարսանիքը։

27. Տղայի և աղջկա ծնողների, քահանայի, քավորակնոջ, մերձավոր և հեռավոր ազգականների, հրավիրվածների դերն ու մասնակցությունը հարսանիքի յուրաքանչյուր մոմենտին։ Փեսային և հարսին, նրանց ծնողներին և ուրիշներին ամեն առիթով տրվող նվերները։

28. Հարսանիքի բոլոր մոմենտներին երգվող երգերը, տրվող օրհնանքները, բարեմաղթությունները։

29. Հարսանիքի հետ կապված ծախքերը։

30. Նորահարսի առաջին մանկակցությունը տնային աշխատանքներին (ջրի գնալը, սենյակ ավլելը...)։

31. Նորահարսի առաջին անգամ լողանալը։ Հայրական տուն առաջին անգամ գնալը և այնտեղից վերադառնալը։ Հաջորդ հաճախումները հայրական տուն։ Աղջկա ծնողների հարաբերությունները այնուհետև աղջկա հետ։ Փեսայի և դոքանչի ու աներոջ փոխադարձ հարաբերությունները։

32. Հարսանիքից հետո քառասունքին ինչ էր արգելվում նորապսակ ամուսիններից մեկին և մյուսին (ուրիշ ծննդկանի տուն գնալը...)։

33. Նորահարսի դրությունը նոր ընտանիքում, նրա պարտականությունները։ Ո՞ւմ անունը նա չպիտի տար տանը. ո՞ւմ հետ չէր կարող անմիջապես խոսել. ինչպես էր նրանց հետ խոսում։ Քանի՞ ժամանակ էր տևում այդ չխոսկանությունը։

34. Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել ամուսնության ծիսակատարություններում սովետական օրով։ Ո՞րչափ դեռ պահպանվել է եկեղեցական (քահանայի կամ մոլլայի մանակցությամբ) ամուսնությունը և ո՞ր խավերի մեջ։

Բ) ՏՂԱԲԵՐՔ ԵՎ ԿՆՈՒՆՔ, ՍՌԱՋԻՆ ՄԱՆԿԱՏԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Ձի՞ր կատարվում որևէ ծես առաջին դաշտանը (ամսականը) երևալիս։ Կինը չի՞ր համարվում անմաքուր դաշտանի ժամանակ։ Կապո՞ւմ էին հատուկ շոր դաշտանի ժամանակ։ Թո՞ւյլ էր տրվում սեռական հարաբերություններ այդ միջոցին և կա՞ր հակողություն սկեսուրի կամ տան ավագ հարսերի կողմից։ Ի՞նչ էին պատմում դաշտանի ժամանակ սեռական հարաբերությունից ծնունդ առած երեխայի մասին։

2. Ի՞նչպես էին վերաբերվում անդամալույծ կնոջը։ Ի՞նչ միջոցների էին դիմում զավակ, մանավորապես տղա զավակ ունենալու համար (աղոթք, ուխտագնացություն, արբի մոտ կատարվող ծեսեր, ծակերով անցնել, ֆալոսի վրա, կտեխի վրա նստելը...)։ Ձե՞ն պահպանվել ավանդություններ ծնված աղջիկների սպանության մասին։

3. Հղի կնոջ խնամատարությունը։ Նրա անունդը. ինչ կերակուրներ են համարվում այդ ժամանակ ամենից օգտակար, ինչ կերակուրներ վնասակար։ Ի՞նչ մարդկանց, կենդանիների և այլն հղի կինը պիտի խուսա տա նայելուց։

4. Հաճախակի էին լինում արհեստական վիժումների դեպքեր. դրդապատճառները՝ ո՞ւմ օգնությամբ և ինչ միջոցների էին դիմում այդ նպատակով։ Ինչպես էր հասարակությունը վերաբերվում «երեխա փչացնելուն»։

5. Ինչպես էին դուշակում՝ տղա է ծնվելու, թե աղջիկ։ Ինչպիսի միջոցներով էին փորձում ապահովել տղայի ծնունդը։

6. Ո՞րտեղ էր տեղի ունենում ծննդաբերությունը՝ ապրած տան մեջ, թե առանձին բնակարանում, անկողնի վրա, հատակին, ծղոտի, մաղի վրա...։ Ո՞վ էր օգնում ծննդաբերության ժամանակ (մայրը, տատմերը...)։ Ո՞վքեր էին ներկա գտնվում։ Ո՞վ չէր կարող ներկա գտնվել (ամուսինը, տղամարդիկ)։ Չէ՞ր արգելվում մտնել ծննդկանի տունը մեռածի իրերով, ակնեղենով և այլն։ Ծննդաբերությունը կատարվում էր պառկած, չոքած, թե կանգնած։

7. Չէին կատարվում հատուկ ծեսեր ծննդկանին «մաքրելու» համար։ Ինչ միջոցներով էին աշխատում պաշտպանել ծննդկանին չար ոգիների մերձենալուց (կրակ վառելը, գլխատակին դաշույն, շամփուր, սխտոր դնելը, շեմքին շղթա ձգելը, հրացանաձգությունն...)։

8. Ծննդաբերությունը հեշտացնելու և արագացնելու միջոցները—մեխանիկական (թափ տալը, ձեռքերը կախ տալը, դեղ տալը), կախարդական միջոցներով (հանգույցները քակելը, ջրի մյուս ափն անցած մարդու կամ ամուսնու փեշից, կամ գոտուց օձի բերանից ազատող մեկի փեշից ջուր խմեցնելը...)։

9. Ինչպես էին թաղում երկունքի կամ հղի ժամանակ մեռած կնոջը։

10. Ինչ ծեսեր էին կատարում երեխայի պորտը կտրելիս։ Ինչպես էին վարվում տղայի և աղջկա պորտի հետ։ Ինչ էին անում «ժանկան ընկերքը»։

11. Չի պահպանվել որևէ սովորություն կամ որևէ հիշողություն, որ կնոջ հղիության կամ ծննդաբերության ժամանակ նրա ամուսնուն արգելվելիս է եղել այս կամ այն կերակուրը ուտելը, այս կամ այն գործով պարապելը և այլն։ Կնոջ ծննդաբերությունը հեշտացնելու համար ամուսինը չի՞ր պառկում առանձին, նույնպես և ինքն էլ չէ՞ր ձևացնում՝ իբր թե երեխա է բերում (կուվադա)։ Կնոջ ապաքինելուց հետո չէ՞ր պառկում նաև ամուսինը և չէին խնամում նրան որպես ծննդկանի։

12. Արդյոք հայրը պիտի նորածին երեխային վերցներ իր

դիրկը՝ ցույց տալու համար, որ ճանաչում է նրան իր հարազատ զավակը։

13. Ի՞նչ անունդ էին տալիս ծննդկանին ազատվելուց հետո։ Ի՞նչ նվերներ էին բերում նրան (կերակուրները և այլն, «քարգան» Ախալքալաքում)։

14. Ծննդաբերությունից հետո քանի՞ օր անց ծննդկանը վեր էր կենում անկողնից, քանի՞ օրից անցնում էր աշխատանքի։ Ծառայությունքի շրջանում ի՞նչ տեսակ աշխատանքներ և ինչի՞ն ձեռք տալը նրան արգելվում էր։

15. Ձկայի՞ն արդյոք ծննդկանին հովանավորող ոգիներ։ Աղոթքներ, մատաղներ նրանց պատվին։ Ձեի՞ն օրհնում, «մաքրում» ծննդաբերությունից առաջ կամ ծննդաբերությունից հետո այն հողը, որտեղ կատարվում էր ծննդաբերությունը։ Աղոթք՝ ուղղված ջրին (աղբյուրին, գետակին) ծննդաբերությունից հետո։ Կա՞ր սովորություն նորածնին երեխային ազելու։ Դրա հետ կապված աղոթքները։ Լողացնելու, ժանավանդ առաջին անգամ լողացնելու միջոցին չարիքից ազատելու հնարները (ջրի մեջ պողպատ, փող, ածուխ ձգելը...)։ Կա՞ր սովորություն նորածնին կտուր բարձրացնելու և արևին ցույց տալու։ Այդ միջոցին արտասանվող բառերը։

16. Նորածին երեխայի համար ամենավտանգավոր օրերը (7-րդ, 10-րդ, 40-րդ)։

17. Եթե երեխաներն ընտանիքի մեջ մեռնում էին, «չէին մնում», ինչպես էին վարվում, որ նորածինն այդ դժբախտությունից փրկվի (երեխային կեղծ վաճառելը, երեխային իբր թե գողացնելը, գողացած ոգեստ կամ ցնցոտիներ, կամ մուրացած շորեր հագցնելը, երեխային «շուն», «գայլ» անուն տալը, տղային աղջկա անուն կամ այնպիսի անուն տալը, որով երեխաների ժահանալուն վերջ պիտի տրվի)։

18. Ի՞նչպես էին վարվում, երբ ընտանիքում միայն աղջիկներ էին ծնվում, որպեսզի հաջորդը տղա լինի։

19. Ձեի՞ն սպանում երկվորյակներից մեկին կամ չէի՞ն երկվորյակներին մեղաց պատիժ համարում։

20. Երեխային օրորոց դնելը։ Օրորոցի սարքը և առողջապահական պայմանները։ Ի՞նչ ձեսերով էին առաջին անգամ օրորոցում պառկեցնում (նախ կատու պառկեցնելը, մեռած երեխայի օրորոցը չգործածելը, դատարկ օրորոց չօրորելը...)։ Օրորոցի վրա կախվող հմայիլները և բժժանքներն ու խաղալիքները։

21. Երեխան ո՞ր դեպքերում էր «կոխվում» հորից, տուն բերվող մսից, փողոցով անցկացվող ննջեցյալից... Ի՞նչ կախարդական միջոցների էին դիմում կոխվելուց ազատելու համար։

22. Երեխայի անվանակոչումը։ Ո՞վ էր անունը տալիս, Երբ, ինչպիսի ծեսերով։ Ո՞ւմ անունն էին տալիս։ Կնունք։ Բացի եկեղեցական ծեսերից, այլևս ինչ ծեսեր կային մկրտության միջոցին։ Քավորի դերը։ Կա՞ր արդյոք երեխային կրոնական կոչմանը կամ այս կամ այն սրբին նվիրելու սովորություն։ Ի՞նչ ծես էր կատարվում այդ միջոցին։

23. Թլպատում և նրա հետ կապված ծիսակատարություններ։ Ո՞վ և Երբ էր թլպատումը կատարում, ինչ գործիքով։ Ինչ էին անում կտրած կտորի հետ։

24. Սովետական օրով մտած անվանակոչման նոր ձևերը։ Նոր անուններ։ Ձագ։ Ո՞րչափ հաճախ այժմ էլ դիմում են կնունքին կամ թլպատմանը։

25. Հիվանդություններից հետո չէին փոխում անունը։ Չէին տալիս մի պաշտոնական անուն և մի այլ ինչային, ընտանեկան անուն։

26. Ի՞նչ զուշակություններ էին անում երեխայի ապագայի մասին և ինչպես (նարոտը կապելիս, զգեստի զանազան մասերը հագցնելիս, շարժումները դիտելիս)։

27. Ինչո՞վ էին կերակրում երեխային կյանքի առաջին օրերը։ Մինչև ո՞ր հասակն էր մայրը ծիծ տալիս. ծծով երկարատև կերակրելու դրդապատճառները։ Արդյոք չկա՞ր սովորություն ծծմայր վերցնելու կամ երեխային ուրիշ ընտանիքի հանձնելու՝ ծծով կերակրելու համար։ Ի՞նչպես էին երեխային ծծից կտրում։ Ինչո՞վ էին այնուհետև կերակրում։ Մոր մնունդը ծիծ տալու ժամանակաշրջանում։

28. Առաջին անգամ մազ կտրելու կամ ածիլելու հետ կապված ծեսերը։ Մազ կշռելը։ Ի՞նչ էին անում առաջին կտրած կամ ածիլած մազը։ Ո՞վ էր առաջին անգամ ածիլողը, խուզողը։ Առաջին անգամ եղունգ կտրելը և նրա հետ կապված ծեսերը։

29. Երեխայի ոտքի ելնելու հետ կապված ծեսերը։ Ի՞նչ անահավատ միջոցների էին դիմում ուշ ոտքի ելնող երեխային մանգալ սովորեցնելու համար։ Ոտքի ելնող երեխայի համար քայլերը դյուրացնող պարագաները։

30. Առաջին առումները հանելու, նույնպես կաթնատամի թափվելու հետ կապված ծեսերը։ Ի՞նչ էին անում առաջին

Քաղված առածի հետ։ Ի՞նչ անհավատ հնարների էին դիմում ուշ խոսել սկսող երեխայի լեզուն բաց անելու համար։ Մանկական առաջին բառերը։ Մեծերի գործածած մանկական լեզուն։

31. Առաջին խաղերը մանկահասակների հետ։ Օրորոցի երգեր։ Կատակներ։ Երեխաներին տրվող փաղաքշական անուններ։

գ. ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ հիվանդություններ են ավելի տարածված տեղում։ Զգալն արդյոք հատուկ տեղական հիվանդություններ, որ սեռի մեջ. նրանց պատճառները։ Ի՞նչպես են աղդում տեղական հիվանդությունները բնակչության աճման վրա։

2. Ի՞նչ տեսակ հոգեկան թերություններ և խանգարումներ են հաճախակի պատահում։ Վերաբերմունքը դեպի պակասամիտները, ապուշները և այլն։ Ո՞րն է ամենից ավելի տարածված խելագարության տեսակը և որ սեռի մեջ։

3. Ժողովրդական բժիշկներ, հնքիմներ (տղամարդ և կին), տատմերներ, հովիվներ, քահանաներ, ժոլլաներ և առհասարակ հոգևորականներ բժիշկների դերում։ Բժշկության հատուկ տեսակը հաղորդվում էր արդյոք ժառանգաբար, թե իրարից սովորում էին։ Բնակչության վերաբերմունքը դեպի այդ «բժիշկները»։ Նրանց պահանջած վճարը։

4. Ժողովրդական բժշկության մեջ գործածվող դեղերը, մանավանդ դողերոցքի, թոքախտի, ծաղկի, կարմրուկի, քոսինչի, խոլերայի և ամեն տեսակ վարակիչ հիվանդությունների, վնասրակաև ախտերի, նյարդային և հոգեկան հիվանդությունների, վերքերի, ոսկոր կոտրելու, դուբս ընկնելու և այլն դեպքերում։ Դեղեր պատրաստելու եղանակները։

ա) խոտեր, բանջարներ, թփեր և այլ բուսական դեղեր. նրանց հավաքելու ժամանակը։

բ) կենդանական ճարեր—ճարպեր, լյարդ, մեզ, կղկղանք։

գ) հանքային—կավ, շիր, ժանդ...

դ) բաղնիս (քարաբաղնիս), դոլորշի, սառը ջուր սրսկելը. հանքային ջրերը և նրանցից օգտվելու եղանակները. տեղական հանքային ջրեր։

ե) արյուն բաց թողնելը (կտրելով, տզրուկ կպցնելով...)

զ) մեխանիկական և վիրաբուժական եղանակներ—մաժելը, շփելը, ծեծելը, ձգելը, ոսկոր կպցնելը, կապելը և այլն։

է) դիետա-անուն. որպիսի կերակուրներ օգտակար և որպիսիք վնասակար էին համարվում որոշ հիվանդությունների ժամանակ։

5. Բժշկության կախարդական եղանակներ։ Ո՞ր դեպքերում հիվանդության պատճառ համարում էին աստծու բարկությունը, ոգիներին, սրբերին, չար աչքը, կախարդներին և այլն։ Առանձին հիվանդությունների (ծաղկի, կարմրուկի, դողերոցքի, խոլերայի) ոգիներն ու սրբերը, «հրեշտակները»։ Ի՞նչպես էին մեկնում խելագարությունը, կատաղությունը, ապուշությունը, լուսնոտությունը և հոգեկան հիվանդությունների մյուս տեսակները։ Ի՞նչ միջոցներով էին իմանում՝ ինչն է կամ ով է եղել հիվանդության պատճառը (փայլ բաց անելը, դուշակելը, ժաղով, մկրատով, դանակով..., կուռը չափելը...).

ա) ոգիների և սուրբերի սրտաշահությունը աղոթքներով, խոստումներով (ուխտ), մատաղներով, ժամ վառելով...

բ) Նրանց խաբելը—անունը փոխելով, երեսին մուր քսելով, տանը թագնվելով։ Պայքար մղելը—պողպատի, կրակի, շների օգնությամբ և այլ միջոցներով.

գ) Նրանց վախեցնելը, մանավանդ դողերոցքի ժամանակ, հիվանդի վրա սառը ջուր սրսկելով.

դ) ուխտագնացություն։ (Դլխավոր ուխտատեղիները)։ Այնտեղ կատարվող ծեսերը—ուխտատեղու շուրջը պտտվելը, սրբի գերեզմանից ջուր խմելը, հող կուլ տալը, վրի հետևով հող ածելը, քարի տակով, ծառի արմատների տակով, պատուհանի միջով անց կենալը... Սուրբին մարմնի հիվանդ մասի (ձևքի, ոտքի, սրտի) և ամբողջ մարմնի երկաթե ֆիգուրայի (ex voto) նվիրաբերությունը.

ե) հիվանդությունները ծառերին (շորերի կտորներով), հիվանդ կենդանիներին (նրանց շուրջը մոմ ածելով) ննջեցյալին (նրա դագաղի տակով անցկացնելով), անցորդին (խաչմերուկ ճամբին) հանձնելը։ Շորի կտորի կամ հիվանդ տեղին քսած քարի հետ հիվանդությունը հեռու նետելը.

զ) հիվանդությունը կապելը—պարանոցին ձգվող օղակով, գոտիով, կարմիր թելով, կրակով, պողպատով մոգական շրջան գծելով....

է) կենդանիների ոսկորներ և ամեն տեսակ հմայիլներ և թլիսմներ կախելը։ Թանկագին քարեր. նրանց բուժիչ հատկությունները, ըստ ժողովրդական հավատի։ Զգեստների գույների

(ժանավանդ կարմրի) աղդեցությունը։ Խոսքի ուժը—անեծք, աղոթք (անհատական, կախարդի, քահանայի, մոլլայի)։

ը) Երաժշտություն։ Պար ածելը (հոդեկան հիվանդներին)։

6. Ի՞նչ հիվանդություններ բնակչությունը համարում էր վարակիչ։ Ի՞նչ միջոցների էին դիմում վարակվելու առաջն առնելու համար (սխտոր, արքի հող, խաչ, ժասունք,... կախելը)։

7. Ո՞րպիսի ժարդկանց որոշ հիվանդություններ էին մոտևնում (օրինակ՝ մարմնի վրա այսինչ նշան ունեցողներին)։ Բացի հեքիմներից, դրբացներից... ով ուներ հիվանդությունը վանելու զորություն (օրինակ՝ առջնակը, լուսնի որոշ շրջանում ծնվածը...)։

8. Ի՞նչպես է կազմակերպված բժշկական օգնությունը սովետական օրով։ Բնակչության վերաբերմունքն այդ միջոցառումներին։

դ. ՄԱՀ ԵՎ ԹԱՂՈՒՄ

1. Ի՞նչպես է վերաբերվում մահվան մոտենալուն գիտակցությունը չկորցրած մեռնողը։

2. Ի՞նչպես են շրջապատողները հիվանդության կրիզիսը տարբերում հոգևարքից և ի՞նչպես են հավասաիանում, որ ժարդ իսկապես մեռել է, ի՞նչ հնարներով են դյուրացնում հոգևարքը։ Չե՞ն դուրս տանում մեռնողին տանից, չե՞ն դնում նրան ուղղակի հողի վրա, չե՞ն հանում բարձը գլխի տակից, չե՞ն բաց անում դուռն ու պատուհանը և ի՞նչ նպատակով։

3. Ի՞նչպես էին պատկերացնում մահն ու հոգեառին։ Ո՞րտեղ է հոգեառը կանգնում, որտեղից է մտնում. ով է նրան ուղարկողը։ Ի՞նչպես է նա խոսում, հանում, «կարում» ժարդու կյանքը։

4. Մեռնելու ժամանակ չե՞ն փակում մեռնողի աչքերը։ Չե՞ն վարագուրում հայելիները։ Չե՞ն դնում ննջեցյալի կրծքին հաց, պայտ և այլն։ Ի՞նչ են դնում ննջեցյալի հոգին ուժած տեղում։

5. Ձիա՞ն ավանդություններ, թե քաջ մարդիկ կարող են վերակենդանանալ։

6. Ննջեցյալին լողացնելը. որտեղ և ովքեր էին լողացնում. նրանց ստացած վարձատրությունը։ Ի՞նչ էին անում լողացնելու միջոցին գործածած ամաններըր։ Ի՞նչ էին դնում լողացնելու տեղում։ Ինչո՞վ էին չափում ննջեցյալի հասակը գերեզմանը փորե-

լու համար։ Ի՞նչ էին անում այդ չափը։ Ննջեցյալին պատանելը։

7. Ողն ու կոծը. կային վարձված և առհասարակ պրոֆեսիոնալ լալկան կանայք։ Ողբալու ժամանակները։ Ողբի բառերն ու եղանակները։ Չէ՞ն պահպանվել ավանդություններ, թե մի ժամանակ, որպես սգո նշան, կտրել են մազերը, կոտրել են առաջները, կտրել են մատը, ականջը...

8. Չկա՞ սովորություն ննջեցյալի հետ նրա ձին թաղելու, նրա սիրած իրերը գերեզմանի մեջ դնելու, նրա միջոցով իրեր և պատվերներ ուղարկելու նրանից առաջ մեռած հարազատներին։

9. Ննջեցյալին տանից դուրս տանելը—ինչո՞վ (դագաղ, պատգարակ, նաշ, աննշատակոն, թե հասարակական)։ Ո՞վքեր էին դուրս տանում։ Դռնո՞վ, պատը քանդելո՞վ։ Դուրս տանելիս փակո՞ւմ էին նախ դուռը և դագաղով ծեծո՞ւմ։ Ի՞նչ էին դնում ննջեցյալի պառկեցրած տեղում։ Տանելիս կարելի՞ էր հետ նայել. ինչո՞ւ։ Տանում էին եկեղեցի՞ (մզկիթ), թե ուղղակի գերեզմանատուն։ Ո՞վքեր էին հուղարկավորները։ Կանայք մինչև ո՞րտեղ էին ուղեկցում։ Տանո՞ւմ էին ննջեցյալի հետևից նրա հագուստը, զենքը, ձին։

10. Թաղում։ Հասարակական և տոհմական գերեզմանատներ։ Ո՞վ էր փորում գերեզմանը և ի՞նչ ձևի։ Վարձատրությա՞մբ, թե անվարձ։ Ո՞վքեր էին ննջեցյալի վրա առաջին բուռն հող ձգում և ապա հողով ծածկում և այդ միջոցին արտասանվող բառերը։ Արդյոք չէ՞ն թաղում նաև այն թիակը, որով գերեզմանն է փորվել։ Գերեզմանի վրա խունկ վառելը։ Վերադարձին ձեռքեր լվանալը։ Հոգեհաց։

11. Ինչո՞վ էր տարբերվում կնոջ թաղումը տղամարդու թաղումից, երեխայի թաղումը հասակավորի թաղումից։ Ի՞նչպես էին թաղում կախարդի անուն հանած մարդուն, անձնասպանին, խեղդվածին, անհաղորդ մեռածին, կայծակնահար եղածին։ Ո՞րտեղ էին նրանց թաղում։ Ի՞նչպես էին վերաբերվում նրանց գերեզմաններին։

12. Գերեզմանաքարերի ձևերը. նրանց վրայի փորագրությունները և արձանագրությունները։ Չէ՞ն թողնում գերեզմանաքարի մեջ մի ծակ դեպի գերեզմանի խորքը և ի՞նչ նպատակով։ Ննջեցյալի հիշատակին կատուցած հանրօգուտ շինքերը—աղբյուրներ, կամուրջներ, կանգնեցրած խաչեր։

13. Արդյոք չէ՞ն թափառում անթաղ ննջեցյալների հոգի-

նները։ Քանի՞ ժամանակ ննջեցյալի հոգին կարող է մնալ երկրիս վրա և ինչպես է նա վերաբերվում տանեցոց։ Ի՞նչ պատկեր են ստանում թափառող հոգիները։

14. Որպեսզի ննջեցյալի հոգին տուն վերադառնալիս չկարողանա ճանաչել կնոջը, զավակներին և մյասել նրանց, չէ՞ին փոխում նրանց շորերը, չէ՞ին հագցնում շորերը թարս և այլն։

15. Եթե ննջեցյալին թաղելուց հետո տան մեջ մեկը հիվանդանում էր կամ մահանում, պատճառը չէ՞ին վերագրում ննջեցյալին։ Չէ՞ին ցցում ցից կամ դաշույն թաղված ննջեցյալի սրտում, չէ՞ին հանում նրա սիրան ու ձգում։ Ինչո՞վ էին իմանում, որ ննջեցյալը դեռ վերջնականապես չէ մնացած և չէ կարվել իր հարազատների տանից (գերեզմանի վրա ձիուն գարի ուտեցնելը)։ Չէ՞ին բաց անում գերեզմանը, չէ՞ին այրում դիակը, չէ՞ին կըտրում գլուխը։ Չէ՞ին կարում սրտից մի կտոր, ջրի մեջ ձգում և ջուրը հիվանդին խմեցնում։

16. Գերեզմանաքարի վրա չէ՞ին փորում թասանման փոսիկներ՝ նրանց մեջ ջուր ածելու և հիվանդին խմեցնելու համար։

17. Սգո ձևերի տևողությունը—պաս, մաղերը կամ մորուքը թողնելը, սգո զգեստ հագնելը (զգեստի ձևը, կտորի գույնը)։ Ամուսնու մահից հետո քանի՞ ժամանակ անց կինը կարող էր կրկին մարդու գնալ։

18. Կանանց առաջին այցելությունը գերեզմանին։ Մեռելոյներ. նրանց թիվը ու ժամանակները. ի՞նչ կերակուր (օրինակ՝ կաթնով) էին տանում գերեզմանատուն։ Ողբի բառերն ու եղանակները։ Բերած կերակուրն ուտելուց հետո ի՞նչ էին անում մնացորդը։ Չո՞ր սարքվում գերեզմանի վրա ձիարշավ կամ խաղեր ննջեցյալի պատվին։ Ի՞նչ առիթներով և ո՞ր օրերին տանը հիշատակվում էին հին և նոր ննջեցյալները։

19. Հոգևորականության մասնակցությունը թաղմանը և ստացած վարձատրությունը։ Փոխադարձ օգնության ձևերը թե թաղման և թե մեռելոցի ծախքերը ծածկելու համար։

20. Սովհատկան օրով թաղման ձևերի մեջ մտած փոփոխություններ։ Այդ ձևերի պարզությունը։

2. ԴՐԱՑԻՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչպես էին վերաբերվում հարևան ընտանիքներն իրար, եթե արյունակից էին և եթե արյունակից չէին (տղամարդիկ,

կանայք, երեխաները)։ Ո՞րչափ հետաքրքրվում էին, թե ինչ է կատարվում հարևան տան մեջ, իրար մոտ թե առօրյա գործերով և թե տոներին գնալիս ինչ ձևակերպություններ էին պահպանվում։ Խառնվում էին ընտանեկան գործերի մեջ։

2. Թույլ էր տրվում հարևանի բակը ջուր ածել, ձյուն թափել, տանիքի անձրևաջուրը ուղղել, պատուհան բանալ։ Թույլ էր տրվում անցնել հարևանի կտրով և ինչպիսի դեպքերում։

3. Հաճախ էր պատահում, որ հարևաններն ունենում էին ընդհանուր կալ, մարագ, գոմ։ Ո՞ւմ էին պատկանում հարևան բակերի և արտերի սահմաններին բուսնող ծառերը և նրանց պտուղները։

4. Փոխադարձ օգնության ինչ ձևեր կան վերև հիշվածներից. օրինակ՝ կտուրները ձյունից, փողոցները աղբից, սելավի ջրի բերած հողից մաքրելիս, հրդեհի ժամանակ։

5. Տարբեր ընտանիքների առանձին անհատների մեջ ազգատական կապեր (եղբայրության, ընկերության...) ստեղծելու ինչ ձևեր կային—տղաների և աղջիկների միջև։ Ի՞նչ ծեսերով էր հաստատվում այդ մերձավորությունը, մասնավոր (իրարից արյուն խմելը, իրար հետ կերակուր կիսելը), թե հրապարակական ձևով (եկեղեցում, ընկերական հավաքույթի մեջ)։ «Ախպերացությունների» փոխադարձ պարտականությունները։ Թույլ էր տրվում ախպերացած տղայի և աղջկա միջև ամուսնություն։

6. Կային արդյոք կազմակերպված համախմբումներ ըստ թաղերի, ըստ հասակի։ Նրանց նպատակները ու ձևերը։ Նրանց հավաքույթները։ Ո՞րչափ կանոնավոր էին և պարբերական։ Նրանց ժամանցը։

7. Տարբեր ընտանիքների պատկանող անհատների միասեռ ժամանցը։ Ընդհանուր խաղերը (երեխաների, աղջիկների, կանանց, տղամարդկանց, ավելի հասակավորների) կալում, կտուրների վրա, հրապարակում, խանութ, ընդարձակ օդայում։

8. Իրար ողջունելու ձևերը զանազան սեռի և հասակի մարդկանց, տարբեր հանդամանքներում։ Արտահայտվերաբերմունքը դեպի օտարները, դեպի ծերունիները։

9. Ո՞րչափ համախումբ էին պատահում զանազան ընտանիքների մեջ ընդհարումներ և փոխադարձ վիրավորումներ։ Անիքները։ Այդ կռիվների ձևերը, հայհոյանքները։ Այդ տեսակ հարաբերությունները անցնում էին իրար հայհոյելուց, իրարից խռովելուց ավելի հեռու և փոխվում էին իրար վնասներ հաս-

ցընելու (արտերի, դիզերի հրդեհում, այգիների ջնասում, անասունի վիրավորում և այլն)։ Ի՞նչպես և ե՞րբ էին հաշտեցնում խռովածներին. ո՞վքեր էին միջամտողները. հաշտեցման եղանակները և ժամանակը (օր. նոր տարի)։

10. Հյուրասիրություն։ Ի՞նչպես էին հյուրասիրվում և ինչ առիթներով միևնույն գյուղում ապրողները։ Ուրիշ տեղերից եկած ազգական և օտար հյուրերի ընդունելությունը ու ճանապարհ ձգելը։ Հյուրի և տան տիրոջ փոխադարձ պարտականությունները։

11. Օգնությունը աղքատ ընտանիքներին, այրիներին, անտեր որբերին, ժուրացիկներին (մուրացկանության պատճառները)։

12. Միևնույն գյուղում և թաղում ապրող այլազգի և այլակրոն ընտանիքների փոխհարաբերությունը։ Այդ փոխհարաբերությունը բնորոշող դիպքերը։

13. Սովետական օրով և մասնավորապես կոլեկտիվ տնտեսությունների ծավալումից հետո նոր հարաբերությունները հարևանների, միևնույն կոլխոզին պատկանող ընտանիքների միջև։

3. ԴԱՍԱԿԱՐԳԱՑԻՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄ

1. Ի՞նչպես էր շերտավորված գյուղն ըստ կարողության մինչև սովետական կարգեր հաստատվելը (թվական տվյալներ դրա մասին)։ Աղնվականների և եկեղեցականների հողային և տարկային առավելությունները—իրավական արտոնությունները։

2. Կալվածատերեր (ֆեոդալական և ոչ ֆեոդալական ծագում ունեցող)։ Նրանց կալվածքների ծագումն ու չափը։ Նրանց ազգային կազմը։ (Տեղացիներից հավաքած տեղեկություններ և գրավոր վկայություններ)։ Կալվածատերերի սեփական հողերի անձնական օգտագործման եղանակները։ Հարաբերությունը նրանց հողերն օգտագործող գյուղացիների հետ (գյուղացիների վճարումների սովորական նորմաները)։ Կալվածատերերի ժառանգաբար կամ այլ ճանապարհով ձեռք բերած արտոնությունները (ջրից օգտվելու, հանքերը շահագործելու, կամուրջներից և ճանապարհներից անցնողներից տուրք առնելու և այլն)։ Կալվածատերերի ձեռքով հումքի իրացման ձևերը, նրանց դերը տեղական կապիտալի կուտակման մեջ։ Ի՞նչպես էին գործադրում իրենց

կապիտալները։ Ինչ հարաբերություններ և կապեր էին ծագել նրանց և առևտրականների միջև։ Կալվածատերերի տեղափոխվելու պրոցեսը գյուղից քաղաք. պատճառները։ Կալվածատերերի շենքերի վայրը (գյուղի մեջ, գյուղից դուրս, ամրոցում, ամրոցի տակ)։ Նրանց հագուստը, տների ձևը, տնային սարքավորումը։

3. Առևտրականներ։ Առանձին անհատների կապիտալի կուտակման պրոցեսը ըստ տեղացիների ցույցմունքների։ Ազգային կազմը։ Տեղական վաշխառության ձևերը (դրամ փոխ տալու պայմանները) և նրանցից ծագած հարաբերությունները տեղական բնակչության այլ շերտերի հետ։ Առևտուր անելու ձևերը։ Ձեռք բերած կապիտալի մեծությունը։ Այդ կապիտալի գործադրությունը։ Կալվածքների ձեռքբերումը։ Առևտրականը որպես կալվածատեր։ Առևտրականների փոխադարձ կապակցությունը, (այդ կապակցությունը բնորոշող դեպքերը)։ Առևտրականների մի փոքրիկ գյուղից ավելի նշանավոր կենտրոն և ապա քաղաք տեղափոխվելու պրոցեսը (տեղացոց պատմությունները առանձին առևտրական տների մասին)։ Առևտրականների արտաքին կենցաղը (շենքեր, զգեստ, կահավորում...)։

4. Հոգևորականներ։ Նրանց որ կրոնին պատկանելը։ Բնակչության անահավատության շահագործման ձևերը։ Ստացած տուրքերը և այդ տուրքերի տեղը նրանց անտեսական ընդհանուր եկամուտի մեջ։ Հարաբերությունը հասարակության այլ շերտերի հետ։ Արտաքին կենցաղը։

5. Գյուղացիություն (նրա ազգային կազմը)։ Տվյալներ ունևորների, միջակների և չքավորների թվի մասին։ Այդ տարբերությունների առաջ գալու տեղական պայմանները (սակավահողության դերը)։ Գյուղացիության կախումը ուրիշ շերտերից (այդ պրոցեսի առանձնահատկությունները զանազան ազգությունների մեջ. բողոքի արտահայտության ձևերը։ Գյուղից հեռանալու պրոցեսը ժամանակավորապես և մշտապես։ Բատրակության ձևերը։ Բատրակի դրությունը թե իրեն վարձող ընտանիքում և թե համայնքում։

6. Բնակչության յուրաքանչյուր շերտի դերը հասարակական կյանքում։ Նախկին կառավարության տեղական և կենտրոնական մարմինների վերաբերմունքը դեպի յուրաքանչյուրը (այդ վերաբերմունքի ցայտուն օրինակները ըստ տեղացոց պատմության)։

7. Գրագիտության և ուսման տարածվածությունը յուրա-

քանչյուր շերտի մեջ։ Ո՞րտեղ և ինչ ասպարիզում կրթություն ստացածները (կենտրոնական գյուղում, քաղաքում, օտարության մեջ...) գտնում էին իրենց ձեռք բերած պատրաստության գործադրության։

8. Տեղական ինտելիգենցիայի կազմը։ Նրա դերը տեղական տնտեսական և կուլտուրական կյանքի զարգացման մեջ և մասնակցությունը հասարակական հարաբերությունների փոփոխման մեջ։ Զանազան շերտերի հետ ստեղծված հարաբերությունները։

9. Սովետական օրով գյուղի շերտավորման մեջ տեղի ունեցած հեղաշրջումը (աշխատավոր տարրերի բարձրանալու և ամեն իրավական ու տնտեսական կախումից ազատագրվելու պրոցեսը)։

4. ՀԱՄԱՅՆՔ

1. Ո՞ւմից էր բաղկացած գյուղական համայնքը։ Համարվում էին համայնքի անդամ ուրիշ գյուղերից վերաբնակված ընտանիքները (արհեստավոր, բանվոր, չոբան, բատրակ...), որոնք գյուղում հող չունեին։

2. Ո՞վքեր էին մասնակցում համայնական ժողովներին՝ յուրաքանչյուր ընտանիքից մի ներկայացուցի՞չ (ռվ), թե ընտանիքի բոլոր չափահաս անդամները։ Կնոջ մասնակցությունը ամուսնու կենդանության օրով և այրիանալուց հետո։ Եթե կնոջը թույլ չէր տրվում մասնակցել համայնքի ժողովին, չէի՞ն հավաքվում միաժամանակ նաև առանձին կանանց խորհրդակցություններ և ինչ դեպքերում։ Եթե այրի կնոջ մասնակցությունը չէր թույլ տրվում, ո՞վ էր նրան փոխարինում համ. ժողովում։ Կարող էին բացականները ուղարկել իրենց փոխարեն որևէ մեկին (ռեմ)։ Ո՞վ էր ներկայացնում անչափահաս որբերին։ Ժողովում ո՞վ ուներ վճռական, ո՞վ խորհրդակցական ձայն։

3. Ո՞վ էր հրավիրում, ո՞ւմ նախաձեռնությամբ, որտեղ, որ օրերը և օրվա որ ժամերին գյուղական ժողովները։ Ո՞վ էր նախագահում։ Վիճաբանության, ձայն տալու ձևերը։

4. Շինական, վարչական և դատական մարմինները (տանուտեր, քյոխվա, մելիք, գանձապահ, դատավոր)։ Ո՞ր շերտերից էին նրանք մեծ մասամբ ընտրվում։ Զկային ժառանգական տանուտերներ։ Գյուղական դպիր։ Ի՞նչ պայքար էր մղվում գյուղական պաշտոնյաների ընտրության շուրջը, ո՞ւմ կողմից, ինչ

ձևով. գյուղական շերտերից յուրաքանչյուրի մասնակցությունը այդ պայքարին, կառավարության բռնած դիրքը։ Վարձատրվում էին արդյոք այդ պաշտոնները. ինչ ձևով (համայնքի անդամների աշխատանքը նրանց արտերում, այդիներում, իրենց, թե նրանց գործիքներով, իրենց, թե նրանց հացով. վարձատրությունը դրամով, մթերքներով...)։

5. Գյուղական համայնքի ժողովների իրավասությունը, ա) վարչական, բ) դատական, գ) հարկման։

6. Ինչպես էր կատարվում համայնական հողերի բաշխումը (ըստ շնչի, ըստ ծխի) և ինչ ձևով։ Կանոնավոր պարբերականությամբ որոշ տարիներ անց, թե անորոշ ժամանակամիջոցներում։ Հողաբաժանություն կատարող լիազորները։ Հողերից որոնք էին ենթակա ընդհանուր օգտագործության, որոնք բաժանվում։

7. Ոռոգման ջրի բաշխումը գյուղի առանձին տնտեսությունների միջև։ Լիազորները։ Բաշխման հիմնական սկզբունքները և կանոնները։

8. Գյուղական հովիվ վարձելու պայմանները, արտերի պահապանները։ Ո՞վքեր էին ընտրվում այդ պարտականությունները կատարելու համար։

9. Տնական ժողովների որոշումները գյուղի բարեկարգության մասին (փողոցների, կամուրջների, ճանապարհների, աղբյուրների, հաճաճարակի, սելավի... ժամանակ)։ Ինչպես էին կատարվում այդ բարեկարգության համար անհրաժեշտ աշխատանքները։

10. Իրավունք ուներ համայնքը և ինչ եղանակով խառնվելու իր անդամների տնտեսական աշխատանքների մեջ և առաջնելու տերիտորիալ հաջորդականությունը, լավ ևն արդյոք մշակվում այդիները, արտերը, ժամանակին են արդյոք կատարվում երկրագործական աշխատանքները, ինչպես է օգտագործվում առուների ջուրը, չեն փչացնում անտառը...։

11. Ինչ ձևով էր խառնվում համայնքը գյուղում կատարված անկարգության (թաղերի, ընտանիքների միջև, հրապարակային ընդհարումների) դեպքերում։ Խառնվում էր արդյոք (ով, ժողովը, թե անձամբ առանձերը) ընտանեկան վեճերին և խռովություններին և ում նախաձեռնությամբ։ Չէ՞ր մասնակցում առանձերը ընտանեկան բաժանումներին։ Չէ՞ր տալիս իր համաձայնությունը քահանային պսակադրություն կատարելու համար։

12. Ինչպիսի տուրքեր (բացի պետական տուրքերից) և ինչ նպատակով էր սահմանում ընտանեկան ժողովը. ինչպես էր բաշխում դանազան խավերի մեջ։ Պետական պաշտոնյաների ընդունելության ծախքերի բաշխումը։ Բաշխման և հավաքման ձևերը, հաշվետվությունը։

13. Պետական և այլ (ոչ անհատական) այցելու հյուրերին օթևան և ուտելստ հայթայթելու ձևերը։ Կային հասարակական օդաններ, քարվանսարաններ, թե տեղավորում էին մասնավոր ընտանիքներում—ինչ հերթականությամբ դեկավարվելով։ Մասնավոր ընտանիքների վերաբերմունքը դեպի այդպիսի հյուրերը։

14. Գյուղի դանազան խավերի մասնակցությունը համայնքի գործերին։ Ազդելու միջոցները։ Հատկապես աղնվական և այլ ոչ հարկատու տարրերի վերաբերմունքը։

15. Սովետական օրով տեղի ունեցած փոփոխությունը գյուղի համայնքի կազմակերպության մեջ։ Գյուղխորհուրդը. նրա աշխատանքներին մասնակցող գլխավոր տարրերը։ Դեկավարությունը։

5. ԻՐԱՎՈՒՆՔ

ա. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Կար արդյոք տեղում «սեփականություն» բառը։ Եթե չկար, ինչ բառ էին նրա տեղը գործածում և ինչ իմաստով։ Տարբերություն դնում էին շարժական և անշարժ սեփականության միջև. ինչ անուն էին տալիս մեկին և մյուսին։

2. Կարող էր արդյոք սեփականատերն իր սեփականության հետ վարվել ինչպես ուզում էր—ոչնչացնել, ծախել, նվիրել, փոխել։ Եթե որոշ սահմանափակում էր դրվում, ո՞ր դեպքում և ինչո՞ւ։

4. Ի՞նչ կարելի էր ձեռք բերել որպես սեփականություն և ինչ ոչ։ Օրինակ՝ գետակը, վայրենի կենդանիները, ձկները, մեղուները, ամեն տեսակի հող։

4. Տարբերություն դնում էին սեփականության իրավունքի և տիրության (владение) մեջ։ Կային իրեր, որ չէր կարելի դարձնել սեփականություն, բայց կարելի էր տիրել և օգտագործել։

5. Ի՞նչպես էր ձեռք բերվում սեփականությունը—գնելով,

փոխանակելով, բռնագրավելով, գնելով, անձնական աշխատանքով, ահեղնելով (անասուն, ծառեր), նվեր կամ ժառանգություն ստանալով։ Կային այլաբանական (սիմբոլիկ) ծեսեր սեփականությունը ձեռքբերելու։ Չկային այնպիսի գործողություններ, որոնցով կարելի էր անխախտ դարձնել ոչ թե սեփականության, այլ տիրության և օգտագործման իրավունքը։

6. Ի՞նչպիսի պայմաններում էր բռնագրավված իրը դառնում սեփականություն։

7. Ի՞նչն էր դյուտ համարվում։ Ո՞ւմ էր պատկանում գրաված իրը։ Արդյոք միշտ գտնողի՞ն, և ինչպիսի դեպքերում։ Եթե իրը մի քանիսն էին գտել, ինչպես էր նա բաժանվում գտնողների միջև։ Եթե կորած իրի տերը հայտնվում էր, ինչ վարձատրություն էր ստանում գտնողը։

8. Ի՞նչպես էին նայում ընտանի կենդանիներ, թռչուններ, փեթակից թռած մեղուներ... գտնելուն։

9. Ի՞նչպես էին նայում գանձ գտնելուն։ Կարելի էր գանձ որոնել ուրիշի հողի վրա։ Ո՞ւմ է պատկանում գանձը—գտնողի՞ն, հողի տիրո՞ջը, թե երկուսին միասին։

10. Ի՞նչպիսի նշաններով էին մի սեփականություն բաժանում մյուս սեփականությունից։ Ի՞նչ անուններ էին տալիս այդ սահմանանշաններին։

11. Իրերի վրա դրվող և ում սեփականություն լինելը ցույց տվող նշաններ—դաժդաներ, կնիքներ և այլն։

12. Ընտանեկան սեփականությունից լինում էին մասեր, որոնք կազմում էին ընտանիքի որևէ անդամի (ձեմ) մասնավոր սեփականությունը. ինչպիսի դեպքերում իրավունք ուներ նա ազատ տրամադրելու այդ մասը առանց ընտանիքի մյուս անդամների համաձայնության։

13. Ո՞ւմ էին պատկանում հարսի բերած իրերը։ Ո՞ւմ էին անցնում այդ իրերը, եթե հարսը մեռնում էր անզավակ։

14. Եթե զավակներ ունեցող այրի կինը տուն էր բերում նոր ամուսին, որն ուներ իր սեփականությունը (շարժական կամ անշարժ), ժառանգում էին արդյոք առաջին և երկրորդ ամուսնություններից ծնված զավակները հավասարապես երկուսի սեփականությունը, թե ամեն մի ամուսնուց ծնված զավակները միայն իրենց հոր սեփականությունը։

15. Ժառանգում էին հայրական սեփականությունը տղաները ու աղջիկները հավասար չափով. եթե ոչ, պարտական չէի՞ն

եղբայրները պահել իրենց չամուսնացած քույրերին և իրենց վրա վերցնել նրանց մարդու տալու ծախքերը։ Ի՞նչպես էին վարվում, եթե միայն աղջիկներ էին ժառանգ մնացած լինում։

16. Ժառանգում էին արդյոք իրարից ամուսինները և ո՞ր դեպքում։

17. Գույքային ունե՞ր կտակը։ Երբ էր մարդ կտակ (բանավոր կամ գրավոր) կազմելու դեպքեր և ինչպիսի ընտանիքներում։ Ի՞նչպես էին կազմվում կտակները, ում ներկայությամբ, ովքեր էին նշանակվում կտակակատարներ։ Ի՞նչպես էին վերաբերվում ժառանգներն ու ազգականները կտակողների կամքին։ Իրավունք ունե՞ր հայրը զրկելու ընտանիքի անդամներից որևէ մեկին ժառանգությունից։

18. Ի՞նչպես էր տեղի ունենում (շարժական և անշարժ) գույքի բաժանումը ընտանիքի անդամների միջև, տղաների և աղջիկների միջև, հոր կենդանության օրով, մահից հետո։ Ի՞նչ էր ստանում մայրը զավակներից, որի՞ մոտ էր մնում որբևայրի մայրը։ Ո՞ւմ պարտականությունն էր ամուսնացնել չամուսնացած քրոջը և կատարել հարսանեկան ծախքերը։

19. Ի՞նչպես էր հայրը բաժին հանում ընտանիքից անջատվող զավակին։ Կարո՞ղ էր նա տանից վռնդել որդուն՝ ոչինչ չտալով նրան, թե՞ կային իրեր, որոնցից հայրը չէր կարող նրանց զրկել։

20. Հաճա՞խ էին պատահում շարժական կամ անշարժ գույքի ընդհանուր սեփականության կամ սերության դեպքեր (ջաղաց, բաղնիք, աղբյուր, քոնիր, սայլ...)։ Ի՞նչպես էին օգտվում այդ գույքից և ո՞վ էր կառավարողը և պատասխանատուն—բոլորը, թե մեկը, ընտրվածը։ Կարո՞ղ էր տներից ամեն մեկը իր բաժինը ազատ, ում որ ուզենար, ծախել կամ գրավել, թե պետք է իր ընկերների համաձայնությունը հարցներ։ Ձի՞ր պատկանում ընկերներին գնման նախապատ իրավունքը։ Ի՞նչպես էին բաժանում ընդհանուր սեփականությունը։

21. Եթե գյուղի հողերը համայնական էին, այդ հողերից որո՞նք են բաժանվում էին բաժանվանը և որո՞նք ոչ (անատեղեր, այգիներ, իրենց ձեռքով խամհատված հողեր...)։ Ի՞նչ սկզբունքներով էին բաժանվում վարելահողերը (ըստ շնչի՞, թե աշխատուժի անդամների), գյուղամերձ խոտհարքները, արոտատեղերը, անտառը...

22. Ի՞նչպես էին առանձին անտեսությունները օգտվում

համայնական օգտագործման ներքո մնացող հողերից։ Կարող էին նրանք իրենց բաժին հանած հողերը տալ վարձու, գրավ դնել, փոխել և այլն, ազատորեն, թե՞ համայնքի համաձայնությամբ։ Ի՞նչ կանոններ կային այդ հողաբաժինները ժառանգելու դեպքում։

23. Համայնքից դուրս գալու ժամանակ ի՞նչ էր լինում դուրս գնացողի հողաբաժինը։

բ. ՊԱՅՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ տեղական բառեր էին գործածվում գնանգոն պայմանագրությունների համար։ Զկա՞ին առածներ, ասացվածքներ պայմանագրությունների հետ կապված։

2. Ի՞նչպիսի ծեսեր էին կատարվում պայմանախոսության առաջ (օրինակ՝ բանակցությունների միջոցին և հետո) (իրար մնծարելը, ձեռք խփելը, հող ուտելը, աղին ձեռք տալը և այլն)։

3. Ի՞նչ նշանակություն ունեին պայմանախոսության միջոցին վկաները։ Ո՞վքեր կարող էին վկա լինել և քանի՞սը պետք է լինեին։

4. Ի՞նչ նշանակություն ուներ պայմանախոսության միջոցին երաշխավորությունը. ի՞նչ պատասխանատվության էր ենթարկվում երաշխավորը պայմանը չկատարելու դեպքում։

5. Ի՞նչ նշանակություն ուներ պայմանագրության միջոցին գրավականը. ո՞վ ում էր տալիս գրավականը (բհնը) առ և ծախի ժամանակ, վարձակալության ժամանակ... Երբ գրավականը վերադարձվում էր տվողին և ե՞րբ կորչում էր։ Ի՞նչ էր տրվում որպես գրավական—իր, փող...

6. Եթե պայմանագրությանը մասնակից էր այս կամ այն կողմից մի քանի անձ, որ չափով նրանցից մեկը պատասխանատու էր մյուսների համար։

7. Ի՞նչպիսի սովորություններ էին կապված նվեր տալու հետ։ Ի՞նչ տեսակի գույք կարող էր նվիրվել։ Ինչո՞ւմ էին պայմանական նվերներ։ Ո՞րպիսի դեպքերում էին նվերներ տրվում, օրինակ՝ հարսանիքի, ծննդաբերության, կնունքի, նոր բնակարան անցնելու առիթով... Նվեր առանալը կապված էր որևէ պարտավորության հետ։ Եղե՞լ են դեպքեր նվերը նվիրատուին վերադարձնելու։

8. Ի՞նչպես էր հասկացվում առուծախի պայմանագրու-

թյունը։ Ինչո՞վ էր տարբերվում իր ծախելը վարձով կամ փոխ տալուց։

9. Թուլլ էր տրվում ուրիշի առուծախին խառնվելը, դինը բարձրացնելը։

10. Եթե իրը ծախելու միջոցին տեղի էր ունեցել խաբեբայություն (օրինակ՝ ասված չէր, թե իրը ինչ պակասություն ունի), արդյոք խաբված կողմը կարող էր վերադարձնել գնած իրը կամ պահանջել վարձատրություն։

11. Հաճախ էին տեղի ունենում անշարժ գույքերի փոխանակության գեպքեր (օրինակ՝ վարելահողերի, արոտատեղերի, տնատեղերի)։ Ինչպես էր կատարվում շարժական գույքերի (ձիերի, տան թռչունների) փոխանակությունը։ Ինչ տեսակ և ինչպիսի այլաբանական ձևակերպություններ էին կապված փոխանակությունը։

12. Գույքը վարձու տալու ինչպիսի տեսակներ (անուններ) գոյություն ունեին և ինչպիսի պայմաններ էին կապվում վարձով տալու ժամանակ, դրե, վարձաղրամի, վճարման ժամկետների, տիրոջ և վարձակալի իրավունքների և պարտականությունների, գույքի փչացման և ոչնչացման գեպքերի համար։ Արդյոք լինում էին գեպքեր, որ իրը (վարելահող, արոտատեղ, տուն, բնակարան, մարագ, ջաղաց, այգի, բանջարանոց, գյուղատնտեսական գործիք, տնային անասուն) վարձու էր տրվում ոչ թե փողով, այլ օգուտի արդյունքով կամ աշխատանքի մի ժասով, օրինակ՝ հարկը վճարելու, վառելափայտ հայթայթելու պայմանով...

13. Ինչպես էր ազդում վարձակալության վրա, եթե տերը իրը վաճառում էր, այսինքն՝ պայմանագրությունը իր ուժի մեջ էր մնում, թե ոչնչանում էր։

14. Ինչպիսի գեպքեր էին (տեղական անունները) լինում, երբ իրը ի պահ էր հանձնվում, օրինակ՝ հրդեհի ժամանակ, բացակայելու, ուրիշի հորի մեջ հայտնաբերվելու միջոցին... Արդյոք թուլլ էր տրվում օգտվել պահ տրված իրերով։ Տրվում էր վարձատրություն իրը պահելու համար։

15. Ինչպես էին կատարվում փոխանակությունները։ Ինչ իրեր կարելի էր փոխ տալ (սերմ, սայլ, անասուն), ինչ ձևով և ինչ պայմաններով։

19. Ինչպես էր դրամը փոխ տրվում։ Գյուղերում ովքե՞ր էր դրամը փոխ տալով զբաղվում և չկա՞յին արդյոք վաշխառուներ։

252—5

Քանի՞ ժամանակով էին փողը փոխ տալիս, չէի՞ն պայմանավորվում պարտքը վճարել աշխատանքով, իրերով, հացով և այլն։ Պարտքը տրվում էր վկաների ներկայությամբ, թե ծածուկ, աշխատելով, որ ոչ ոք չիմանա, բանավո՞ր, թե գրավոր ձևով։

17. Պահանջվո՞ւմ էր պարտապանից գրավական, ինչ։ Պահանջվում էր մեկ երրորդի երաշխավորություն։

18. Եթե փոխառությունը կատարվել էր տոկոսով, տոկոսի մեծությունն ու ձևը, այսինքն՝ վճարվում էր փողով, աշխատանքով, հողը, այլին օգտագործության տալով... Տոկոսը առաջի՞ց («գլխից») էր պահանջվում, թե պարտքը վերադարձնելու միջոցին։ Հաշվվում էին տոկոսը տոկոսի վրա։ Ի՞նչպես էին վերաբերվում վաշխառուներին։

19. Ի՞նչպիսի հասկացողություններ էին կապված անձնական վարձման հետ (ծառա, նոքար, մշակ, հովիվ, գղիր...) վարձելիս։ Ի՞նչ աշխատանքների համար էին վարձում։ Տարեկան, ամսական, սեզոնային, օրական մշակներ։ Վարձելու ժամանակամիջոցի սկիզբը կամ վերջը (մինչև սուրբ Սարգիս, գատիկ, սուրբ Գևորգ, Նախաքող...)։

20. Ի՞նչ պայմաններով էին վարձվում։ Վարձը վճարվում էր դրամո՞վ, թե նյութո՞վ, մթերքո՞վ։ Չէի՞ն վարձվում հնձվորները խուրձերի հաշվով, ջաղացպանը աղունի քանակության հաշվով։

21. Ի՞նչպես էին վարձվում անհատական և հասարակական հովիվները։ Ի՞նչ նվերներ էին տառնում նրանք անասունը գարնանը արոտ հանելուց առաջ կամ աշնանը գոմեր ներս անելուց հետո։ Ո՞ր դեպքերում էր հովիվը պատասխանատու տիրոջ առաջ անասունը կորցնելու համար և ինչո՞վ։ Ի՞նչ ապացույց էին պահանջում հովվից, որ անասունը սատկել է կամ գաղանի կեր դարձել։

22. Տանու ծառաները (նոքարները), եթե երկար ապրած էին լինում գյուղացու ընտանիքում, համարվում էին արդյոք նրա ընտանիքի անդամ։ Ի՞նչ հարաբերություններ էին առեղծվում այդ դեպքերում։

23. Պատասխանատո՞ւ էին ծառաները, մշակները տիրոջ առջև իրենց անփութությամբ կամ դանցառությամբ պատճառած վնասների համար։ Կարո՞ղ էր վարձվողը ժամկետից առաջ հեռանալ տիրոջ մոտից, և ի՞նչ հետևանքներ էին ծագում այդ հեռանալուց։

24. Երեխաներին արհեստ սովորելու տալը տարբերվո՞ւմ էր

անձնական վարձումից։ Ինչ պայմաններով էին երեխաները աշակերտ տրվում արհեստավորների մոտ։

25. Կազմվում էին արդյոք ընկերակցություններ (աթոռներ), օրինակ՝ միասին հումք ձեռք բերելու, կամ միասին իրեր շինելու և ծախելու, շենքը, մեքենան... միասին օգտագործելու, կամ միասին վարձելու, մի աշխատանք միասին հանձն առնելու և այլնի համար։ Ընկերակցությունների տեղական անուններն։ Ինչ պայմաններ էին կապում իրար հետ ընկերակցության անդամները (դրավո՞ր, թե բանավոր). Ինչպես էին բաժանում օգուտը և վնասը։ Ինչպես էին կազմակերպված—ով էր ավագը, ներկայացուցիչը, ինչպես էին վճռվում ծագող հարցերը և ներքին վեճերը։

Գ. ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Ինչ օրենքներով էին դեկավարվում քրեական գործեր լուծելիս։ Արդյոք հաճախ էր գործադրվում սովորույթը։

2. Ջանազանում էին հանցանքն ու դանցաւորությունը և ինչով։ Ինչպես էին տեղացիք անվանում մեկը և մյուսը։ Հանցանքի ինչպիսի տեսակներն էին դանազանում։

3. Ինչ տարբերություն կար հանցանքի և մեղքի մեջ։ Ինչու գործողություններից մի քանիսը կոչվում էին հանցանք, մյուսները մեղք։ Ո՞ր դեպքերում մեղքը դառնում էր հանցանք և ընդհակառակը։

4. Ինչպիսի հանցանքներ ամենից ավելի էին տարածված մեր վայրում. պատճառն ինչ էր։ Արդյոք դա կախված չէ՞ր տեղադրությունից (սահմանին մոտ լինելուց, մաքսանենգություն), բնակիչների բնավորությունից, սովորություններից, անհավատություններից, պարապմունքից, ազգությունից. աղքատությունից, դյուրագրգռությունից, հարբեցողությունից... ազդեցություններ։ Արդյոք չկային այնպիսի հանցանքներ, որ արհեստ (փեշակ, խաչագողություն) էին դարձել։

5. Ո՞րպիսի հանցանքներն էին ավելի ծանր համարվում և ինչու։ Չէ՞ր կարող ծանր հանցանքը թեթև դառնալ և թեթևը ծանր՝ որևէ հատուկ պայմանների հետևանքով (օրինակ՝ գողությունը բաց բնակարանից ավելի ծանր էր համարվում, քան թե փակ բնակարանից. հանցանքը հոր, մոր, համագյուղացու, այլ-

ազգի, այլակրոնի դեմ, գիշերով, օրը ցերեկով, ժողովրդի աչքի առջև, եկեղեցուց...)։

6. Ի՞նչն էին համարում հանցագործության պատճառ, արդյոք փորձանքը, աստծու պատիժը, աստծուց խռով լինելը։ Չէ՞ր նկատվում հանցագործության մեջ ժառանգականություն, հորից որդուն անցնելը։

7. Որոշ գործողությունները արդելվում էին միայն այն պատճառով, որ որևէ ինչու էին հասցնում, թե այն պատճառով, որ ինքնըստինքյան վատ և անբարոյական գործողություններ էին համարվում։

8. Չկային այնպիսի գործողություններ, որ օրենքը չէր պատժում, իսկ սովորույթը արդելում էր և նույնիսկ պատժում, և ընդհակառակը։ Չկային այնպիսի հանցագործություններ, որոնք միայն հետևանք էին տեղական սովորույթունների, սնահավատությունների, նախապաշարմունքների (մեղուներ, սերմ գողանալը ավելի լավ բերք ունենալու համար, հավ գողանալը հարսանիքների ժամանակ...)։

9. Չկային այնպիսի հանցանքներ, որոնք վիրավորական էին ամբողջ գյուղի, համայնքի համար։ Ի՞նչպես էին վարվում այդպիսի դեպքերում։

10. Ի՞նչպես էին նայում անզգուշությամբ, պատահմամբ, ինքնապաշտպանության միջոցին կատարված հանցանքին։ Չէի՞ն պատժում կենդանիներին. ինչի համար և ինչպիսի կենդանիներին։ Մեղավոր էին հանցանքը հարբած, գրգռված, խելագար, խուլ ու համր լինելը, ջահելությունը, ծերությունը և այլն։

11. Պատժվում էր արդյոք հանցանք կատարելու փորձը կամ հանցագործության նախապատրաստվելը. դրա պատիժը ինչով էր տարբերվում կատարված հանցանքի պատժից։ Ի՞նչպես էին նայում հանցագործությունը գրգռողին, թագցնողին, գողացած իրը պարտակողին։

12. Ի՞նչպիսի պատիժներ էին գործադրվում—ազատազրկություն, դրամական տույժ, ժաքմանական պատիժ... Այդ պատիժներից ո՞ր տեսակը ծրը էր նշանակվում։ Ի՞նչպես և ո՞ւմ ձեռքով էին այդ պատիժները ի կատար ածվում։ Ի՞նչպիսի տարբերություն կար տղամարդկանց, կանանց, ծերունիների, անչափահասների պատիժների միջև։ Կարելի էր արդյոք պատժել մեկին ժյու-

սի փոխարեն (ծնողներին զավակների, մարդուն կնոջ և այլն փոխարեն)։

13. Ի՞նչպես էին վերաբերվում ընդհանուր դատարանով պատիժ կրող կամ պատիժ կրած քրեական հանցագործներին։ Օգնո՞ւմ էին նրանց (ինչո՞վ), թե անվստահությամբ վերաբերվում, ի՞նչպիսի պատիժներ ամենից ավելի անպատվաբեր, անարգ էին համարվում։ Այդպիսի անպատվաբեր պատիժների հետ կապված երգերն ու ծեսերը։

14. Ի՞նչպես էին վերաբերվում երենց ընտրած պաշտոնյաների և համայնական վարչության դեմ կատարված հանցանքներին — վիրավորելուն, անարգելուն, կարգադրություններին չհնազանդվելուն, հակառակելուն։

15. Պաշտոնատար անձանց որ գործողությունները սովորույթը ենթարկում էր պատժի։ Ի՞նչպես էին վերաբերվում նրանց կաշառակերության, հասարակական դրամների վատնումին և ծառայության այլ հանցանքներին։

16. Արգելո՞ւմ էր սովորույթը աղքատություն, մուրացկանություն, թափառաշրջիկություն (ավարա)։ Եթե արգելում էր, ի՞նչպիսի դեպքերում և ի՞նչպես էր պատժում։ Չէ՞ր նկատված կազմակերպված մուրացկանություն և խուժանություն։

17. Արգելվո՞ւմ էր արբեցողությունը, մե՞ղք, թե պակասություն էր համարվում։ Ո՞ր դեպքերում պատժվում էր և ի՞նչպես։

18. Հաճա՞խ էին տեղի ունենում մատնություններ, ծածուկ ամբաստանություններ և ո՞ւմ դեմ. ուրի՞շ հասարակական խավերին պատկանողների՞, հեռավորների՞, թե նաև մերձավորների դեմ։

19. Ի՞նչպես էին նայում կանանց ամուսնության դադարմունքը վիրավորելուն։ Ի՞նչպես էին վերաբերվում պոռնկության ու կավատության։ Ի՞նչպիսի սովորույթյուններ և հանգամանքներ նպաստում էին պոռնկության զարգացմանը։

20. Ի՞նչպես էին վերաբերվում հակաբնական արատներին, մասնավորապես արվապիության և անասնախառնման։

21. Ի՞նչպես էին նայում սպանության։ Ի՞նչպես էին անվանում մարդասպանին («արնատեր»)։ Սպանողին որոնո՞ւմ էր ամբողջ հասարակությունը, թե միայն սպանվածի ազգականները։

22. Եթե կար արյան վրիժառություն, ո՞վ էր ըստ սովորույթի պարտական արյունահան լինելու, ազգականներից ո՞րը։ Միայն սպանությո՞ւն էր արյունով լվացվում, թե նաև այլ հանցագործություններ։ Ի՞նչպես էր վերաբերվում բնակչությունը

արյան վրիժառուության։ Ինչ դեր էր խաղում այդ դեպքերում հոգևորականությունը։

23. Ինչպիսի հանգամանքներում և ինչ ձևով էր վերջ տրվում արյունով հատուցմանը։ Ե՞րբ էր արնահեղը բավականանում սպանողից արյան գինը (չափը) կամ տուգանք ստանալով։ Հաշտության ձևերը։

24. Ո՞րչափ հաճախակի էին անձնասպանության դեպքերը (ինչ եղանակով). պատճառները։ Սովորույթը համարում էր անձնասպանությունը հանցանք, թե միայն մեղք. չէ՞ր ենթարկվում որևէ պատասխանատվության անձնասպանության փորձ անողը։

25. Մանկասպանությունը համարվում էր նույնպիսի ծանր հանցանք, որպես սպանության ուրիշ դեպքեր. ինչպես էին վերաբերվում իր մանկանը սպանող կնոջը։ Կայսեր ավանդություններ երեխաներին բախտի բերմանը ձգելու մասին։ Կան այժմ էլ այդպիսի դեպքեր. ինչ հանգամանքներում։

26. Հաճախ էին տեղի ունենում արհեստական վիժումներ։ Ինչպես էին նայում երեխա փչացնելուն. համարում էին ծանր հանցանք, թե միայն մեղք։

27. Ինչպես էին վերաբերվում մարմնական ֆնասաբարումներին—ծեծին, վերք հասցնելուն... Տարբերություն էին ծանր և թեթև ֆնասաբարումները. ինչ տարբերություն էին դնում նրանց միջև և ինչպես պատժում։

28. Ինչպես էին վերաբերվում անձնական վիրավորանքներին և զրպարտությանը։ Վիրավորանքի այլաբանական ձևերը (դռանը մուր քսելը, պատուհան ջարդելը, երդիկին կղկղանք ձգելը, ծածուկ մազ կտրելը)։

29. Ինչ հակացդողություն ունէին պատվի մասին։ Տարբերում էին արդյոք խոսքով վիրավորանքը գործողությամբ վիրավորանքից։ Ե՞րբ էր դատարանը խառնվում անձնական վիրավորանք հասցնելու գործերին և ում նախաձեռնությամբ։ Պատիժ նշանակելիս աչքի առաջ ունենում էին սեռը, հասակը, վիրավորողի դրությունը (հարբած, զրգռված լինելը)։ Բացի անպատվության համար դրամական տուգանք նշանակելուց չէին նշանակում նաև քրեական պատիժ։

30. Ինչպես էին նայում ավազակությանը և թալանին. դրանց պատճառները։ Ավանդություններ տեղական ավազակների մասին։

31. Գողության մասին եղած հայացքները։ Տարբերություն դնում էին պատահական գողի և արհեստով գողի միջև։ Գողության հանցանքը մեղմացնող և սաստկացնող հանգամանքները՝ նայելով թե ինչ էր գողացված, ով էր գողացել, ումից, որտեղ և երբ։ Մասնավորապես ինչպես էին վերաբերվում ընտանիքի մեջ կատարվող գողություններին, տնային թռչունների, հացի, գյուղատնտեսական գործիքների, մեղուների և այլն գողություններին։ Ի՞նչպիսի գողություններ պատժի չէին ենթարկվում։

32. Հաճախ էին տեղի ունենում հրկիզումներ։ Ինչ էին կրակ տալիս։ Ի՞նչպես էր բնակչությունը վերաբերվում այդ դեպքերին։

33. Ի՞նչպես էին նայում ուրիշի այգուց պտուղ, ուրիշի բանջարանոցից բանջար, ուրիշի բոստանից վարունգ, սեխ... գողանալուն, ուրիշի դաշտում խոտ հարելուն, արածացնելուն, ուրիշի կովը, ոչխարը կթելուն և այլն։

34. Արդյոք հաճախ էին կոդվերը իրար հետ հաշտվում։ Ո՞ր դեպքերումն էր այդ թույլ տրվում։ Եթե դատավճռից դժգոհ էին մնում, չէի՞ն հաշտվում արդեն դատավճիռը կայանալուց հետո։ Չէի՞ն շարունակում ոխակալ լինել այս կամ այն դեպքում։

35. Վրեժխնդրության տեղական ձևերը—ձգություն, այգի փչացնելը, անասունին ջնասելը...

36. Հանցագործին եկեղեցում հաղորդակից ծխականարության հայտնագործելու եղանակները։

Դ. ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Լինում էր արդյոք ինքնագատաստան, այսինքն՝ առանց դատարանին դիմելու ինքնակամ պատժելը (բացի արյան վրիժառության և մասնավոր վրիժառության այլ դեպքերից), օրինակ՝ պոռնիկ կանանց, հասարակական ժառանիչ համարվածին, կրոնական պահանջները կոպիտ խախտողին։ Ինչ ձևով էին պատժում։

2. Ի՞նչ տեսակ դատարաններ էին լինում տեղում (ծերունիների, ազգականների, դրացիների, միջնորդների, հավայնքի...)։ Ո՞ր դեպքերում դրանցից որին էին դիմում, ո՞րն էին գերադասում։

3. Դատարանի կազմը։ Ո՞վքեր էին ճանաչվում դատավոր. ինչ պայմանների պիտի նրանք համապատասխանեին։

4. Ինչպես և քանի՞ հոգի էին ընտրվում համայնքից դատավորներ։ Գյուղական դատարանը որտեղ, երբ, ինչ պարագաներում, ում հրավերով, որքան ժամանակամիջոցով էր հավաքվում։ Մասնակցում էր արդյոք տանուտերը (քյոխվան)։

5. Ինչ տեսակ գործեր էին ենթակա գյուղական դատարանին։ Ո՞վ էր հանդիսանում որպես հասարակական մեղադրող։

6. Ինչպես էին կանչվում մեղադրվողները. ինչ հետևանքներ էր ունենում չներկայանալը։

7. Ում ներկայությունը անհրաժեշտ էր դատարանում։ Ե՞րբ էր գործը վճռվում բացակայությամբ։ Եթե թուլյատրվում էր ներկա գտնվել կողմնակի անձանց, կարող էին նրանք խառնվել դատավարությանը։

8. Ինչով էր դեկավարվում դատարանը. սովորույթին տրվող կարևորությունը։ Ինչ նշանակություն էր տրվում իրերին, փաստաթղթերին, վկայություններին, երդմանը։ Ո՞վ չէր կարող վկա լինել։ Ինչպես էին հարցաքննում վկային։ Վկաները երդվեցվո՞ւմ էին և ինչ ձևով։ Երդվեցվո՞ւմ էր մեղադրյալը։ Ձե՞ր գործադրվում ֆիզիկական բնույթ կրող հարկադրում (ծեծ, սոված պահելը...)։

9. Ձկայի՞ն անահավատական գործողություններ հանցագործին կամ գողացած իրը գտնելու համար, օրինակ՝ գրբացներին, երազահաններին դիմելը, այս կամ այն սրբին աղոթք անելը, մոմ վառելը...

10. Ինչ պայմաններում էր գործը համարվում վճռված։ Անհրաժեշտ էր արդյոք դատավորների միաձայն որոշումը։ Լինո՞ւմ էին գործեր (ոռպիսի), երբ գործը վճռվում էր վիճակ գցելով (վիճակ գցելու ձևը)։

11. Դատավճիռը ի կատար ածելու պայմանները։ Ո՞վ էր հսկում կատարածությանը։ Նշանակվո՞ւմ էր ժամկետ։ Ազատազրկման տեղական ձևերը (տեղական բանտը. նրա սարքավորումը). վարվողությունը ազատազրկվածների հետ։ Ինչպես էին անում, երբ տուգանքի կամ այլ գրամական վճարման դատապարտվածը անվճարունակ էր։

12. Եթե կողմերը Ռուսի էին դժգոհ, կարող էին բողոքարկել և ո՞ւմ։ Դրա համար ինչ ժամանակամիջոց էր սահմանված, և ինչ պայմաններ էին հարկավոր։

13. Ինչպես էին վերաբերվում պետական դատարանին և պետական օրենքներին։ Եթե գերադասում էին խուսափել պետա-

կան դատարանին դիմելու, ինչ ժիջոցների էին դիմում վճռերը վերջացնելու համար։

14. Հաճախ էին դիմում միջնորդ դատարանի։ Ինչպես էր նա կազմվում։ Ո՞րչափ պարտադիր էին նրա որոշումները։

V. ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐ

1. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՐՈՆ

1. Բնակչությունը ինչ պաշտոնական կրոնի էր հետևում։ Ինչպես էին պատկերացնում իրենց գլխավոր աստվածությունը քրիստոնյաները, մահմեդականները, եզդիները, բոշաները...։ Արդյոք այդ աստվածությունը անմիջական գործակցություն ունենում էր մարդու հետ, երևում էր նրան, ձրտեղ և ինչ հանգամանքներում։

2. Կան արդյոք տեղական ավանդություններ մեկի մասին, որը մեռել և հետո հարություն է առել։

3. Ինչպես էին տեղական քրիստոնյաները պատկերացնում Աստվածածնին։ Ինչպես, ում և ձրտեղ է նա երևացել մարդկանց. տեղական ավանդություններ։ Կան տեղում նրան նվիրված եկեղեցիներ, մատուռներ։ Ո՞րտեղ կային նրա հրաշագործ պատկերները։ Ջե՞ր ընդունում նա որևէ կենդանի կնոջ կերպարանք (ռուսական աղանդավորների մոտ)։ Ինչ կոչումներ էին տալիս Աստվածածնին։

4. Ինչ սուրբեր (փիրեր) էին ամենից ավելի պաշտվում տեղում. նրանց նվիրված եկեղեցիները, մատուռները, խաչքարերը և այլ սրբավայրերը։ Ո՞ր սուրբերն էին ավելի պաշտված, ընդհանուր եկեղեցական, թե ազգային հայկական. չկա՞ն գուտ տեղական սուրբեր։ Ինչ էր պատմում բնակչությունը սրբի (փիրի) մասին, մանավանդ տեղականի մասին, սրբավայրերի հրաշագործությունների։

5. Պաշտոնական եկեղեցու վերաբերմունքը այն ուխտավայրերին, որտեղ պաշտվում էր աղբյուրը, լուսո գագաթը, պուրակը, նահատակի գերեզմանը և այլն։ Կա՞ այդտեղ կառուցված մատուռ, «բեմ». տարվա ո՞ր օրն էր պատարագ մատուցվում։

6. Ինչպես էին վերաբերվում սուրբերի պատկերներին։ Թե՞ւյլ էր տրվում մասնավոր տներում պատկեր դնել։ Մասնավոր տներում գտնվող հրաշագործ պատկերները ո՞ւմ մոտ էին,

ուժից ստացված, ով էր դիմում նրանց հրաշագործ զորությանը և ինչ դեպքերում, ինչ ձևով։ Ինչպես էին պատկերների սեփականատերերը օգտվում ընակչության անահավատությունից։

7. Կային տեղում մատնավոր հրաշագործ գրքեր (ավետարան, նարեկ), խաչեր, մասունքներ. որտեղ և ում մոտ։ Նրանց զորությանը դիմելու դեպքեր։ Ինչ կոչում էին տալիս այդ գրքին (Կարմիր ավետարան), խաչին։ Ինչ էին պատմում այդ հրաշագործ իրերի մասին։

8. Տեղական աղանդներ։ Ինչպես էին նրանք վերաբերվում տեղական սրբավայրերին և սուրբ իրերին։

9. Ինչպես էին վերաբերվում հոգևորականներին, ինչպիսի անահավատություններ և ծեսեր էին կապված նրանց հանդիպելու, երազում տեսնելու, նրանց տված օրհնանքի, անեծքի հետ։ Բնակչությանը նրանց մատուցած «ծառայությունների» ձևերը (բացի զուտ պաշտոնական կրոնի թելադրած պարտականություններից)։

10. Ինչքան ծախքեր էր անում մի ընտանիք իր կրոնական «պետքերի» վրա մինչև ռևոլուցիան։ Ինչ պայքար էր մղվել կրոնական անահավատությունների դեմ, ում կողմից և ինչ ձևով։ Եղել են դեպքեր եկեղեցիների կամ մզկիթների փակման և այլ պետքերի (ինչպիսի) համակացման։

11. Ռևոլուցիայից հետո և հատկապես սովետական օրով տեղի ունեցած փոփոխությունները։ Ջանազան հասարակական տարրերի վերաբերմունքը (կոնկրետ դեպքերի նկարագրություն) դեպի եկեղեցիների և մզկիթների փակման դեպքերը, դեպի հոգևորականները։ Եթե կրոնական դգացմունքը պահպանվել է, ինչ ուղղություն է ստացել։ Ավելի արագ վերանում են պաշտոնական կրոնի հետ կապված անահավատությունները, թե ավելի հին, նախնական, «հեթանոսական» հավատալիքների հետ կապվածները։

2. ՃԱԿԱՏԱԳԻՐ ԵՎ ԲԱԽՏ

1. Տեղացոց ունեցած հասկացողությունը ճակատագրի մասին։ Կարելի է մեկի ճակատագիրը գուշակել. ինչպես։ Հնարավո՞ր է ճակատագրից խուսափել (տեղական պատմություններ այդպիսի փորձերի մասին)։

2. Արդյոք ճակատագիրն ու բախտը միևնո՞ւյնն էին հա-

մարվում։ Կարելի էր բախտը գուշակել. ինչպես։ Կարելի էր գուշակել այս կամ այն գործողության (վարմունքի) բախտավոր կամ անբախտ, հաջող կամ անհաջող լինելը. ինչպես։ Կարելի էր բախտը շրջել, փոխել. ինչով։ Ե՞րբ էր բախտը մարդուց երեսը շուռ տալիս։

3. Կային այնպիսի մարդիկ, կենդանիներ, իրեր, որոնց հետ կապված էր բախտավորությունը (հաջողությունը) կամ անբախտությունը (անհաջողությունը)։

3. ԳԵՏՆԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

1. Ջրի կոչում գետինը «մայր»։ Ջրի երդվում գետնով։ Ջէրին դնում հողը բերանը և ինչ դեպքերում։ Չկար սովորություն որոշ դեպքերում գետինը հավատարելու։ Չկային այնպիսի վայրեր, որտեղ երբեք թույլ չէր տրվում հերկել կրոնական առարկություններով, և հատկապես ինչու։ Կային այնպիսի վայրեր, որտեղ դրված երբ դառնում էր «առաքա», այսինքն որևէ մեկի ձեռք տալուց պաշտպանված։

2. Ո՞րտեղից վերցված հողը առանձնապես գորավոր էր։ Սովորություն կար հայրենիքի հողը հետը վերցնելու օտարություն գնալիս, հեռավոր ճամբա ընկնելիս. ինչու էր այդ արվում։

3. Չկային առանձին հովիտների, ձորերի, վարելահողերի, դժոատեղերի և այլ տեղերի ոգիներ. նրանց անունները, արտաքինը, բնավորությունը, փոխադարձ հարաբերությունները. ավանդություններ նրանց մասին։ Ի՞նչպես էին այդ ոգիներին սիրաշահում և նրանց բարկությունից պաշտպանվում։

4. Գետնի երեսին ապրող ոգիներ (ծննդկանի պահակած տեղը, տան շեմքը...), նրանցից պաշտպանվելու միջոցները (շրջան գծելով, երկաթե շղթա ձգելով...)։ Մարդու մարմնով նրանց բարձրանալուց պաշտպանվելու եղանակները (ոտքին զնգզնգան ապարանջաններ անցկացնելը, շամփուրին հենվելով ոտքով կոխելը)։ Ե՞րբ էր արգելվում գետինն ավլելը, գետնին տաք ջուր թափելը և ինչու։

5. Կար սովորություն խմիչքից մի մաս (գինու թասից) գետնին թափելու. երբ և ինչ նպատակով։

4. ԼԵՌՆԵՐԻ, ԲԼՈՒՐՆԵՐԻ, ԺԱՅՌԵՐԻ ԵՎ ՔԱՐԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ. ՔԱՐԱՅՐՆԵՐ

1. Բնակչության պաշտած լեռները ու բլուրները. պաշտաման պատճառները, ռեալ և անահավատությամբ վերագրվող առանձնահատկությունները (ամենից շուտ արևի շողերով լուսավորվելը, քամու, անձրևի, փոթորկի, ձյան հյուսքերի պատճառ լինելը. անանցանելի լինելը. թշնամուց պաշտպանելը, գազանից լայն տեսարանի բացվելը, սրբազան քարայրի գլխին տեղավորված լինելը...), պաշտպամաև ձևերը (վերելքի արգելք, աղոթքի ժամանակ դեպի լեռը երես դարձնելը, ձոնված տոնով, ուխտագնացությամբ, ժամադով մեծարելը...). Զգմն սրբազան գագաթին արհեստական քարակուտեր, խաչքար, մատուռ, բեմ, գերեզման։ Կամ ավանդություն լեռնանցքի և առհասարակ լեռների ոգու մասին։ Ի՞նչպես էին նրան պատկերացնում, ինչպես էին նրան մեծարում, ինչ են պատմում նրա մասին։ Ի՞նչ հարաբերությունների մեջ էր գտնվում այդ ոգին վայրի կենդանիների, եղանակի ոգիների հետ։

2. Վտանգավոր լեռնանցքների պաշտամունք. Նրանցով բարձրանալուց առաջ և իջնելուց հետո կատարվող աղոթքները։ Ճամբորդներին լեռնանցքներում պաշտպանող սուրբերը։ Բերված նվիրաբերությունները—մատաղ, դրամ, գնդակներ, զգեստի կտորներ, քարեր։ Հատուկ աղոթքներ։

3. Նվիրական ժայռեր, քարեր և քարայրներ. Նրանց պաշտելու պատճառները (ընկնելու սպառնալից դիրքը, տակից աղբյուրի բխումը, վրայից ջուր կաթելը, քրտնելը և այլն). պաշտաման ձևերը. վիշապաքարեր, ֆալոսանման քարեր։ Ի՞նչ առիթներով էին գալիս պաշտելու այդ ժայռերը, քարերը, ո՛ր դեպքերում և ե՞րբ։ Ժայռերի և քարերի մասին եղած ավանդությունները. չէին պատժում մի քանիսի մասին, թե քարացած մարդիկ են կամ կենդանիներ։ Աստվածության, հերոսի կամ սրբի թողած հետքերը ժայռերի և քարերի վրա։ Այդ հետքերը պաշտվում էին արդյոք և ինչպես։

4. Պաշտվող արհեստական քարակուտեր։ Ինչպես էր վերաբերվում ամեն մի անցորդ նրանց և ինչո՞ւ։ Բնական քարակուտերի մեջ ապրող ոգիներ։

5. Սրբազան քարայրներ. որտեղ են գտնվում։ Նրանց հետ կապված ավանդություններն ու պաշտաման ձևերը։

6. Ի՞նչ զորություն էր վերագրվում զանազան թանկագին և կիսաթանկագին քարերին—ադամանդին, զմրուխտին, հակինթին, փիրուզին, գիշերին (ան քյահրաբար), սկյատին, կապույտ քարին և այլն։

5. ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

1. Կատարում էին արգյոք որևէ տոնական ծես, երբ կըտրում էին առանձնակի կանգնած մի կանաչ կամ խիտ սաղարթով ծածկված ծառ։ Որևէ ազոթք արտասանվում էր ծառերի կամ թփերի մեջ խճճված մարդուն կամ կենդանուն ազատելիս։ Տարվա սկզբին չէի՞ն սպառնում պտուղ չտվող ծառին, որ կկտրեն, եթե նա պտուղ չտա։

2. Ջհան տեղում սրբազան ծառեր. նրանց բուսած տեղերն ու հատուկ անուններըր։ Ի՞նչպես էին ցուցարերում պատկառանքը դեպի այդ ծառերը (ճյուղերն ու տերևները չկոտրելով, ժոժ վառելով, ազոթք անելով, շուրջը պտտվելով, ժամաղ բերելով)։ Ի՞նչպես էին նրանց մոտ որոնում բժշկություն հիվանդություններից, փրկություն փորձանքից, փարատում վշտից, երեխա չունենալուց։ Ծառերի ճյուղերին շորի կտորներ ձգելը, շորի կտորներ կախելը, տիկնիկներ կախելը, շուրջը թել կապելը, տակը պառկելը երազ տեսնելու և այդ երազի հիման վրա գուշակություն անելու համար, սեռական հարաբերություններ այդ ծառի տակ երեխա ունենալու նպատակով...։ Հիվանդ անասունը բուժող ծառեր. չորանի նրանց մոտ կատարած ծեսերը։

3. Եթե ստիպված էին լինում սուրբ ծառը կտրել, ի՞նչ նախազգուշացման միջոցի էին դիմում։

4. Չէի՞ն հավատում, որ սուրբ ծառից շինած գերանի հետ ծառի ոգին դառնում է տան հովանավոր ոգի։

5. Ո՞ր ծառերն էին (բույսերը) համարվում հատուկ զորություն ունեցող (քաշնի ծառը աչք տալու դեմ) և ինչի՞ դեմ (կաղնուն վերագրվող զորությունը)։ Որոշ ծառեր կամ ծաղիկներ չէի՞ն առաջացել մարդուց կամ նրա որևէ մասից—ավանդություններ։ Ո՞ր ծառերին բնակչության կարծիքով կայծակը չի խփում։ Ի՞նչպես էին վերաբերվում կայծակնահար ծառին։ Ջհան սովորություն որոշ դեպքերում տունը ծառերի ճյուղերով զարդարելու, որոշ տոներին ծառեր կտրելու և գյուղ բերելու (ծաղկազարդ...)։

6. Ի՞նչ ավանդություններ կան գանազան ծաղիկների, խոտերի և այլ բույսերի ծագման մասին։ Ո՞ր բույսերն են իրենց մոգական (մագիկ) զորությամբ ձկնասակար և որոնք օգտակար և ինչո՞ւ. (օրինակ՝ ի՞նչ ավանդություն կա լոշտակի մասին. ի՞նչպես էին դուրս հանում նրա արմատը և նրանով դուշակություն անում։ Դուշակություններ սիրե-սիրի ծաղկով...)։

7. Սրբազան պուրակներ և անտառներ. նրանց որտեղ գտնվելը և ինչ ծառերից բաղկացած լինելը. ինչո՞ւ էին նվիրական համարվում։ Ցկան արդյոք առանձին ընտանեկան սրբազան պուրակներ և ո՞վքեր, երբ և ինչպես էին նրանց պաշտում։

8. Ցկի՞ն հավատում արդյոք անտառային ոգիների գոյությանը։ Ինչպես էին նրանց անվանում։ Ի՞նչ էին պատմում նրանց սեռի, արտաքինի, բնավորության, կենցաղի, մարդկանց և վայրի կենդանիների հետ ունեցած հարաբերության մասին։ Անտառի ոգիները չէի՞ն ստանում մարդու կերպարանք։ Ինչպես մարդ կարող էր պաշտպանվել անտառային ոգիներից անտառով անցնելիս (շորի մեջ ասեղ ցցելով, մազեր պոկելով...)։ Ավանդություններ անտառային ոգիների մասին։

6. ՋՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

1. Ո՞ր աղբյուրներին, գետերին, լճերին տեղացիք վերագրում էին հրաշագործ զորություն և համարում էին սրբազան. ի՞նչ էին պատմում նրանց ծագման և կատարած հրաշքների մասին։ Նրանց ջրի զորությունը հիվանդություն բժշկելու, կնոջ կամ անասունի կաթը ավելացնելու, երաշտ վերացնելու, արտերի և ծառերի բերքը ավելացնելու համար։ Ջրի զորությունից օգտվելու եղանակները (խմելով, ճակատին կամ մարմնի այլ մասերին քսելով, մեջը լողանալով, ամանով տուն տանելով. տանելիս ճամբին ի՞նչպիսի ծեսեր պիտի կատարվեին)։ Պատմություններ կատարված հրաշքների մասին։ Ի՞նչ ձևով էր կատարվում պաշտամունքը (մոմ վառելով, մատաղ բերելով, ցորեն ձգելով)։ Աղբյուրների և վտակների մոտ կառուցած մատուռները. ավանդություններ նրանց մասին։ Այդ աղբյուրների անունները։

2. Ցկի՞ն հավատում ջրի ոգիներին. ի՞նչ անուն էին տալիս նրանց։ Նրանց սեռը, արտաքինը, բնավորությունը, կենցաղը, առավելապես որտեղ բնակվելը։ Այդ ոգիների վերաբեր-

ժունքը դեպի անասունն ու մարդիկ (արդյոք ջրի մեջ խեղդվողը նրանց գերվածը չէ՞ր)։

3. Չէիր երգվում ջրով։ Չէիր գնում աղբյուրի մոտ և ձեռ կատարում ծննդաբերությունից, որևէ հիվանդությունից հետո և ուրիշ դեպքերում։

4. Չէիր աղոթում և այլ ձևով հարգանք ցույց տալիս ջրերի ոգիներին ձկնորսները ձուկ որսալուց առաջ կամ հետո։ Բացէիր թողնում բռնած ձկան մի մասը կրկին ջրի մեջ. ինչո՞ւ։

5. Դիշերը դետի, աղբյուրի, ջրհորի գլխին կռանալիս երեսը չէիր խաչակնքում, չէիր տալիս սրբի անունը։ Դիշերը ջրի վրայից անցնելիս կամ թռչելիս ինչ նախազգուշական միջոցների էին դիմում։

6. Սուրբ աղբյուրի հետ (սուրբ Հակոբի աղբյուր) կապված թռչուններին։ Այդ թռչուններին ջրի հետ տեղափոխելը մորեխի կամ երաշտի ժամանակ։

7. Աղբյուրի, գետի, ջրհորի ջուրը օրհնելու դեպքեր։ Օրհնած ջրի մեջ լողանալը, եկեղեցուց բերած օրհնած ջրով հիվանդին լողացնելը, պղծած աման լվանալը, ժաքրելը...։ Դուշակություններ և աղոթք անելը ջրով։ Բժշկելը աղոթած ջրով, նվիրական ամանով վերցրած, գորավոր քարայրի և սուրբ առաքյանների ջրով։

8. Որոշ տոներին իրար ջուր սրսկելը, իրար ջրի մեջ նետելը։

9. Ջրի «գողությանն» ծեսերը հավերժման տոնին։

7. ԿՐԱԿԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

1. Ի՞նչպես էին տեղացիք հնում կրակ հանում (չախմախով, շփումով)։

2. Չէիր համարում կրակը կննդանի էակ. ավանդություններ, թե ոմն և ինչ հանգամանքների մեջ մարդուն սովորեցրեց կրակ հանել և օգտվել նրանից։

3. Պաշտում էին արդյոք կրակը. ինչո՞վ էր հայտարերվում այդ պատկառանքը. (չեն թքում կրակի մեջ, չեն հանգցնում ջուր, կաթ ածելով)։

4. Երդում և անեծք կրակով, ածուխով, օջախով, թոնրով։

5. Արդյոք կրակը օջախի մեջ մշտապես անմար էր պահ-

վում՝ Ո՞ւմ պարտականությունն էր հսկել, որ չմարի կրակը, Ի՞նչ էին ասում, երբ կրակը հանգչում էր։

6. Սովորություն չկար որոշ օրերին հին կրակը հանգցնելու և նորը վառելու սրբազան կրակից (եկեղեցուց բերած վառած մոմով, տյառնընդառաջի կրակով)։

7. Ո՞ր օրերին և ո՞ր դեպքերում կրակ չէին տալիս տանից։

8. Կրակի և օջախի ոգիները։ Նրանց անունները, սեռը, արտաքինը, բնակության տեղը, կենցաղը, բնավորությունը։ Ո՞ւմ պարտականությունն էր նրանց սիրաշահելը, ե՞րբ և ի՞նչպիսի նվիրաբերություններով և աղոթքներով։

9. Ի՞նչ ծեսերի, դուշակությունների, մնահավատ գործողությունների ժամանակ գործ էին ածում կրակը, ածուխը, կայծքարը, չմխմխը...

10. Ո՞ր տոներին կրակը որոշ դեր էր խաղում (խարույկներ վառելը, վրայից թռչելը, շուրջը պարելը, կրակը վեր նետելը)։ Ի՞նչ նպատակով էր այդ արվում և ո՞վքեր էին այդ գործողություններին մասնակցում։

11. Չէի՞ն ձգում կրակի մեջ կերակրի մի մասը ուտելիս, աղոթք անելիս, զոհաբերության ժամանակ, հաց թխելիս։ Մատաղ անելիս մատաղացուի արյունը չէի՞ն կաթեցնում տան օջախի մեջ։

12. Օջախ (թոնրի) պաշտամունքը ի՞նչպես էր երևան գալիս հյուրընկալության, պայմանագրության, ընտանիքի անդամների իրարից բաժանման և այլ դեպքերում։

13. Անթեղը և նրա մասին ասած հավատալիքները։

8. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ ավանդություններ կային զանազան կենդանիների, թռչունների, ձկների, միջատների ծագման մասին։ Ո՞ր կենդանիներն էին ասածու և սուրբերի հատուկ հովանավորության տակ, ո՞ր սուրբերի և ինչո՞ւ։

2. Տվյալ կենդանու գույնի, ձայնի, մարմնի շարժման և այս կամ այն մասի հետ շաղկապված անահավատություններ։ Մասնավորապես՝

1. Շուն: Ի՞նչպես էին վերաբերվում հովվական, բակի, որսորդական շանը—համարում էին մաքուր, թե պիղծ։ Մեղք չէին համարվում շան հետ վատ վարվելը, վատ կերակրելը, սպանելը։ Չէին վերագրում շանը ընդունակություն ոգիների ներկայությունը, մարդու հիվանդությունը, մահը նախատեսելու և մարդուն նրանց մոտենալու մասին զգուշացնելու։ Ի՞նչ էր նշանակում կամ զուշակում շան ոռնոցը և ինչպես էին խույս տալիս այդ ոռնոցով զուշակած չարիքից։ Ի՞նչ էր նշանակում շան ոռնոցով հոր փորելը։ Չէին հավատում, թե շան արածելը քանդության կամ էժանության նշան է։ Չէին հավատում, որ այս կամ այն չար ոգին վախենում է շանից կամ սոսկ նրա անունից։ Չէին տալիս երեխային շան անունը, որ չար ոգին, հիվանդությունը և այլն նրան չմոտենան։ Սև շան ունեցած հատուկ զորություն։ Չկա ավանդություն, որ շունը լիզելով առողջացրել է ծանր վիրավորվածին կամ կենդանացրել է սպանված մարդուն։ Շան դերը հանդերձյալ կյանքում (չի՞ օգնում նա ննջեցյալի հոգուն մաղն կամուրջով անցնելիս և այլն)։ Շանը հովանավորող ոգին կամ սուրբը. նրա պաշտամունքը. ավանդություններ։ Շան մաղն ու ատամը որպես թլիսմ և որպես դեղ։ Շան գանգի վրա երեխային լողացնելը։

2. Կատու: Ի՞նչպես էին վերաբերվում առհասարակ կատվին և մասնավորապես նրա այս կամ այն տեսակին (օրինակ՝ սևին)։ Մեղք չէին համարում նրան սպանելը. ինչու՞. ինչո՞վ կարելի էր այդ մեղքը քավել։ Ի՞նչ դեր էր խաղում կատուն հանդերձյալ կյանքում։ Կատվի և ալքերի ու չար ոգիների հարաբերությունը։ Ի՞նչ էր նշանակում կատվի այս կամ այն շարժումը (դունչ լվանալը և այլն)։ Ինչի՞ զուշակություն էր համարվում կատվի արածելը (ամն, ինա, քանդություն...)։ Չէին դնում կատուն մանկան օրորոցի մեջ, նախքան երեխային նրա մեջ պառկեցնելը. սպիտակ կատվի հետ կապված սնահավատություննները։ Կատվի արտի և մարմնի այլ մասերը որպես դեղ և կախարդության միջոց։ Չկար կատվին հովանավորող ոգի կամ սուրբ. այդ սուրբին պաշտելու ձևը։

3. Ձի: Ի՞նչպես էին նրան վերաբերվում։ Չէին թաղում ձին տիրոջ հետ միաժամանակ նույն գերեզմանում. նրա դերը հուղարկավորության միջոցին։ Ձիուն հովանավորող սուրբը,

Նրան պաշտելու ձևերն ու վայրերը. տոները: Ձիու գանգը որպես պահպանակ: Ձիու դուշակողական ընդունակությունները ճանաչարհ գնալիս և հավատալիքներ այդ բանի մասին:

4. Կովն ու եզը: Ի՞նչպես էին նրանց վերաբերվում: Ննջեցյալի հուղարկավորության միջոցին սիրած եզանը հատկացվող դերը: Եզներին ու կովերին հովանավորող սուրբը. Նրա պաշտամունքի վայրերը: Կովերի և եզների տոնը: Կովի մեզը, թրիքը, ուղեղը, մարմնի այլ մասը, որպես դեղ: Եզան և կովի գանգը որպես արտի կամ տան պահպանակ, պաշտպան: Ինչու՞ են պահում եզան գանգը և փակցնում գոմի այունից, տան սեմին...

5. Այծ: Նրա կապը չար ոգու հետ: Նրան հովանավորող ոգին: Արդյոք չէի՞ն պահում այծը գոմում չար ոգուն վանելու համար: Տոնակատարություններ այծի պես հագնվելով (դիմակ, եղջյուրներ):

6. Ոչխար. խոյ: Նրանց ունեցած կապակցությունը ոգիների հետ: Նրանց հովանավորող ոգին (սուրբը) և նրա պաշտամունքը: Նրա գանգը որպես պահպանակ:

7. Խոզ: Խոզի դունչը որպես հմայիլ: Ավանդություններ, թե ինչպես մարդը խոզ է դարձել. ինչու՞: Ձմեր, թե բարի կենդանի է համարվում:

8. Աքլոր և հավ: Աքլորը արշալույսին իր կանչով չէ՞ր փախցնում չար ոգիներին: Չէի՞ն հավատում, որ կա երկնային աքլոր և ի՞նչպես է նա կանչում: Չէի՞ն վերագրում առանձին նշանակություն սև, սպիտակ կամ կարմիր աքլորին: Չէ՞ին հավատում աքլորի անժամանակ կանչելը փորձանքի դուշակություն: Ի՞նչ էին անում այդպիսի դեպքում: Ի՞նչ էին անում աքլորի պես կանչող հավին: Հավերին հովանավորող ոգին և նրա ձևվերը: Հավի ոսկորի, արյան և փետուրի գործածությունը որպես դեղ կամ կախարդության միջոցին: Աքլորով մատաղ:

9. Չէի՞ն թխում խմորից անային կենդանիների ձևով հացեր. ո՞ր կենդանիների, ե՞րբ և ի՞նչ առիթով:

բ. ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

1. Գայլ: Ի՞նչ կապ ունի նա չար ոգու հետ: Գայլին սիրաշահելու եղանակները (որոշ ժամանակ զոհաբերություն մատուցելը, աղոթք անելը, որդեգրելը): Դևկապ: Գայլի մազը, աստվը, ճրագուն և այլն որպես հմայիլ: Նրա ոտի միջով անցկացնելը:

Գայլի ամոթոցքը համարվում էր անվախության միջոց։ Ի՞նչպես էին պահում այն։ Գողին գտնելը գայլի թաթի, ջրի օգնությամբ։ Գայլի հետ կապված նշանահանումները։ (Ճամբադ կտրեց՝ հաջողություն է)։ Ավանդություններ մարդու գայլի կերպարանք ընդունելու մասին. հերոսին իր կաթով մեծացրած քած գայլի մասին։

2. Արջ։ Չէ՞ն պատժում, որ արջը մի ժամանակ մարդ է եղել։ Ավանդություններ մարդու և արջի իրար հետ ունեցած սեռական հարաբերությունների մասին և այդ հարաբերությունից ծնունդի մասին։ Ավանդություններ մարդուն (վանքին) արջի ծառայելու մասին։ Արջի գերեզմանները սրբավայրերում և նրանց վրա բժշկություն և այլ օգնություն հայցելու եղանակները։ Արջի ճրագուն որպես դեղ։ Արջի ժապը, առաձները, ճանկերը և այլն որպես հմայիլներ։

3. Աղվես։ Նրան սիրաշահելու ձևերը։ Նրա հանդիպման հետ կապված գուշակություններ (ճամբադ կտրեց՝ հաջողությո՞ւն է, թե անհաջողություն)։ Աղվեսի մորթին որպես հմայիլ։ Ե՞րբ է ծնում նա (արևով, անձրևի՞ միջոցին)։

4. Ձախակ։ Նրա ոռնոցի հետ կապված գուշակություններ։

5. Վարազ։ Նրա ժանիքը որպես հմայիլ։ Ավանդություններ մարդու վարազ դառնալու մասին։

6. Նապաստակ։ Եթե միսը չեն ուտում, ինչու՞։ Հանդիպման հետ կապված գուշակությունները (ճամբադ կտրեց՝ վատ նշան է)։ Նապաստակի ականջները որպես հմայիլ։

7. Ջրջիկ։ Նրա կապը չար ոգու հետ։ Նրա մարմնի առանձին մասերի գործածությունը որպես դեղ և որպես հմայիլ։

8. Ոզնի։ Նրա փշերը տան գռան գլխին կախելը տունը չար աչքից պահելու համար։

9. Աղավնի։ Ի՞նչպես էին նրան վերաբերվում։ Սուրբ աղավնիներ. ի՞նչ էր սպասում նրանց սպանողին։ Չէ՞ն պատժում, թե սիրելը վնացել է աղավնիներից։

10. Միծեռնակ։ Ի՞նչպես են նրան վերաբերվում։ Ի՞նչ է սպասում նրան սպանողին, նրա բունը քանդողին։ Ավանդություններ, թե ինչու՞ միծեռնակի պոչը ճղված է, թե ինչպես միծեռնակը փրկել է մարդուն և այլն։

11. Սարյակ։ Սուրբ աղբյուրների հետ (սուրբ Հակոբի) կապված սարյակները։ Ինչու՞ չի կարելի նրանց սպանել և բունը

քանդել։ Ավանդություն, թե ինչպես է իմանում սարյակը, որ մոտիկ կա...

12. Կկու։ Ի՞նչ է նա ասում իր կանչով։ Կա՞ն նրա առաջին գարնանային կանչի հետ կապված սնահավատություններ։

13. Հոպոպ։ Ճի՞ն պատմում, որ ժամանակով նա կին է եղել։ Նրա փետուրները որպես հմայիլ։

14. Բու։ Նրա և նրա կանչի հետ կապված սնահավատություններ. ինչպես հեռացնել նրա կանչով նախագուշակած փորձանքը։ Բուի ոսկորները որպես կախարդության միջոցներ։

15. Ագռավ։ Նրա կռավոցի հետ կապված սնահավատություններ։ Ավանդություններ, թե ինչպես ագռավը փրկել է մարդուն (իրեն ձգելով թունավորված կաթսայի մեջ)։ Ի՞նչպես սիրաշահել ագռավին, որ ճուտեր չդողանա, ցանքերը չփչացնի։

16. Կաքավ։ Նրա կանչի հետ կապված սնահավատություններ։

17. Արծիվ, Անգղ։ Նրանց մասին եղած ավանդություններ։ Արծվի փետուրներն ու ճանկերը որպես հմայիլ։ Արգելվո՞ւմ է արծիվ սպանելը. ինչո՞ւ։

18. Օձ։ Մեղք, թե լավ բան էր համարվում օձ սպանելը։ Ճի՞ն արգելում սպանել տունը ներս մտած օձին։ Չկա՞ն ավանդություններ տանը բախտավորություն բերող օձի մասին։ Տան բարեբախտ բերող օձի պաշտաժունքը։ Պատմություններ օձերի թագավորների, հղյուրավոր, սպիտակ օձերի, օձի բերանից գցած ատամների և այլն մասին։ Օձի շապիկը որպես հմայիլ։ Օձի մարմնի մասերը որպես դեղ։ Օձի խայթելուց պաշտպանող կամ բժշկող աղոթքներ և խրթե։

19. Գորտ։ Նրա կապը անձրևի հետ (սպանես՝ անձրև կգա)։ Չէ՞ր արգելվում գորտ սպանելը։ Ի՞նչ կապ ուներ գորտի հետ կնոջ բեղմնավորվելը։ Գորտը կամ նրա պատկերը որպես հմայիլ։ Գորտը որպես դեղ։ Զբերությունը գորտի միջոցով բուժելը։ Գորտը ընդդեմ «կոխի»։

20. Կրիա։ Նրա պատյանը որպես դեղ և հմայիլ։

21. Տզրուկ (սուլյուկ)։ Տզրուկը ժողովրդական բժշկության մեջ. նրա ձևն ունեցող զարդերի գործածությունը. ինչ նպատակով։

22. Միջատներ—մաղե, շերամ, մրջյուն, բզեզ, մորեխ, սարդ, ճանճ, մոծակ։ Արդյոք այս կամ այն միջատը (ճանճը) կապ

չունեը մարդու հոգու կամ չար ոգու հետ։ Մեղք չէին համարում ժեղու, շերամ, սարդ սպանելը. ինչու՞, ի՞նչպես էին սիրաշահում ջրաստակար միջատներին կամ ինչ կախարդական միջոցներով էին նրանցից պաշտպանվում կամ նրանց ոչնչացնում։

23. Խոտնջներ և սադափ. նրանցից շինած իրերը (զարդեր) որպես համալիներ մարդու և կենդանիների համար։

գ. ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

1. Ջևեն գրույցներ և ավանդություններ առասպելական կենդանիների (մեկեղջերանի այծ, եռոտանի ձի, թևավոր ձի, թևավոր խոյ, կեսկին կեռաձուկ...), թռչունների (զմրուխտ ղուշ, հաղարան բլբուլ), սողունների (վիշապներ, շահմար օձ) և այլն մասին։ Ի՞նչպես էին նրանց պատկերում. ինչպիսի առանձնահատկություններ էին նրանց վերագրում։

9. ՄԵՏԱՂՆԵՐ

1. Ի՞նչ են պատմում մետաղների ծագման մասին։

2. Ի՞նչ են պատմում ոսկերչության և դարբնության սկզբնավորության մասին։

3. Ոսկուն և արծաթին վերագրվող զորությունը։ Ինչ գործողություն կատարելիս պետք է հանել ոսկի կամ արծաթե զարդը։

4. Երկաթին վերագրվող մոգական զորությունը։ Երկաթի (պողպատի) և երկաթե իրերի (օդակների, մատանիների, չախմախների, շղթաների, բևեռների...) գործածությունը որպես չար ոգիներից պահպանող իրերի՝ ծննդաբերության, մանուկ լողացնելու, հարսանեկան, թաղման, հիվանդությունից բժշկելու ժամանակ և այլ դեպքերում (կայծակնահար լինելուց փրկելը)։

5. Պողպատե պայտին վերագրվող զորությունը։

6. Երկաթից շինած սուր գործիքներն ու զենքերը (խոփ, դանակ, դաշույն, թուր, ասեղ, գնդասեղ, շամփուր...) որպես չար ոգիներին դուրս վանող իրեր։ Ե՞րբ և ո՞ր դեպքերում էին նրանք այդ նպատակով գործածվում և ինչ եղանակով։ Երգվում էին ձեռքը երկաթեղենին դրած. ո՞ր դեպքերում։

7. Արգելք որոշ դեպքերում սուր գործիքներ գործածելու (մի քանի ծեսերով դանակով հաց կտրելու, պատանքի կտորը

մկրատով կտրելու...), որոշ հիվանդությունների ժամանակ ծննդկանի կողքին։

8. Կախարդելու, աղոթելու, «կապելու» ժամանակ երկաթի և այլ մետաղների գործածությունը. ինչ եղանակով։ Այդ միջոցին արտասանվող խոսքերն ու աղոթքները։

9. Ջնդանի պաշտամունքը։ Ջնդանի առջև աղոթելը, երդվելը, ժամ վառելը, որոշ օրերին կռանը զնդանին զարկելը. վերջին գործողության հետ կապված ավանդություններ։

10. Չէին պատմում, թե երկինքը երկաթից (պողպատից) է շինված, թե կայծակը մի կտոր երկաթ է։

11. Ինչ դերություն էին վերագրում պղնձին և այլ մետաղներին։

12. Դարբնությունը, ոսկերչությունը հովանավորող սուրբերը։ Նրանց պաշտամունքի վայրերը, օրերը և ձևերը։

10. ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

1. Ավանդություններ աշխարհի ստեղծագործության մասին։

2. Ինչ կոչումներ են տալիս աշխարհի կողմերին և ինչպես են սուգպարանում այդ անունները։

3. Ինչ է երկինքը։ Ո՞րչափ նա բարձր է երկրից. չե՞ն պատմում, թե ժամանակով նա ավելի մոտիկ է եղել երկրին։ Ո՞րտեղ է նրա սկիզբն ու վերջը։ Քանի՞ երկինք կա. ինչից է ամեն մեկը շինված. ինչ կա նրանց վրա։ Չի՞ պատմվում, թե երկինքը երբևէ պատռվում է. ինչ է այն ժամանակ պատահում։ Ե՞րբ է բացվում երկինքը և ինչ է այն ժամանակ երևում. ով կարող է այդ տեսնել. կատարվո՞ւմ է արդյոք նրա արտահայտած ցանկությունը։

4. Ինչ է արևը՝ տղա՞ թե աղջիկ։ Իսկ լուսինը։ Ինչ հարաբերություն կա արևի և լուսնի միջև, ինչո՞ւ մեկը ցերեկով է երևում, մյուսը գիշերով։ Շաբաթվա որ օրն էր համարվում արևին նվիրված և որը լուսնին։

5. Ինչո՞վ են բացատրում արևի շուրջը գոյացող շրջանները, արևի գանազան դուրս ստանալը։ Ինչի՞ նշան են համարում այդ երևույթները։ Արշալույս և վերջալույս. նրանց հետ կապված դուշակությունները։ Ինչո՞ւ են ասում՝ «արևը մայր է մտնում»։ Ի՞նչպես են պատկերում արևի ճաժրորդությունը։

6. Չկայծն արևապաշտության դեպքեր—արևով երդվելը,

արևին աղոթքով դիմելը (արևածագին), նորածնին արևին ցույց տալը և այլն։ Զկայլին մանկական խաղեր արևը դուրս կանչող, մանավորապես երկարատև անձրևների ժամանակ։

7. Սովորություն չկար խարույկներ վառելու, օրինակ՝ աբևադարձին, դիշերահավասարին և արևի շրջանի զանազան մոմենտներին. այդ ժամանակ կատարվող ծեսերը։

8. Զկին թխում արևի սկավառակի ձևն ունեցող հացեր։ Դրանց հետ կապված ծեսերը, երբ էին կատարվում և ինչ նպատակով։

9. Ինչպես էին բացատրում արևի խավարումը։ Սովորություն չկար աղմուկ բարձրացնել, հրացան արձակել և այլն, ինչու։

10. Լուսին։ Ինչով էին բացատրում նրա վրայի բծերը, շրջանները նրա շուրջը։ Ինչից են առաջ գալիս նրա զանազան փազերը։ Նորալուսնի հետ կապված սովորությունները։ Ինչպես են ազդում լուսնի զանազան հասակները այս կամ այն պարապմունքի և զբաղմունքի հաջողության վրա (ցանքի սկզբնավորության, ճամբորդության սկզբնավորության վրա...) եղանակի, անձրևների վրա։ Ինչպես են իմանում՝ լուսնի որ օրն է։

11. Ինչով էին բացատրում լուսնի խավարումը։ Ինչ էին անում այդ ժամանակ և ինչու։ Գիրք են ածում կիսալուսնի (ճնոր») ձև ունեցող զարդեր։

12. Ինչ են աստղերն ու համաստեղությունները։ Աստղերը քանիսն են, ինչպես են երկնքին մնում, ինչու ցերեկը չեն երևում։ Աստղերի և համաստեղությունների անունները։ Նրանց հետ կապված ավանդություննները։ Ինչ կապ ունեին նրանք մարդկային կյանքի հետ. աստղերից որոնք էին բարենպաստ, որոնք չար։ Ինչպես էին հովիվները կապում աստղերի հետ հոտը արածացնելու ժամերը։

13. Ինչ են վայր ընկնող աստղերը. ինչ էին անում կամ ասում վայր ընկնող աստղը տեսնելիս։

14. Ինչ է հարդագողի (գարմանգողի) ճանապարհը։ Ավանդություններ նրա ծագման մասին։

15. Ինչ են գիսավոր աստղերը և ինչ են նրանք գուշակում։ Ինչպես էին վերաբերվում նրանց երևալուն։

16. Ինչ է ծիածանը (կամուրջ, գոտի, աղեղ և այլն)։ Իր ծայրերով որտեղ էր նա հենվում։ Գուշակությունները նրա

դուչներով։ Ինչ կպատահի աղջկան կամ տղամարդուն, եթե անցնի ծիածանի տակով։

17. Ինչից են առաջ գալիս ամպրոպն ու կայծակը։ Ինչպես են վարվում (և բժշկում), եթե կայծակը զարկի մարդուն, կենդանուն, ծառին, քարին...։ Կայծակնահար եղածները սուրբ էին համարվում, թե մեղավոր։ Ինչպես էին նրանց թաղում։ Հանգցնում էին արդյոք կայծակից առաջացած հրդեհը, ինչով (կաթով) և ինչպես։ Ինչպես էին իրենց կամ իրենց մանուկներին և տունը պահպանում կայծակից։ Չկար արդյոք կայծակի աստվածուհյուն կամ սուրբ. նրան սիրաշահող աղոթքները, զոհաբերություններ, տոներ։

18. Ինչից է սեղի ունենում կարկուտը. ինչպես էին պահպանում արտերն ու այգիները կարկտահար լինելուց։ Ինչպես էին կանգնեցնում սկսվող կարկուտը։

19. Ինչից են առաջ գալիս անձրևը, ձյունը, մրրիկը, եղյամը, ցողը, մառախուղը։ Անձրև առաջ բերելու հնարները երաշտի ժամանակ։ Ինչպես էին կանգնեցնում երկարատև անձրևները։

20. Ինչ է ամպը, թուխպը, ծրտեղից են նրանք իրենց ջուրը վերցնում։

21. Ինչից են առաջ գալիս քամիները, ով է նրանց առաջացնողը, ինչով կարելի է կասեցնել կամ առաջ բերել քամին (օրինակ՝ շվշվացնելով)։ Ինչ է «սատանի քամին» հողմապտույտը (ուշաթ)։ Ինչպես են նրանց ցրում։

22. Ինչից է առաջ գալիս ցուրտն ու սառնամանիքը։ Չէին պատկերում սառնամանիքը որպես կենդանի էակ, ինչպես էին նրան սիրաշահում, որ ձյուս չպատճառի ցանքերին և անասուններին։

23. Երկիրը ինչ ձև ունի և ինչի վրա է հաստատված։

23. Ինչից էր առաջ գալիս երկրաշարժը (ժաժք)։ Ինչ է հրաբուխը. նրա հետ կապված ավանդություններն և անահավատությունները։

25. Ինչ է արձագանքը։

11. ՈԳԻՆԵՐ

1. Ինչ հասկացողություն ունեին ոգիների մասին։ Չէին դանազանում չար և բարի ոգիներ, կին և տղամարդ։

2. Որպիսի ոգիներին տալիս էին «հրեշտակ» անունը և

ինչ էին պատմում նրանց ծագման մասին, ինչպես էին նրանց պատկերում։ Հավատում էին, որ ամեն մարդ ունի իր պահապան հրեշտակը և ինչ նշանակություն էին տալիս նրան։ Զանազան հիվանդություններ (ծաղիկը, կարմրուկը...) ունեին իրենց հրեշտակները, ինչ է «հրեշտակակոխը». «հոգեհաս» հրեշտակներ։

3. Ի՞նչ անուններ էին տալիս չար ոգիներին (դև, սատանա, մեղսեն աղեկներ, չարք, այսք, ալք, տրդա, քաջք, դրոդ...) և ինչ կերպարանքով էին պատկերացնում նրանց. ինչով էին նրանք իրարից զանազանվում։ Ի՞նչ կերպարանքով էին նրանք երբեմն երևում մարդկանց։ Չար ոգիների կենցաղը։ Բնակության վայրերը։ Ունե՞ն նրանք կին, երեխա, աճում, բազմանում են։ Կապակցություն ունենում են մարդկային ցեղի կանանց կամ տղամարդկանց հետ և ինչ է լինում այդպիսի կապակցության հետևանքը։ Նրանց զվարճություններն ու կատակները։ Արդյոք չար ոգիները չէ՞ն զողանում անկնունք երեխաներին և նրանց տեղ իրենց երեխաներին դնում։ Չէ՞ն ժանում ախորը, հեծնում ձիու մեջքը, նրա բաշը հյուսում և այլն։ Չէ՞ն զողանում կանանց դժեսանները, չէ՞ն մտնում բերանը բաց և ջրով լիքը անոթի մեջ, չէ՞ն ժանում հորանջողի բերանը։ Առհասարակ ինչ տեսակ ձևսաներ են պատճառում մարդկանց չար ոգիները։ Ի՞նչպես են մարդիկ պաշտպանվում նրանց պատճառած կամ պատճառելիք ձևսաններից։

4. Ի՞նչ էր շվոտը, տարվա որ ժամանակ և ինչ կերպարանքով էր նա երևում մարդկանց։ Ինչո՞ւ փետրվար ամիսը շվոտի ամիս էին կոչում։ Ի՞նչպես էր նա խփում մարդկանց և ինչ ձևսաններ էր նրանց հասցնում։

5. Պատահե՞լ է որ մարդ բռնած լինի չար ոգուն և իրեն ծառայեցրած։ Պատմություններ այդպիսի դեպքերի մասին։

12. ԿԱՄԱՐԴՆԵՐ, ԹՈՎԻԶՆԵՐ, ԳՐԲԱՃՆԵՐ

1. Ի՞նչ տեսակ մարդկանց վերագրում էին գուշակելու և կախարդելու ընդունակություն։ Նրանք ավելի պատահում էին տղամարդկանց, քա՞ն կանանց մեջ։ Ի՞նչպես էին նրանց անվանում, նայելով նրանց սեռին, հատուկ մանագիտությանը։

2. Ո՞վքեր էին կախարդությամբ զբաղվողները, տեղացի՞ք, քա՞ն եկվորները (ուրտեղից)։ Դարձրել էին իրենց համար արհեստ, քա՞ն դա իրենց հասակի հետ ձեռք բերած հմտություն էր, որով

ձրիաբար օգնում էին իրենց դիմողներին (աղոթք անող պառավ-ներ)։ Ո՞ւմից էին ձեռք բերել գուշակելու և կախարդելու հմտու-թյունը. ժառանգական էր որոշ ընտանիքների մեջ, սովորած էր, օտար կախարդից (դրացից), գրքերից, թե ստացել էր սրբից (ինչպես նրազում, սուրբի դառնը...։ Չէին վերագրում հոգևորա-կաններին կախարդելու շնորհք։ Կախարդելու (ինչ գրքեր կան տեղում (ախթարքներ)։

3. Չէին վերագրում որոշ հիվանդություններ, անհաջողու-թյուններ, փորձանքները այս կամ այն ոչ թե ունալ գոյություն ունեցող կախարդին, այլ առհասարակ մի ինչ-որ կախարդ մար-դու, անհայտ չադու կնոջ (ծծուժի, խնոցու վրա հեծնող պա-ռավին...)։ Ի՞նչպես էին անվանում այդպիսիներին, ինչպես էին պատկերում նրանց արտաքինը. ինչով էին տարբերվում սովո-րական մարդկանցից։

4. Չէին պատմում, որ կախարդություն անողները կապ ունեն որևէ չար կամ բարի (սուրբ) հոգու հետ (ինչպես, ասրետը, երբ էին նրա հետ տեսնվում), որ նրանք երբեմն ժամանակավորա-պես ընդունում են այս կամ այն (որ) կենդանու կերպարանք և շրջում։

5. Կախարդություն և թովչություն անողները ինչ իրերի և գործիքների (ցորեն, գաբի, ածուխ, աղ, ժաղ, դանակ, հայելի, գիրք, խաղաթուղթ, ջրով աման, եղունգ, ձեռքերի խաղեր...) օգնությամբ և ինչ եղանակով էին իրենց գուշակություններն անում։ Ի՞նչ տեսակ գործողություններ և իրենց շինված ինչ տեսակ իրերով (հմայիլ, հեքյալ, դաղդան...), ինչ խոսքերով (աղոթքներ, գրեր), ինչ խորհրդավոր գծագրություններով և այլ ինչ եղանակներով էին գոհացնում իրենց օգնության դիմողնե-րին։

6. Չէին վերագրում չադու պառավներին լուսինը, աստղերը ծածկելու ընդունակություն։ Ե՞րբ, ինչպես և ինչու էին նրանք այդ անում։

7. Ի՞նչպես էին վերաբերվում կախարդներին, թովիչներին, դրբացներին, չադու պառավներին, ինչպես էին վարձատրում նրանց։

8. Ի՞նչ եղան տեղական կախարդները, թովիչները, դրբաց-ները սովետական իշխանության հաստատվելուց հետո։

13. ՄՈԳԱԿԱՆ ՀՆԱՐՆԵՐ

1. Նման գործողությունով նմանը առաջ բերելը

ա) Կապելով մի իր՝ գայլի բերանը կապելը (գելկապ), թաշկինակով նորափեսային և նորահարսին իրար հետ միացնելը, հանդույց կապելով նորափեսայի առնական ընդունակությունը կապելը...

բ) Բանալով, քակելով հանդույցը, առագաստի գիշերը կնոջ գոտին արձակելը՝ բեղմնավորվելու ընդունակությունը արձակելու համար, ծածկված ամաններին բերանը բանալով ծննդկանի երկունքը հեշտացնելը։

գ) Կոտրելով, ջարդելով—հովվի մահակը սուրբ ծառի առաջ կոտրելով՝ տավարի հիվանդությունը կոտրելը։ Հարսանիքի ժամանակ աման կոտրելը, նույնը խնճույքի ժամանակ (Ինչո՞ւ էին ամանը կոտրում ննջեցյալի հետից)։

2. Մասով ամբողջի վրա ազդելը. *չնետել կտրած եղունգը, մաղը, առատը, որ վերցնողը քեզ էլ իր իշխանության տակ չառնի։ Զի առնելիս առնձն էլ վերցնել, որ ձիուն տրամադրելու իշխանությունը չլինա նախկին տիրոջ ձեռքին։ Ինչու հացը փոխ տալիս մի կտոր կտրում թողնում են, կաթը փոխ տալիս մի մասը թափում են։ Ինչու չեն թողնում հացի փշրանքը, չվերջացրած կերակրի մնացորդը...*

3. Պատկերով կամ ձևով իրը փոխարինելը. *պատկերը ջնջելով ջնջել տիրոջը (պատկեր հանվելու երկյուղը), հիվանդ. ոտքի փոխարեն նրա ձևը սրբի մոտ թողնելը։*

4. *Հիվանդության, վշտի հանձնելը նրանով «փոխել» է հիվանդին, վշտահարին—հիվանդությունը, վիշտը ջրով լվանալը պատճառ եղած ննջեցյալի դիերեզմանի վրա։*

5. Կապելով կամ հանգուցելով *զգացմունքը կամ հոգեկան (մարմնական) կացությունն ուրիշին փոխանցելը կամ հանձնելը—թելով հիվանդին վեցթաթելը և նույն թելը ծառերին կապելը. հիվանդի զգեստի վրայից վերցրած ժապավենով քարը կապելը և սրբի մոտ թողնելը. սիրահարվածի վրայից վերցրած մաղով կամ որևէ կտորով հանգույց անելը և նրա սիրո առարկայի շորերի մեջ կապելը...*

6. Դատարկության երկյուղ. *դատարկ կժին, տակառին, դույլին պատահելը վատ նշան է. դատարկ օրորոցը չեն օրորում. ամանը դատարկ չեն վերադարձնում։*

7. Շրջանի մագական ուժը. *մատաղացուի շրջեցնելը այն մարդու գլխով, որի համար նա պիտի մորթվի. ծննդկանի անկողնի շուրջը շրջան գծելը։*

8. Օդակի միջով, ծակով անցնելը. *հիվանդությունից, թշնամությունից, վշտից փարատվելու համար սրբավայրերում քարի տակ, քարակույտի մեջ, ծառերի արմատի տակ գոյացած բացվածքներով անցնելը. (եկեղեցու կամ մատուռի պատուհանի միջով հիվանդ երեխային անցկացնելը)։*

9. Խոսքի մագական զորությունը. *աղոթք, օրհնանք, անեծք, հայհոյանք, բարեմաղթություն, կենաց...*

10. Անվան մագական զորությունը. *չքնո տալիս անունը՝ հարսը տանեցիներինը, երեխաները ծնողներինը, շերամապահները մկներինը, մրջյուններինը... ինչու՞ Ինչու՞ են հիվանդության ժամանակ անունը փոխում, ինչո՞ւ կենդանիների և առհասարակ վատ անուններ տալիս նորածնին այն ընտանիքում, որտեղ երեխաները մեռնում են։*

11. Բախտավոր (թեթև) ձեռք կամ ոտք ունեցող մարդիկ. *նոր տարին թեթև ոտք ունեցող հյուրով սկսելը, առևտուրը, ցանքսը, հունձը, պտղաքաղը, բոժոժահավաքը, մեղր կտրելը, երեխային առաջին անգամ խուզելը «թեթև» ձեռք ունեցողների ձեռքով սկսելը։*

12. Աջ և ձախ ձեռին ու ոտքը. *ինչու՞ վատ է ձախ ոտքով վեր կենալը. ինչու՞ նորահարսը աջ ոտքով պիտի մտնի վենսայի տան շեմքից...*

13. Չար աչք. *ի՞նչպիսի մարդկանց աչքը ավելից հաճախ չար է լինում (կապույտ աչք ունեցողը, շիկահերը...)։ Չար աչքի դեմ առնվող միջոցները։*

14. Լուրյունը. *բժշկական բույսեր հավաքելիս, գանձ որոնելիս, հրաշագործ ջուր բերելիս...։*

15. Ետ չնայելը. *երբ ննջեցյալին էին տանում, գողացած իրն էին թագցնում...*

16. Գույների նշանակությունը. *կարմիր գույնի, կանաչ-կարմիր գույնի (թևեր, ժապավեններ, թաշկինակներ...), կապույտ և այլ գույների։*

17. *Ի՞նչ տեսակ հմայիլներ և հեքյաներ էին գործածվում. գործածողները ովքեր էին և ինչ նպատակով։ Ո՞վքեր էին պատրաստողները։ Ամենից հաճախ գործածվող հմայիլները ու հեքյաները ինչ նյութից էին շինված, ինչ ձևի, ինչ գույնի, ինչ*

նախշերով, ինչ գծագրություններով, ինչ պարունակությամբ։ Ո՞ւմ համար էին շինված (հասակավոր տղամարդու, կնոջ, որ հասակի), երեխայի, կենդանու, ծառի... համար։ Ի՞նչպես էին այդ իրերը կախվում, ինչից և առհասարակ ինչպես էին գործածվում։

14. ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչպես են բացատրում, թե ինչ է երազը։ Երազը որպես գալիքի նախազգուշացում։ Ի՞նչ միջոցներով կարելի է ունենալ նախազգուշակ երազ։ Երազը մեկնելու հատուկ հմտություն ունեցող մարդկանց միջոցով, գրքերով (գրչագիր և տպագիր երազահաններ)։ Սովորական երազների մեկնությունները, որ ընդհանուրի մեջ տարածված են։ Ի՞նչ տարբերություն կա երազի և տեսիլքի մեջ։ Վատ երազի գուշակածից ազատվելու միջոցներ։

2. Ի՞նչպես էին բացատրում նախազգացմունքը։ Երազի և նախազգացմունքի դեպքերի մասին պատմություններ։ Վատ նախազգացմունքի հետևանքից ազատվելու միջոցներ։

3. Ի՞նչ էին գուշակում մարդու մարմնի դանազան մասերի խաղալը (ականջի կանչելը, ձեռքի քոր գալը, աչքի խաղալը, փռշտալը որոշտալը), կենդանիների, ծառերի ձայները և շարժումները։

15. ՊԱՍԵՐ, ՄԱՏԱՂ, ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ, ԵՐԴՈՒՄ

1. Բացի եկեղեցու սահմանած պասերից տեղացիք այլևս ինչ կամավոր պասեր էին պահում և ինչ նպատակով։ Ի՞նչ են պատմում այդ կամավոր պասի ծագման մասին (Թալալոսի պաս, վկան կիրակի, հնձի պաս, հորթաթողի, նախրաթողի պաս)։ Ո՞րը էին պահում. ինչ նպատակով։ Ի՞նչ սովանդություններ կան նրանց մասին։

2. Մատնավոր և հասարակական կյանքի որ դեպքերումն էին մատաղ բերում։ Ո՞ր դեպքում ինչ կենդանի էին մատաղ բերում, ոչխար, այծ, եզ...)։ Բերում էին արդյոք մատաղ էգ կենդանի (հավ, մաքի, կով)։ Եթե չէին բերում, ինչու։ Ի՞նչպես էր մատաղ բերվում յուրաքանչյուր կենդանին։ Որոշվում էին տանը, թե սրբի մոտ (մասնավոր և հասարակական մատաղները)։ Գառը,

ոչխարը, եղը մորթելիս նախ ուտեցնում էին աղ՝ օրհնած աղ (ով էր օրհնում), թե առանց օրհնելու։ Անհրաժեշտ էր արդյոք քահանայի ներկայությունը։ Պատեցնում էին մատաղը սրբավայրի շուրջը կամ հիվանդ մարդու գլխի շուրջը (որ կողմից որը) և քանի՞ անգամ։ Կար տարբերություն մատաղ մորթելու և սովորական մորթելու ձևերի մեջ։ Ի՞նչ էին անում մատաղի միսը. որ մասը ո՞ւմ էին տալիս։ Մատաղ ուտելու ձևը։ Թույլ էր տրվում մատաղի մսի մի մասը տուն տանել։ Հասարակական մատաղի համար անհրաժեշտ գումար հավաքելու ձևերը։ Հասարակական մատաղի առիթով տեղի՞ էին ունենում հասարակական ճաշեր։

3. Ուխտագնացություն առանց նախօրոք ուխտ անելու և ուխտ անելով։ Ի՞նչ առիթներով և ինչպես էին ուխտ անում։ Ուխտ անելու տեսակները (ծոմ, պաս պահել, մատաղ բերել, սրբի մոտ գնալ, տախտին չնստել...)։ Ուխտադրուժ լինելու դեպքում ինչ պատիժներ էին կրում։

4. Տեղական ուխտատեղիներ։ Նրանց որտեղ գտնվելը. տեսակները (մանրամասն նկարագրություն)։ Ո՞ր դեպքերում, ինչ նպատակներով, քանի՞ ժամանակով և երբ էին ուխտ գնում այդ վայրերը, ինչպես էին գնում (ոտաբոբիկ, առանց հետ նայելու)։ Ուխտավորների ժամանցը ուխտատեղում։ Ի՞նչ տեսակ ծեսեր էին կատարում (ջուր խմելը, ծակերով անցնելը, հողն ուտելը, պատին քար կպցնելը...)։ Ինչ է խաչալվան և ամեն ուխտատեղում կատարվում էր այդ սովորությունը։ Տեղի ունենում էին ուխտատեղում բազար, խաղեր (լարախաղաց, ձիարշավ, ըմբշամարտություն, ճոճ...), պարեր (հատկապես ինչպիսիք)։ Ի՞նչ էին թողնում ուխտավորները այնտեղ և ինչ էին այնտեղից իրենց հետ վերցնում։ Վերադարձին ինչ խոսքերով էին դիմում պատահողներին։ Ո՞րքան էր նատում մի ուխտագնացությունը միջին ընտանիքի վրա։ Ի՞նչ նվերներ էին բերում ուխտավորները և ո՞ւմ։

5. Հնագույն ուխտագնացություններ—Երուսաղեմ, Սուրբ Կարապետ, Էջմիածին, Մեքքա, Մեշխեդ...։ Ե՞րբ, ո՞ր հասարակական խավի մարդիկ, ինչ ձևով (մենակ, թե խմբովին), ինչ նախապատրաստություններով և ինչ ճանապարհներով էին գնում։ Այդ ուխտագնացության ծախքը։ Ի՞նչպես էին վերաբերվում «մահտեսիներին» և «հաջիներին»։

6. Ինչո՞վ էին երդվում (հացով, աղով, արևով, աստծով,

սրբով, ավետարանով...), ինչ եղանակով և որտեղ (քոնքի ժամ...)։ Երդման դարձվածքները։

16. ՀԱՆԴԵՐՁՅԱԼ ԿՑԱՆՔ

1. Ի՞նչ է հոգին, քանի նա մարմնի մեջ է։ Կամ տարբերությունն ողամարդու և կնոջ, երեխայի և հասակավորի հոգու միջև։ Հոգին մարդու մարմնի գլխավորապես որ մասումն է գտնվում։ Ի՞նչ ճանապարհով է նա դուրս գալիս մարդու մարմնից մահվան րոպեին և ինչ ձև է ընդունում։

2. Կենդանիներն էլ հոգի ունե՞ն։ Որո՞նք։ Ինչո՞վ է կենդանու հոգին տարբերվում մարդու հոգուց։

3. Ձէ՞ն կարծում, թե երբեմն մարդու հոգին անասունին է անցնում. ինչ տեսակ մարդու և ինչ տեսակ մահով մեռած մարդու։

4. Ի՞նչ են լինում անկնունք մեռած երեխաների, խեղդվածների, անթաղ մնացածների հոգիները։ Թափառո՞ւմ են, թե որոշ տեղում բնակվում։

5. Ո՞ւր է գնում հոգին մահից հետո ժամանակավորապես և մշտապես։ Անցնում է այս աշխարհից հանդերձյալ աշխարհը մոդե կամուրջով։ Չի՞ դիմավորում նրան նրա արած բարությունը, որպես մի մարմնացած գեղեցիկ աղջիկ։ Ովքե՞ր են ընդունում հոգուն հանդերձյալ կյանքի մուտքի մոտ։

6. Այցելո՞ւմ է արդյոք հոգին իր նախկին տունը և գերեզմանը։ Շարունակո՞ւմ է նա կապ պահպանել իր տանեցոց հետ, մասնակցո՞ւմ է նրանց ուրախությանն ու վշտին։ Պահանջո՞ւմ է նրանցից հարգանքի ապացույցներ դեպի ինքը։ Բարկանո՞ւմ է տանեցոց վրա և ինչ։ Ի՞նչ են պատճառում տեղացիք իրենց ննջեցյալների այցելությունների մասին։

7. Ի՞նչպես էին պատկերում տեղացիք դրախտն ու դժոխքը։ Ո՞վ է նրանց պահապանը։ Ի՞նչպես է որոշվում՝ որ հոգին պիտի գնա դրախտ և որը դժոխք։ Այդ դասավորումը տեղի է ունենում մարդու մեռնելուց գրեթե անմիջապես, թե ահեղ դատաստանից հետո։ Ի՞նչպես էին պատկերում ահեղ դատաստանը։ Եթե հոգիները պիտի ապասեն ահեղ դատաստանին, որտե՞ղ են նրանք մինչ այդ մնում։ Ի՞նչ հրաշագործություններ են սպասվում դրախտում և ինչ չարչարանքներ դժոխքում։ Ինչո՞վ կարող են կեն-

դանել՝ մարդիկ թեթևացնել իրենց ննջեցյալների հոգիների տանջանքները հանդերձյալ կյանքում։

8. Ի՞նչպես էին պատկերում աշխարհի վերջը։ Ի՞նչ է լինելու այնուհետև։ Տեղի է ունենալու արդյոք ընդհանուր հարություն և հոգիները միանալու են իրենց մարմինների հետ։ Ի՞նչպես։

VI. ՏՈՆԵՐ

1. Ե՞րբ էր սկսվում տարին և ինչպես էր նա բաժանվում։ Տարվա եղանակների անունները և նրանց սկզբնավորությունները։ Ամիսների անունները. ամիսներին տրվող բնութագրությունը։ Շաբաթվա օրերի անունները. այդ օրերից որոնք էին համարվում ավելի նպաստավոր այս կամ այն (ինչ) աշխատանքի համար։ Ե՞րբ էին սկսում օրը։ Օրվա մասերի անունները։ Ի՞նչպես էին չափում ժամանակը (գործիքը, նշանները)։ Դիմում էին աստղաբաշխական դիտողություններին ժամանակը չափելու համար։

2. Ո՞ր օրերին արգելվում էր աշխատել, որ ժամերին այս կամ այն աշխատանքը ընդհատվում էր։ Ի՞նչ պատժի էին ենթարկվում այս արգելքը խախտողները։ Ո՞ր օրերին արգելվում էր ամուսնական հարաբերությունը։ Տարվա տոները։

3. Նոր տարի (նովրուզ)։ Նավասարդ, կաղանդ տոնելու ժամանակը։ Հին տարու փորձանքներից և դժբախտություններից ազատագրվելու ծեսերը (քոթուկ վառելը)։ Զէլֆն շրջում տնեիտուն (ինչպես հագնված) ուլ կամ այծ ածելով։ Ծեսեր՝ նկող տարվա աջողություն ու բախտավորություն ապահովող (առաջին այցելուի թեթև ոտքը, ձեռքով շփումը այն իրերին, որոնց առատությունը ցանկանում են ունենալ. արգելք տանից մի բան դուրս տալու. վատ վարմունքներից խուսափում. նոր ղգեստ, նոր աման, նվերներ)։ Տոնական թխվածքներ և քաղցրեղեն (կաղանդ, գոզինաղ)։ Ե՞րբ և որ օրն էր պատրաստվում տարվա հացը, «կրկենին» և ինչպես էին դուշակում, թե ուր կամ ինչի վրա է լինելու այդ տարվա բարեբաղդությունը։

4. Մնուցիդ և ջրօրհնեք—թաթախման դիշերվա հետ կապված սովորություններն ու երգերը։ Պատրաստվող կերակուրները։ Ջրօրհնեք կատարելու ձևը։ Այդ տոնի հետ կապված հավատալիքները, օրինակ՝ թե այդ գիշեր բոլոր ջրերը մի առ

ժամանակ կանգ են առնում և եթե մի բան ընկղմես ջուրը և խնդրես, իրը կիսովի քո ուզածի պես, երկաթը ոսկու)։

5) Առաջավորաց պաս։ Սուրբ Սարգիս։ Սուրբ Սարգսի մասին տեղական ավանդություններ։ Ինչու՞ էր նա միշտ ձիավոր նկարվում։ Նախընթաց ուրբաթ օրվա ծեսերը։ Այդ տոնին պատրաստվող կերակուրը կամ քաղցրեղենը (փոխինդ, աղի բլիթ...), Հավատում էին արդյոք, թե սուրբ Սարգիսը այդ գիշեր ամեն տուն այցելում է (նրա ձիու պայտի հետքը փոխինդի վրա)։ Գուշակություններ այդ գիշերվա երազով, առավոտյան կատարելիք ձագած փոխինդով։ Երգերը։ Սուրբ Սարգսի քամին։

6) Բարեկենդան։ Ո՞րքան էր նա տևում։ Ի՞նչպես էին բացատրում նրա անունը։ Ջունեին նրա առանձին օրերը առանձին կոչումներ։ Տոնվում էր վարդանանց տոնը։ Ավանդություններ և երգեր այդ տոնի առիթով։ Ի՞նչպիսի կերակուրներ և քաղցրեղեններ էին պատրաստվում բարեկենդանի օրերին։ Հաստակավորների և փոքրերի ժամանցը, նրանց խաղերը (ժանրաժանր նկարագրություն)։ Կամ խանի կամ քյուռեայի հանդես, ինչպես էին երիտասարդները հագնված այդ հանդեսին. ներկայացման ժանրամանրություններ։

7) Տյառն ընդ առաջ։ Նրա տեղական անունը։ Կամ արդյոք սովորություն խարույկ վառելու. որտեղ։ Ովքե՞ր էին բերում վառելանյութը (ինչ տեսակի—փայտ, ծղոտ, խոտ) և ինչ ձևով էին դիզում։ Ովքե՞ր էին խարույկը կրակ տվողները. նրա պատասխանների դերը այդ օրը։ Թռչում էին խարույկի վրայից (ովքե՞ր և ինչու՞)։ Պատմում էին նրա շուրջը (ովքե՞ր, ինչու՞ և ինչպես), այրում էին նրա կրակով հագուստի ծայրը. ինչ էին անում կրակը, մոխիրը...։ Գուշակություններ խարույկի, կրակի, մոխրի և ծուխի միջոցով։

8) Մեծ պաս։

ա) Առաջին շաբաթ։ Տան մեջ տեղի ունեցող պատրաստություններ(ամաններ սրբելը, առաստաղից սոխ կախելը, ակլատիզ)։ Ի՞նչ է կռճոնքը։ Կամ սովորություն առաջին շաբաթվա բոլոր օրերը տոն («կիրակի») պահելու, նվիրելով ամեն մի օրը որևէ ջնասարար կենդանու (մկան, կատաղած շանը) կամ հիվանդության (ժանկան չդալկանալուն)։

բ) Միջինք։ Ո՞րպիսի կերակուրներ և քխվածքներ էին պատրաստվում այդ օրերը։ Այդ օրվա արգելքները (եղունգ

կտրելու, կար անելու, գլուխ լվանալու...)։ Ամաղերն ու երգերը Դիւրս էին գալիս գաշար։

գ) «Քառասուն մանկունք»։ 4-րդ շաբաթի շաբաթ օրվա հետ կապված ծեսերը։

դ) Ծաղկազարդ. այդ տոնի տեղական անունը։ Ո՞ր հասակին էր ավելի մանուկները այդ տոնին։ Եկեղեցում դիշերվանից կատարվող ծեսերը։ Կար սովորություն նոր նշանվածներին հրապարակորեն եկեղեցի հանդես բերելու և շնորհավորելու։ Այդ օրվա ուտելու ճյուղի գործադրությունը։ Երեխաների մեջ կար սովորություն տնեսուն «ծիծեռնակով» և կարկաչայով շրջելու ու ձու հավաքելու։ Այդ օրվա երաժշտական գործիքները, երգերը, խաղերը, պատրաստվող քաղցրեղենն ու կերակուրները։

ե) Ջաչչարաձի շաբաթ։ Նրա առանձին օրերի տեղական անունները։ Ի՞նչ նախապաշարումներ էին կապված այդ շաբաթվա ամեն մի օրվա հետ, մանավանդ հինգշաբթվա հետ (ինչ պարապմունքների արգելք)։ Ավանդություններ ոռնալվայի և սուգի մասին։ «Ուխի ուրբաթ» (Հուդայի ուրբաթ). նրա հետ կապված ծեսերը, գործողությունները (ուրբաթաբուր պողպատի մատանի, չամչախ)։ Ի՞նչ էին անում դարբինները այդ օրը. արդյոք լուռ էին մնում մատանին շինելիս և ինչու։

զ) Զատիկ։ Թաթախման երեկոյի հետ կապված սովորությունները։ Ի՞նչ նշանակություն էին տալիս կարմիր ձվին։ Ի՞նչպես էին նախշում ձվերը։ Ի՞նչ նախապաշարմունքներ էին կապված զատիկ օրվա հետ։ Սովորություն չկար այդ օրը պատարագին՝ մաղը երեսին բռնած՝ նայել արեգակին հարուցություն առած քրիստոսին տեսնելու համար։ Զատկական մատաղը (նրա տեղական անունը)։ Զատիկ օրվա խաղերը (զանազան հասակների)։

է) Ո՞րն է կարմիր, որը կանաչ կերակի. այդ անունների մեկնաբանությունը։ Այդ օրերին կատարվող ծեսերն ու խաղերը։ Ջեր արգելվում զատկից մինչև Համբարձումը երեկոները, եկեղեցու զանգերից հետո, կար անելը (հավկուր). ինչու։ Այլևս ինչ արգելքներ կային այդ քառասուն օրվա համար (երկրագործների, այգեգործների... համար)։ Մինչ Համբարձում ինչ օրեր էին տոնվում և մանավանդ ինչպես ու կողմից (համքարների) և ինչպես։

ը) Համբարձում։ Այդ օրվա հետ կապված ծեսերն ու սովորությունները։ Ի՞նչ է ծաղկամերը, խնդումը. ինչ տեղական

անուն էին տալիս դրան։ Ի՞նչպես էին պատկերում ծաղկամորը։ Նրա վունջը ինչ ծաղիկներից էր։ Ծաղերը, չէի՞ն հավատում, թե Համբարձման գիշերը (չորեքշաբթի) սուրբերը հյուր են գնում երկինք ասածումոտ՝ այնտեղ մինչև վարդավառը մնալու համար. աղջիկներն ու երիտասարդները չէի՞ն հետևում նրանց թռիչքին, իբրեև ուրացը հայտնելու համար. չէին հավատում, թե այդ գիշեր անշունչ առարկաները (մանավանդ ծաղիկները և խոտերը) մի առ ժամանակ լեզու են առնում, գետերն ու աղբյուրները կանգ են առնում, լեռները իրար ողջունում են։ Ինչ է «վիճակը». ինչպես էին նրան պատկերում. արդյոք ոչ իրրև շընչավոր էակ։ Վիճակ հանելու հետ կապված ծեսերն ու սովորությունները։ Ո՞րպիսի ծաղիկներ էին հավաքում վիճակի համար և ինչո՞ւ հենց այդ ծաղիկները։ Վիճակի երգերը։ Այդ օրվա կերակուրը (կաթնեղեն)։

10) Հոգեգալուստին կատարվող ծեսերը։ Արձակում էին թռչուններ և ինչպիսի. ինչպես էին բացատրում այս սովորությունը։

11) Վարդավառ։ Նրա տեղական անունը. ինչպես էին բացատրում այդ անունը։ Ծեսերն ու սնահավատությունները։ Կամր սովորություն ջուր սրսկելու, աղաղի արձակելու, ժամաղ ժորթելու, մամաղացու կենդանու եղջյուրները նախօրոք ներկելով և ծաղիկներով ու վառած մոմերով զարդարելով, կրակներ վառելու։ Այդ օրվա երգերն ու տաղերը։

12) Վերափոխումն Աստվածածնի։ Ծեսերն ու հանդեսները, երգերը։ Բացի եկեղեցում խաղող ու մրգ օրհնելուց, օրհնում էին պտուղներ այգիներում։ Լինում էր ընդհանուր խնճույք, հացկերույթ. եկեղեցում, թե որտեղ։

13) Սուրբ Խաչ։ Ծեսերը և սնահավատությունները։ Կամ սովորություն ժամաղ բերելու, թոնրի մեջ ուլ կախելու (խորովելու)։

14) Սուրբ Գևորգի տոնը։ Ծեսերն ու սովորությունները։ Ինչո՞ւ էր կոչվում «ծռաատոն»։ Ինչպես էին բացատրում Սուրբ Գևորգի պատկերի վրա վիշապ նկարելը։ Ավանդություններ Սուրբ Գևորգի մասին։

ԼԵԶՈՒ ԵՎ ԳԻՐ

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Լեզվական նյութեր հավաքելիս պետք է ձգտել տալ տեղական բարբառի արտասանությունը ամենայն հարազատությամբ։ Եթե տեղական հնչյունները արտահայտելու համար բավական չեն ընդհանուր գործածական այբուբենի տառերը, պետք է դիմել գիտության մեջ ընդունված տառադարձության պայմանական նշաններին, որոնք, օրինակ, հայերենի համար արդեն բավական մշակված են։ Եթե այդ նշանագրերն էլ չեն բավարարում լինելին, պետք է մշակել լրացուցիչ հատուկ նշանագրեր, օգտվելով հայկական և լատինական տառերից և նշանագծիկներից։ Սակայն վերջին երկու դեպքերում էլ անհրաժեշտ է նախ տալ բարբառի բոլոր հնչյունների տառադարձության համար բանահավաքի ընդունած բոլոր պայմանական նշանագրերի բացատրությունը։

1) Խոսելիս տեղացիք բառերը երկարացնում են, երգում են. դանդաղ են խոսում, թե արագ (տարբերությունները ըստ հասակի, սեռի, հասարակական դիրքի)։

2) Տեղական բարբառի բառարան։ Ի՞նչ բառեր են գործածվում ցույց տալու համար՝

ա. Ազգակցական և խնամիական կապերը. բ. ընտանեկան և հասարակական կյանքի առանձին մոմենտները. գ. բնակավայրեր, տուն, կահկարասիք, ամաններ, կերակուրներ, զգեստ, զարդեր և այլն և նրանց մասերը. դ. արհեստներն ու նրանց հետ կապված առանձին պարապմունքները, նրանց գործիքները. ե. կենդանիներ և բույսեր. զ. բնության երևույթներ, երկնային լուսատուներ և այլն. է. հավատալիքներ, մոգական գործողություններ. ը. երաժշտական գործիքներ, արվեստի զանազան ճյուղերի իրեր. թ. ածականներ. ժ. թվական անուններ. ժա. դերանուններ, ժբ. բայեր, ժգ. մակրայներ. ժդ. նախադրություններ. ժե. շաղկապներ. ժզ. միջարկություններ։

3) Տեղական բարբառի քերականությունը։ Գրի առնել այդ նպատակով առանձին նախադասություններ, դարձվածքներ, մանր և ավելի ընդարձակ պատմություններ, տալով տակը բառացի թարգմանությունը և քերականական ձևերի բացատրությունները։ Հանել միջից հոլովումներն ու խոնարհումները, եթե բառերի շեշտերը տարբերվում են գրականից՝ նշանակել։

4) Կան մասնավոր պայմանական լեզուներ—երեխաների, աղջիկների, արհեստավորների, հովիվների, որսորդների, գողերի և այլն։ Մանկական թոթովանք։

5) Ի՞նչ բառեր և դարձվածքներ են գործածվում ան. կենդանիներին դիմելիս, հայհոյելիս, նրանց մոտ կանչելու կամ հեռացնելու, կանգնեցնելու, այս կամ այն կողմը դարձնելու համար։ Տնային թռչուններին կանչելու, քշելու, կերակրելու միջոցին գործածվող բառերը։

6) Բարբառը ունի՞ ենթաբարբառներ, քանի՞ և ինչպիսի։ Ո՞րտեղ են տարածված։

7) Տեղական բարբառը տվյալ լեզվի բարբառների ո՞ր խմբին է պատկանում։

8) Ի՞նչ նշաններ են գործածում անգրագիտները գրերի և թվերի փոխարեն և ինչպես են նրանք կոչվում։

9) Ո՞րպիսի նշաններ և նախշեր են քանդակում արհեստավորները իրենց արտադրած իրերի (զենքերի, գարգերի, տաշած քարերի, աղյուսների) վրա։ Դնում են նշաններ սեփականություն ցույց տալու համար (անասունի, գործիքների վրա)։ Այդ նշանները անցնում են սերնդե սերունդ մեկ տոհմի մեջ. և ընտանիքը բաժանվելիս փոխվում են։

VIII. ԺԱՄԱՆԱՑ

1) Տեղացիների ժամանցը։ Ինչպես են զվարճանում մենակ, իրենց ընտանիքի անդամների հետ, իրար մոտ հյուր գնալիս, հատուկ շենքերում (խաներում, օթաններում) հավաքվելով կամ դուրսը, հասարակայնորեն։

2) Խաղեր—ընտանիքի մեջ (նարդի, քարտերով. քարերով, ոսկորներով, փայտերով). խաղեր մանկական, երիտասարդների, աղջիկների, պառավների... տարվա որ եղանակներին, որ տոներին, որ հանդեսներին։ Մանրամասն նկարագրություն խաղերի ժամանակ արտասանած բառերի, ոտանավորների, երգերի (պարտունակում են երբեմն խորին հնության հետքեր)։

3) Դիցաբվեստի տեղը ժամանցի զվարճությունների մեջ։

4) Ժամանցի մեջ տեղի ունեցած փոփոխությունները սովետական օրով։ Կոլխոզային շարժման, կինոյի, ռադիոյի և այլ գործոնների ազդեցությունը։ Ի՞նչ տարրերի միջոցով են ա-

վելի ուժեղ կերպով մտնում ժամանցի նոր ձևերը, կարմիր անկյուններն և ակումբների դերը։

IX. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Բացի ամեն ազգագրական նյութ գրանցելիս նախօրոք նըշված տեղեկություններից (տես վերը, ընդհանուր ցուցումները) պետք է նաև նշել։

1) Ո՞ւմից է լսել պատմողը կամ երգողը իր պատմածը կամ երգածը, երբ և ինչ հանգամանքների մեջ։

2) Երգը, պատմությունը և այլն վաղուց է ինչ հայտնի է տեղում, եթե նոր է մտել՝ որտեղից և երբ։

3) Ինչպես են անվանում տեղացիք այդ պատմածը կամ երգածը (խաղ, հեքյաթ, նաղըլ, մասալ, առակ, խոսք և այլն)։

4) Ձի միացած բանահյուսության տվյալ նմուշը որևէ ծեսի հետ։ Եթե միացած է, բանահյուսության նյութերով հատկապես զբաղվողը և հավաքողը պետք է նկարագրի և այդ ծեսը, նրան մասնակցողների բոլոր գործողությունները, գործածվող պարագաները, նշանակելով, թե ծեսի որ մոմենտի հետ է կապված լինում երգը, պատմությունը, օրհնանքը, անեծքը։ Եթե չի աջողվում գրի անցնել ծեսի ամբողջ նկարագրությունը, պետք է այնուամենայնիվ ճշտորեն նշել, թե բանահյուսական նմուշը ծեսի որ մոմենտի հետ է կապված։

5) Եթե երգը (հանելուկը...) կապված է որևէ պարի, խաղի, գործողության հետ, պետք է ճիշտ նկարագրել պարը, խաղը, գործողությունը։

6) Պետք է նշել, թե սովորաբար բանահյուսության այն նմուշը ինչ հանգամանքների մեջ է երգվում, պատմվում (երեկոյան, ձեռագործի ժամանակ, օրորոցի մոտ, երեխաներին քնացնելիս) և ինչ գործիքների դաշնակցությամբ։

7) Պետք է գրի անցնել ամենայն ճշտությամբ, խուլ չտալով կրկնություններից, պատմողի կոպիտ կամ բամբասակ դարձվածքներից, հենց նրա լեզվով։ Եթե նա գործ է ածել անհասկանալի բառ կամ դարձվածք, բերել բացատրությունը։

*8) Ընդհատել պատմողին կամ երգողին եթե կասկածում ես, թե արդյոք ճիշտ ես գրանցել, պետք է լսել նույնը երկրորդ անգամ և նոր դարձվածքներն ու բովանդակության մեջ մտցրած

փոփոխությունները գրել նորից տետրակի լուսանցքում, ոչինչ չջնջելով առաջին գրածի մեջ։

9) Աշխատել նախօրոք իմանալ, թե տեղում ով է լավագույն պատմողը, երգողը, և նրանից բանահավաքել։

10) Գրանցել նաև յուրաքանչյուր երգասացից, հեքյաթախոսից, լինի նա հասակավոր մեկը թե երեխա (վատ երգածը կամ պատմածն էլ նշանակություն ունի հետազոտության համար)։

11) Եթե կան իրենցից երգ, հեքյաթ հնարողներ, գրանցել նաև նրանց երգածն ու պատմածը։

12) Եթե մի հեքյաթ, երգ, առակ առանձնապես հաճախ է տարածված ավյալ վայրում, գրանցիլ այդ տեսակը որչափ կարելի է շատերի բերանից լսելով։

13) Երգը գրանցելիս աշխատել գրանցել նաև նրա եղանակը նոտագրելով կամ լավագույնն է ֆոնոգրաֆով։

Վերը նշված է, թե զանազան ծեսերի և սովորությունների առիթով ինչպիսի ավանդություններ, պատմություններ, երգեր ցանկալի է հավաքել այդ ծեսերի և սովորությունների նկարագրության հետ միաժամանակ և նրանց հետ հյուսված։ Այստեղ աչքի առաջ ունինք այն դեպքերը, երբ հավաքողը կուզենա բնագիրները գրի անցնել առանց ծեսերի նկարագրության.

ա) Վեպեր, առասպելներ, զրույցներ դիցաբանական։ Զրույցներ դևերի, վիշապների, ոգիների, վհուկների և այլնի մասին։

բ) Վեպեր և զրույցներ դյուցազունների, հերոսների, հսկաների և զաճաճների մասին։

գ) Պատմական ավանդություններ ամրոցների, աշտարակների, բնակավայրերի, լեռների, հին գերեզմանների, սրբավայրերի, գետերի և այլ վայրերի մասին։

Երգեր

ա) Կրոնական, առասպելական, զանազան տոների առիթով, անձրև բերելու, արև դուրս կանչելու, հիվանդությունը բուժելու, ծաղկի հրեշտակին սիրաշահելու և այլն։

բ) Պատմական երգեր—պատմական անձնավորությունների և դեպքերի մասին։

գ) Ծիսական երգեր—հարսանեկան, թաղման, ժեռեխների հիշատակին...

դ) Կենցաղային երգեր — սեղանի, երկրագործական, պարերգեր...

ե) Աշխատանքային երգեր — երկրագործի, հոտաղի, սելվոբի, հովվի, դարբնի, գործարանային...

զ) Ռազմական երգեր.—հայրենական պատերազմի երգեր։

է) Ընտանեկան երգեր, սիրահարական երգեր, վիճակի երգեր։

ը) Օրորոցի երգեր (դանդանաներ) և մանկական երգեր։

թ) Գանգրատության երգեր։

ժ) Աղքատների, մուրացիկների «խնդրանքներ»։

Հեքյաթներ:

ա) Դիցաբանական — հերոսները, արեգակ, լուսին, աստղեր, ամպեր, կայծակ, ծովային թագուհի, թագավոր, օխայ բարի...

բ) Չար և բարի ոգիների մասին։

գ) Դյուցազնական — հերոսներ, հերոսների արկածներ, մարդու պայքարը հսկաների, վիշապների, դևերի, չար ոգիների դեմ...

դ) Արտասովոր մարդկանց մասին — մարդակերի, շատակերի, շատախոսի, սրալուրի, արագոտնի, աշխարհ շրջողի...

ե) Կերպարանքը փոխողների։

զ) Կենդանական — հերոսները՝ աղվեսը, արջը, աքլորը, արծիվը և այլ կենդանիները։

է) Առօրյա կյանքից, կենցաղային և ծաղրաշարժ։

Առակներ (Մխիթար Հերացու, Եզոպոս, Լոխմանի...).

Մասալներ, անեկդոտներ (Մոլլա Նասրեդդինի), բամբասակ, ծաղրական (հիմար մարդկանց մասին)։

Առածներ, ասացվածքներ, շուտասելուկներ, հանելուկներ, անհեթեթություններ, ստախոսություններ, կատակներ, քնութագրումներ։

Թավշյա փորմուլաներ՝ զանազան մոգական գործողություններ կատարելիս։

Անեծքներ և օրհնանքներ:

ա) Բանահյուսության ձևերից որոնք են սերնդեսերունդ անցնում, որոնք են անհատական ստեղծագործության արդյունք։ Կան մասնագիտներ, վիպասաններ, տաղասացներ, հեքյաթ պատմողներ...

բ) Տնական գուսանները, աշուղները և նրանց դերը անհատական և ժողովրդական բանահյուսության գործում, նրանց կենսագրությունները։ Աշուղական երգերը։

գ) Ո՞րտեղ են պատժում, երգում բանահյուսության այս կամ այն նմուշը (խաղեր, քարվանսարաներ, շուկաներ, հրապարակ, սրբավայր)։ Այս կամ այն վեպի, երգի, պատմության.... և այլն տարածման պատմությունը—վաղո՞ւց է ժամել, ո՞րտեղից և ո՞ւմ միջոցով, ինչ փոփոխությունների են ենթարկել տեղում։

X. ԱՐՎԵՍՏ

1. Երգը լսելու և երգին մասնակցելու ձևերը։ Երգի մոտիվները, եղանակները։ Ո՞ր դեպքերում երգը, երաժշտությունը և պարերը իրար հետ հյուսվում են։

2. Երգեցողությունը ինչպես է տեղի ունենում. մենակ, երկուսով, խմբովին (քանի՞ մարդուց բաղկացած, քանի՞ ձայնով) երգելը։ Ի՞նչ նվագարանների ուղեկցությամբ են երգվում, որչափ տարածված է երգը տղամարդկանց, կանանց, զանազան հասարակական խավերի մեջ։ Սիրած եղանակները և բովանդակությունը։ Տեղական երգարաններ (ձեռագիր և տպագիր)։

3. Տվյալ եղանակը հատկապես նշված բառերի համար է հորինված, թե տեղացիների ասելով ուրիշ երգերին է պատկանում (որոնց). երբ է մտել։

4. Երաժշտությունն ո՞րչափ է նա տարածված զանազան սեռերի, հասակների և հասարակական խավերի մեջ։ Ամենից ավելի տարածված երաժշտական գործիքները, նրանց կառուցվածքը (գործիքի և նրա մասերի անունները) և ձայնական լարվածքը (строй)։ Ո՞ր դեպքերում որ գործիքն է դերադասում հարսանիքում, ուխտագնացությանը, ընտանեկան հավաքույթում, մենակ ժամանակ։ Ի՞նչ են պատմում յուրաքանչյուր գործիքի ծագման մասին։ Ո՞րչափ տարածված են նոր գործիքները և ո՞ւմ մեջ։ Մենավոր երաժշտության և խմբականի մեջ որ գործիքներն են իրար դաշնակցում։ Տարածված եղանակները, նրանց անունները, ծագումը։ Կան մասնագետ երաժիշտներ. ո՞ւմից են սովորել և ինչ պայմանների մեջ։

5. Պարեր*—կենտ պարեր և խմբական (կլոր, շուրջպար, գյոնդ, գյովանդ, յայլի...)։ Ո՞ր դեպքերումն են պարվում, ովքեր են մասնակցում։ Պարերի բառերն ու երաժշտությունը։ Պարերի

* Ճանկալի է պարերը զբաղեցնել կինո-լուսանկարներով կամ հատուկ մշակված նշանագիրներով, որոնց բացատրությունը պետք է առանձնապես տրվի։

անուններըը, պարերի ծագման մասին տեղացիների պատմածը։

6. Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել երգի, երաժշտության և պարի մեջ սովետական կարգերի օրոք։ Ո՞ւմ ազդեցության ներքո և ո՞ւմ միջոցով։

7. Կերպարվեստ։

ա) Նախշերը քարի (շեմքերի, գերեզմանաքարերի), փայտի (տների, սյուների, դռների ճակատին, սյուների խոյակների, կահկարասիքների, ամանների) վրա։

բ) Նախշեր կավեղենի (անոթների, աղյուսների) վրա։

գ) Նախշեր բրդե, բամբակե, մետաքսե թելերով գորգերի, կարպետների, ջեջիմների և այլն, գեստի մասերի (գուլպաներ, թաթմաններ, մեզարներ, գոդնոցներ, իշլիկներ, շալվարներ, գոլաշներ, գնդակներ) վրա։

դ) Նախշեր մետաղների (ամանների, արծաթե, ոսկե և այլ պարգերի) վրա։

ե) Զարդեր սայլերի, ձիու սարքի, զենքերի և այլի վրա։

8. Նախշերի սիրած ձևերը և գույները։ Ո՞րքիսի կենդանական և բուսական ձևերն են ավելի հաճախ վերարտադրվում (նկարվում, գործվում, փորագրվում)։ Արդյոք նախապաշարված չեն մարդուն և մանավանդ մարդկային դեմքը ներկայացնելու դեմ։

9. Գործելու, քանդակելու, փորագրելու, նկարելու և այլ կերպ պարդարելու միջոցին գործադրած գործիքները (նայելով նյութին) և աշխատանքի պրոցեսները։

10. Ովքե՞ր են կերպարվեստի այս կամ այն տեսակով զբաղվողները (կանանց, տղամարդի՞կ. տեղացի՞ք են, թե եկվոր)։ Զգացն մասնագետ վարպետներ։ Ո՞ւմ ազդեցությունն է նկատվում։

11. Ժողովրդական կերպարվեստի մեջ կատարվող փոփոխությունները սովետական կարգերի օրոք։ Սենյակները, տնային պարագաները, գգեստը և այլն զարդարելու և գեղեցկացնելու նոր ձևերը։ Ի՞նչպես է ազդում քաղաքը այդ գործում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Առաջաբան	3
Գործնական ցուցումներ	9
I. Ընդհանուր տեղեկություններ	13—15
1. Աշխարհագրական	13
2. Ժողովրդագրական	13
3. Մարդաբանական	14
II. Տնտեսական կենցաղ	15—30
1. Դաշտամշակություն	16
2. Այգեգործություն և պտղաբուծություն, գինեգործություն	18
3. Բանջարաբուծություն	19
4. Անասնապահություն, կաթնատնտեսություն	19
5. Թռչնաբուծություն	22
6. Ձիապահություն	22
7. Մեղվապահություն	23
8. Որսորդություն և ձկնորսություն	24
9. Տնայնագործություն և արհեստներ	25
10. Փոխանակություն և առևտուր	27
11. Հաղորդակցության միջոցները	28
12. Հաշիվ, չափեր	29
III. Նյութական մշակույթ	30—40
1. Բնակավայր	30
2. Շենքեր	32
3. Բնակարանի սարքավորում և կահավորում. Ամաններ	34
4. Ջրհոս և ջրբրաբանք	35
5. Կերակուր և խմիչք	36
IV. Սոցիալական հարաբերություններ	40—73
1. Տոհմ և ընտանիք	40
ա) Ամուսնություն, հարսանիք	44
բ) Տղաբերք և կնունք. Առաջին մանկատածություն	47
գ) Հիվանդություն և բժշկություն	51
դ) Մահ և թաղում	53
2. Դրացիություն	55
3. Դասակարգային շերտավորում	57
4. Համայնք	59
5. Իրավունք	61
1. Սեփականություն և իրավունք	61

2. Պայմանագրություններ 64
3. Բրեական իրավունք 67
4. Դատավարություն 71
V. Հավաստիիմներ 73—96
1. Պաշտոնական կրոն 73
2. Ձակատագիր և բախտ 74
3. Գետնի պաշտամունք 75
4. Լեռների, բլուրների, ժայռերի և քարերի պաշտամունք. քարայրներ 76
5. Բույսերի պաշտամունք 77
6. Ջրի պաշտամունք 78
7. Կրակի պաշտամունք 79
8. Կենդանիների հետ կապված սնահավատություններ . . 80
ա) Տնային կենդանիներ 81
բ) Վայրի կենդանիներ 82
գ) Առասպելական կենդանիներ . . . 85
9. Մեհյաններ 85
10. Բնության երևույթներ 86
11. Ոգիներ 88
12. Կախարդներ, քովիչներ, գրբացներ 89
13. Մոգական հնարքներ 91
14. Դուշակություններ 93
15. Պատեր, մատաղ, ուխտատեղացություն, երդում . 93
16. Հանդերձյալ կյանք 95
VI. Տոներ 96—99
VII. Լեզու եվ գիր 100—101
VIII. Ժամանց 101—102
IX. Ժողովրդական բանահյուսություն 102—105
X. Արվեստ 105—106

Պատ. խմբագիր՝ Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

Ст. ЛИСИЦЯН
ЭТНОГРАФИЧЕСКИЙ
ВОПРОСНИК
(на армянском языке)
Изд. АН Арм ССР г. Ереван. 1946 г.

Տպագրված է տպագրության 29/VI 1946 թ. Վ/Ե 10667, տիրաժ 1.500 պատ. 252, հրատ. № 310, տպագրական 6³/₄ մամուլ, 1 մամուլում 38.000 տպ. նիշ

ՀՍՍՌ ԳԱ տպարան Երևան, Աբովյան 104.